Անա Կուպրավա-Գոգոլաձե, Գիորգի Ավթանդիլաշվիլի

# ՄԵՐ ՎՐԱՍՏԱՆԸ

## VI դասարան

## ՈՒՍՈՒՑՉԻ ԳԻՐՔ

Երաշխավորվել է Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից 2018 թվականին:

«Կլիո» հրատարակչություն

Անա Կուպրավա-Գոգոլաձե, Գիորգի Ավթանդիլաշվիլի

**ՄԵՐ ՎՐԱՍՏԱՆԸ**
VI ԴԱՍԱՐԱՆ
Ուսուցչի գիրք

**Դասագրքերի շարքի խմբագիր՝** Էլենե Մեձմարիաշվիլի

© «Կլիո» հրատարակչություն, 2018
© Էլենե Մեձմարիաշվիլի, Անա Կուպրավա-Գոգոլաձե, Գիորգի Ավթանդիլաշվիլի, 2018

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ISBN 978-9941-415-09-8

ՍՊԸ «Կլիո» հրատարակչություն
Աղմաշենեբելիի պողոտա #182-2
Թբիլիսի, 0112
Հեռ.՝ (+995 32) 234 04 30
E-mail: book@klio.ge
www.klio.ge

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Դասագրքերի շարքի հայեցակարգը..........................................4

2. Դասագրքի կառուցվածքը .......................................................5

3. Մեթոդական երաշխավորություններ........................................7

4. Դասի պլանավորում ..................................................................12

5. V-VI դասարանների չափորոշիչ ...............................................17

6. Բովանդակության համապատասխանությունն Ազգային ուսումնական պլանին...............................................21

7. Գնահատում ...............................................................................23

8. Ժամային բաշխում ....................................................................24

9. Գնահատման աղյուսակներ՝ խորագրեր ..................................26

10. Դասի սցենարներ և լրացուցիչ տեղեկություններ ....................33

11. Ամփոփիչ առաջադրանք. «Ինչ գիտեմ և ինչ եմ կարող» .......72

12. Լրացուցիչ գործիքներ .............................................................83

13. Թեստային առաջադրանքների նմուշներ ................................85

14. Ռեսուրսներ ..............................................................................87

# 1. ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՇԱՐՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

**Ներածություն**

«Մեր Վրաստանը» դասագիրքը նախատեսում է V-VI դասարաններում, Հասարակական գիտությունների չափորոշչով նախատեսված նույնանուն առարկայի շրջանակներում, Վրաստանի երկրամասերի աշխարհագրության, պատմության, ազգագրական առանձնահատկությունների և ժամանակակից վիճակի ինտեգրված ուսումնասիրություն:

Աշակերտի գրքի հիմնական նպատակն է ուսանում-ուսուցման գործընթացում սեփական երկրի անցյալի և ներկայի նկատմամբ աշակերտի հետաքրքրասիրության բորբոքումը, տեղեկատվական գործառույթ կատարելը, այսինքն՝ Վրաստանի երկրամասերի աշխարհագրության, պատմության, ազգագրական առանձնահատկությունների և ժամանակակից վիճակի մասին աշակերտին ապահովելը վերամշակված, կանոնավոր, նորագույն գիտական ձեռքբերումների ու հետազոտությունների վրա հիմնված գիտելիքով: Դասագիրքը միջառարկայական է, այն երկրամասի աշխարհագրությունը կկապվի պատմության, մշակույթի և ազգագրության հետ: Աշակերտի մեջ կառաջացնի հասարակական խնդիրների լուծման մեջ սեփական ներդրումը կատարելու մոտիվացիա, դրա օգնությամբ աշակերտը կձևավորվի՝ որպես հայրենիքը սիրող, բարձր հասարակական գիտակցություն ունեցող քաղաքացի:

**Նպատակները**

«Մեր Վրաստանը» դասագիրքը նպատակ է նախանշում աշակերտին.

- Ցույց տալ և ծանոթացնել սեփական երկիրը տարբեր կողմերից:
- Հետաքրքրել երկրի անցյալով և ներկայով:
- Գիտակցել տալ, որ Վրաստանի բազմազանությունը նրա հարստությունն է:
- Նրա մոտ ձևավորել հոգատար վերաբերմունք իր երկրամասի և, ընդհանրապես, երկրի նկատմամբ:
- Օգնել իրեն հասարակության և պետության անդամ ընկալելու, քաղաքացիական գիտակցության զարգացման մեջ:
- Զարգացնել քաղաքացիական հասարակության մեջ ապրելու համար անհրաժեշտ հմտություններ ու կարողություններ:
- Զարգացնել կյանքի և առողջության համար վտանգավոր իրավիճակի գնահատման և պատշաճ կերպով գործելու ունակություն:
- Ձևավորել հասարակական գիտություններ սովորելու համար հիմնական հմտություններ ու կարողություններ:
- Ձևավորել աղբյուրների, քարտեզների, նկարների, նկարազարդումների, աղյուսակների և դիագրամների վրա աշխատելու հմտություններ ու կարողություններ:
- Կատարել դաստիարակչական գործառույթ կամ իրացնել Վրաստանի երկրամասերի աշխարհագրության, պատմության, ազգագրական առանձնահատկությունների և ժամանակակից վիճակի ուսուցման կրթադաստիարակչական խնդիրներ:
- Նպաստել ուսուցման և ուսանման գործընթացում ուսուցչի արհեստավարժության լիարժեքացմանը:
- Զարգացնել այնպիսի հիմնական հմտություններ ու կարողություններ, ինչպիսիք են մտածողական գործառնությունների տիրապետումը, հաղորդակցումը, հետազոտությունը, կենսական հմտություններն ու կարողությունները, ստեղծագործական մտածողությունը, ինքնատիրապետումը:

Դասագիրքն ունի հետևյալ հիմնական գործառույթները.

**1. Ուսումնական գործընթացին առնչվող գործառույթ**

- գիտելիքների փոխանցում,
- հմտությունների ու կարողությունների ձևավորում և զարգացում,
- գիտելիքների ամրապնդում,
- գիտելիքների գնահատում:

**2. Առօրյա և մասնագիտական կյանքի հետ կապված գործառույթ**

- ձեռք բերված գիտելիքների՝ կյանքում օգտագործման և ինտեգրման,
- ռեֆերենցիայի (կարող է օգտագործվել՝ որպես տեղեկատու),
- սոցիալ-մշակութային դաստիարակության:

**3. Գործառույթ, որը նախատեսված է ուսուցչի համար**

- գիտական և ընդհանուր տեղեկատվության տրամադրում,
- որակավորման բարձրացում,
- ուսումնական գործընթացում և դասերի անցկացման ժամանակ օգնելու գործառույթ:

# 2. ԴԱՍԱԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

VI դասարանի «Մեր Վրաստանը» դասագիրքը բաղկացած է ներածությունից, ութ բաժիններից և 59 գլուխներից: Յուրաքանչյուր բաժին ունի ամփոփիչ դաս՝ «Ինչ գիտեմ և ինչ եմ կարող», ինչը հաշվարկված է մեկ կամ երկու դասի: Մեկ գլուխը համապատասխանում է մեկ դասի, այսինքն՝ դպրոցական դասագրքում մեկ գլխում տրված նյութը հատկացված է «Մեր Վրաստանի» մեկ դասի համար, բացառությամբ վեց գլուխների, որոնք երկու դաս են ներառում: Այսպիսով, դասագրքում ներկայացված նյութը, բացառությամբ վեց դասի, նախատեսված է 68 դասի համար: «Ինչ գիտեմ և ինչ եմ կարող» ամփոփիչ դասերը ամբողջությամբ ենթադրում են ուսուցման ինտերակտիվ մեթոդի կիրառում:

Ըստ ուսումնական ծրագրի, տվյալ առարկային տրամադրվում է շաբաթական երեք ժամ, տարվա ընթացքում՝ հարյուր հինգ ժամ: Այս 105 ժամերից մնացած ժամերը պահուստային ժամանակն է, որն ուսուցիչը կարող է օգտագործել ներածական, ընդհանրացման և ամփոփիչ ընդհանրացման դասի, դպրոցական դասախոսության, սեմինարի, գործնական պարապմունքի, էքսկուրսիաների, թատերական ներկայացումների և այլնի անցկացման համար:

Յուրաքանչյուր գլուխ բաղկացած է երեք մասից. 1. հանգուցային հարց, 2. տեքստ, 3. աշխատանքային մաս, հարցեր և առաջադրանքներ:

**1. Հանգուցային հարց** - Այստեղ տրված է գլխավոր հարցը, որը նպաստում է աշակերտի ուշադրության կենտրոնացմանը և նրան՝ տվյալ գլխում տրված խնդրով և հարցով հետաքրքրելուն:

**2. Տեքստ -** Տեքստի նպատակն է պատասխանել «հանգուցային հարցին»: Տեքստի հիմնական բաղադրիչներն են՝ ա) հեղինակի տեքստը, բ) աղբյուրները (դրանց կից տրված հարցերը և վարժությունները), գ) դիդակտիկ նյութերը՝ նկարազարդումներ, քարտեզներ, աղյուսակներ, սխեմաներ, դիագրամներ (դրանց կից տրված հարցեր, վարժություններ) և այլն:

Աղբյուրները կարող են խմբավորվել հետևյալ կերպ. 1. Թեմատիկորեն խորացված մաս: Այստեղ առաջին պլան են մղված հեղինակի տեքստում համառոտ ներկայացված հարցերը: 2. Հակադրության մաս: Այստեղ այնպիսի հարցեր և իրադարձություններ են, որոնց ուշադրություն չի դարձված հեղինակի տեքստում: 3. Կենսագրական և սոցիալական-կենսագրական: Դրանց նպատակն է աշակերտի ուշադրությունն ուղղել անձին այնպես, որ առաջին պլան չմղվի պատմության անհատականացման սկզբունքը, և հասնել հետևյալ նպատակին. հետաքրքրություն պատմության, աշխարհագրության նկատմամբ, հետաքրքրություն անհատի, մարդու առօրյա կյանքի նկատմամբ:

Աղբյուրները, լուսանկարները, նկարները, քարտեզները, աղյուսակները և այլն գալիս են «կրկնապատկելու» հեղինակի տեքստում տրված տեղեկատվությունը և նպաստում են տեքստն ավելի լավ հասկանալուն: Վերոնշյալ վիզուալ նյութի միջոցով կարելի է կրկնել տեքստը տեսողական «թարգմանությամբ» և տեքստում առաջ քաշված հարցերը լրացնել ու ավելացնել բոլորովին այլ՝ տեսողական ձևով:

Դասագրքում տրված աղբյուրներն ու վիզուալ նյութը, որոնք տրվում են աղբյուրի տեսքով, պետք է քննարկենք՝ որպես ինքնուրույն աշխատանքային մաս, որի «լուծումը», «ընթերցումը» և կիրառումը ուսուցիչը պետք է սովորեցնի աշակերտին: Անմիջական առաջարկություններն ու խորհուրդները դասագրքի աղբյուրների և դիդակտիկ նյութերի վրա աշխատելու համար տրված են Ուսուցչի գրքում:

Դասի բաղադրիչ մասն է «Իմացի՛ր ավելին» խորագիրը, որի նպատակն է դասի թեմայի խորացումը: Այն առանձնացված է հիմնական տեքստից և չորս տեսակ է՝ հետաքրքիր տեղեկություններ, պատմության էջեր, անհատը պատմության մեջ, առասպելներ ու լեգենդներ, դրանք իրարից տարբերվում են տարբերանշանի գույնով: Դրան կցված են նաև հարցեր ու հանձնարարություններ, որոնք հիմնական տեքստի մաս են կազմում:

Դասին կցված է բառարան, որում բացատրվում է տեքստում բերված օտար բառը:

Յուրաքանչյուր բաժնի վերջում կա ամփոփիչ դաս՝ «Ինչ գիտեմ և ինչ եմ կարող», որի հանձնարարություններն ամփոփում և խորացնում են ոչ միայն տվյալ բաժնի դասերից ստացած տեսական գիտելիքները, այլև՝ աշակերտի գործնական հմտություններն ու կարողությունները: Ամփոփիչ դասի վերնագիրը նույնպես այդ է ընդգծում:

Տեքստի բովանդակության ընտրությունը և կառուցումը սահմանող չափանիշները **առաջատար թեմաներն** էին: Առաջատար թեմաների մեջ ենթադրվում են այն կարգերը, որոնք դուրս են ժամանակի և տարածության շրջանակներից և ներառում են աշխարհագրության, պատմության, ազգագրության և քաղաքացիական կրթության հիմնական միտումները և գործընթացները: Ճիշտ այդ առաջատար թեմաների միջոցով է դրվում հարցը և հիմնախնդիրը: Դրանք են այն որոշակի հենարանը, հիմքը, որի վրա կառուցվում է տեքստը:

Այսպիսի առաջատար թեմաներ են՝ **Վրաստանի երկրամասերը. Կախեթի, Քարթլի, Արևելյան Վրաստանի լեռնաշխարհի, Սամեգրելո, Աջարիա, Իմերեթի, Գուրիա, Սվանեթի, Ռաճա-Լեչխումի, Աբխազիա, Սամցխե-Ջավախեթի, ինչպես նաև Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսին և պետությունը՝ մեր Վրաստանը:**

Վեցերորդ դասարանի դասագրքում ներառված է վեց երկրամաս՝ Քարթլի, Արևելյան Վրաստանի լեռնաշխարհ, Սամցխե-Ջավախեթի, Գուրիա, Ռաճա-Լեչխումի, Աբխազիա, Իմերեթի, Սամեգրելո, Սվանեթի և Աջարիա, ինչպես նաև Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսին և պետությունը՝ մեր Վրաստանը: Երկու դասարանների դասագրքերի յուրաքանչյուր մաս սկսվում է Վրաստանի ֆիզիկական քարտեզով և Վրաստանի պատմա-ազգագրական երկրամասերի քարտեզով:

Առաջատար թեմաները նպաստում են հետազոտական հարցերի և ոլորտների առանձնացմանը և միևնույն ժամանակ, ստեղծում շրջանակ, որը վերահսկում է և սահմանափակում նյութի առատությունը: Առաջատար թեմաները առարկաների ինտեգրման լավագույն հնարավորություն են տալիս:

Տեքստի լեզուն պարզ է, ոճը՝ պատմողական-նկարագրական, այն չի ծանրաբեռնված օտար բառերով:

**3. Աշխատանքային մաս.** Հարցեր և առաջադրանքներ: Դասագրքի այս մասի նպատակն է խորացնել տվյալ գլուխն ուսումնասիրելու արդյունքում ձեռք բերված գիտելիքները, հմտություններն ու կարողությունները: Դրանք միտված են ակտիվ ուսումնական գործընթացին և պահանջում են աշխատանքի բազմազանություն: Օրինակ, վարժությունները հետևյալ տիպի են՝ տվյալների հավաքագրում, կազմակերպում, վերլուծում և մեկնաբանում: Քարտեզների, աղյուսակների և դիագրամների կազմում, ընթերցում և տեղեկությունների օգտագործում, կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ, լուսանկարների և նկարազարդումների «ընթերցում» և դրանցից տեղեկությունների դուրսբերում, հարցազրույցի անցկացում, փոքր չափի աշխատություն գրել, քննարկման և երկխոսության վարում, աշխատանք տարբեր տեսակի այսպես կոչված «հենդաութների վրա», խաղ՝ դերերի բաշխմամբ (բեմականացում), նկարել, գծել և այլն:

Աշխատանքային մասը նախատեսված է խմբային և անհատական աշխատանքի համար:

Շատ կարևոր է դասագրքի տեքստի և աշխատանքային մասի համապատասխանությունը իրար: Աշխատանքային մասում հիմնականում չկա հարց, որի պատասխանը տեքստում չգտնվի: Աշխատանքային մասում կան նաև այնպիսի հարցեր, որոնց աշակերտը պետք է պատասխանի՝ հիմնվելով իր գիտելիքների վրա: Կան նաև նկարագրական բնույթի հարցեր, որոշ հարցեր հաշվարկված են աշակերտի երևակայության վրա:

Աշխատանքային մասը նպաստում է հմտությունների ու կարողությունների ձևավորմանը և զարգացմանը:

Մեծ նշանակություն ունի համամասնության պահպանումը: Ձեռնարկում կա համաչափություն. ա) տեղեկատվության, վարժությունների և գործնական առաջադրանքների միջև, բ) տեղեկատվության և հմտությունների ու կարողությունների միջև:

**3. Ուսումնական նյութի թեմատիկ բաշխումը, դասագրքի համապատասխանությունը Ազգային ուսումնական պլանին:**

Դասագրքի բովանդակությունը մշակվել է՝ հիմնվելով ուսումնական ծրագրի վրա և նախատեսելով նոր պետական-առարկայական չափորոշչի պահանջները: Գլուխների վերնագրերը պատասխանում են ծրագրում ներառած ուսումնական թեմաներին: Առարկաների ինտեգրման նպատակով՝ դասագիրքը ներառում է տարբեր առարկաները կապող թեմաներ:

Դասագրքի բոլոր հիմնական բաղադրիչները նպաստում են նյութի յուրացմանը և հետաքրքիր, տարբեր տեսակի դասերի անցկացմանը: Ուստի, ուսուցիչը պետք է փորձի դրանք ինտեգրել աշխատանքային գործընթացում `դասի ժամանակ: Ցանկալի է, որ ուսուցիչը մշակի և դասի ժամանակ օգտագործի դասագրքի բոլոր բաղադրիչները: Դրանում ուսուցչին կօգնի Ուսուցչի գիրքը: Դասագրքի բոլոր բաղադրիչները միտված են աշակերտին և նախատեսում են աշակերտի տարիքային-հոգեբանական առանձնահատկությունները:

Ուսուցչի գրքի նպատակն է.

1. օգնել ուսուցչին յուրաքանչյուր դասը պատրաստելու և անցկացնելու մեջ,
2. լրացուցիչ տեղեկություններ տրամադրել,
3. նպաստել ուսուցիչների որակավորման բարձրացմանը,
4. ուսումնական նյութերի ներկայացման փուլերը բացատրել-պարզաբանել:

Ինչպե՞ս պետք է պատրաստվի ուսուցիչը դասի համար:

Յուրաքանչյուր դասի համար ուսուցիչը պետք է մանրակրկտորեն պատրաստվի, մասնավորապես `

- պլանավորի դասը, կազմի դրա սցենարը,
- սահմանի, թե ինչ կրթական ռեսուրսներ են անհրաժեշտ այս դասի համար,
- ժամանակի մեջ ինչպես կբաշխի յուրաքանչյուր ուսումնական գործունեություն (այսուհետ՝ ակտիվություն):

# 3. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Ուսանում/ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառում

Ժամանակակից համաշխարհային կրթական քաղաքականության հիմնական ուղղությունը աշակերտակենտրոն կրթությունն է: Հետևաբար, ցանկալի է, որ դասավանդման մեթոդը ևս աշակերտակենտրոն, այսինքն՝ինտերակտիվ լինի: Ինտերակտիվ մեթոդիկան կենտրոնացած է աշակերտին, որը հանդիսանում է ուսուցման գործընթացի կենտրոնական դեմքը և ակտիվորեն մասնակցում է բոլոր ուսումնական գործողություններին՝ ձեռք բերում և օգտագործում իր համար նոր գիտելիքները:

Մեր կողմից առաջարկվող նմուշային դասերը հիմնականում կառուցված են ակտիվ և ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ: Ստորև ուսուցիչներին առաջարկում ենք մեթոդների մանրամասն նկարագրությունը, որպեսզի ավելի արդյունավետ կարողանան կիրառել դրանք:

### I. «ՄՏԱՎՈՐ ԳՐՈՀ»

«Մտավոր գրոհը» ինտերակտիվ մեթոդներից մեկն է: Նրա նպատակը հիմնախնդրի վճռումն է ամբողջ դասարանի մասնակցությամբ, գաղափարների ազատ արտահայտման միջոցով:

Մտավոր գրոհը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը: Աշակերտները սովորում են ունկնդրել ուրիշներին: Մտավոր գրոհը կարող է անցկացվել ինքնուրույն կամ հանդիսանալ այլ վարժության մաս: Ուսուցիչը նախօրոք ընտրում է հիմնախնդիրը և հարցի ձևով հստակ ձևավորում այն: Սրանից հետո սկսվում է մտավոր գրոհի առաջին փուլը, որը կոչվում է գաղափարների գեներացիայի (կուտակման) փուլ: Այս ժամանակ պետք է պահպանվեն հետևյալ կանոնները.

1. Մասնակիցների կողմից տեսակետների արտահայտման ժամանակ թույլ չի տրվում տեսակետները քննադատել, վիճել կամ գնահատել:
2. Մասնակիցները գաղափարներ են արտահայտում կամավոր և ոչ թե՝ ըստ ուսուցչի ցանկության:
3. Յուրաքանչյուր աշակերտ կարող է արտահայտել մեկ կամ մի քանի տեսակետ, որը կարող է լինել ինչպես օրիգինալ, այնպես էլ ուրիշի գաղափարի կրկնություն:
4. Բոլոր գաղափարները պետք է արձանագրվեն (գրվեն) գրատախտակի վրա (նույնիսկ ամենից ոչ ընդունելին):
5. Երբ գաղափարների արտահայտման հաճախականությունը նվազում է, ուսուցիչն աշակերտներին մեկ անգամ ևս մտածելու հնարավորություն է տալիս:
6. Ժամանակը կարող է նախօրոք սահմանվել, կամ ուսուցիչը կարող է դադարեցնել գաղափարների հավաքման գործընթացն՝ ըստ անհրաժեշտության:

Երկրորդ կամ գաղափարների գնահատման փուլում.

1. Վերլուծվում են արտահայտված տեսակետները:
2. Եթե մի քանի տեսակետներ նման են, այդ դեպքում դրանք ընդհանրացվում-միավորվում են:
3. Աշակերտներին խնդրում ենք ընդհանրացված գաղափարներից ընտրել 2-3 գաղափար, որոնք, ըստ նրանց, ավելի արժեքավոր են, դասավորել դրանք՝ ըստ կարևորության (ամենակարևոր գաղափարը գրվում է առաջինը և այլն):
4. Ի վերջո առանձնացվում են ամենանշանակալի գաղափարները, որոնք առաջադրված հիմնախնդիրների վճռման համար շատ կարևոր կլինեն:

Մտավոր գրոհի անցկացումը նպաստում է ոչ միայն ստեղծագործական մտածողության զարգացմանը, այլև ձևավորում է տարբերվող կարծիքի նկատմամբ ներողամիտ վերաբերմունք և հարգանք, զարգացնում է աշակերտների համագործակցության և հաղորդակցության հմտություններն ու կարողությունները:

### II. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Քննարկումը կրթական գործունեության կարևորագույն ձևերից մեկն է, որը խթանում է աշակերտների նախաձեռնությունը, զարգացնում նրանց քննադատական մտածողությունը:

Քննարկման ժամանակ տեղի է ունենում.

– մասնակիցների միջև տեղեկությունների փոխանակում,

– միևնույն հարցի նկատմամբ տարբեր տեսակի մոտեցումների որոնում,
– տարբեր տեսակետների (հաճախ միմյանց բացառող) համագոյակցություն,
– ընդհանուր կարծիքի կամ որոշման կայացման համար խմբային համաձայնության որոնում:

Քննարկման մեթոդով ուսուցումը, ի տարբերություն ավանդական մեթոդով ուսուցման, հնարավորություն է տալիս տեսնել, որ յուրաքանչյուր պնդում պարունակում է բազմաթիվ վիճելի կողմեր, և հնարավոր է եզրակացություն անել բազմաթիվ ուղիներով:

Որպեսզի դասարանում բաց քննարկում ընթանա, անհրաժեշտ է, որ դասարանում փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտ ստեղծվի: Իսկ «անվտանգ» մթնոլորտի ստեղծումը ենթադրում է ուսուցչի կողմից նախօրոք այնպիսի աշխատանքի անցկացում, որի նպատակը քննարկումային վարքի կանոնների և հարաբերությունների նորմերի ձևավորումն է: Այն առանձնապես արդյունավետ է տարրական դասարաններում, երբ ձևավորվում են վարքի չափորոշիչները:

Քննարկման կանոնները սովորելը և այս մեթոդի հաճախակի կիրառումը նպաստում է մի շարք հմտությունների և կարողությունների ձևավորմանը, ինչպիսիք են.
– ուրիշին ակտիվ ունկնդրումը,
– սեփական կարծիքի ձևավորումը և դրա փաստարկումը,
– դատողությունը, քննադատական մտածողությունը և ուրիշի մտքի գնահատումը:

Եվ վերջնականապես ձևավորվում է ուրիշի, թեկուզ՝ տարբերվող կարծիքի նկատմամբ հարգանք և ներողամիտ վերաբերմունք, ինչը պարտադիր է ժողովրդավարական հասարակության քաղաքացու համար:

Որպեսզի քննարկում անցկացնենք, անհրաժեշտ է.
– հարց առաջադրել, հիմնախնդիր ներկայացնել կամ կոնկրետ դեպք նկարագրել,
– պահպանել քննարկման կանոնները,
– խրախուսել, աջակցել աշակերտին:

Մեր դասագրքով անցկացված համարյա բոլոր դասերը նախատեսում են դասարանական քննարկում:

**«Կլոր սեղան»** – Աշակերտների փոքր խումբը (4-5 հոգի) մտքեր է փոխանակում միմյանց և դասարանի հետ:

**«Ֆորում»** – Ամբողջ դասարանը փոխադարձաբար մտքեր և գաղափարներ է փոխանակում՝ հավասար հիմունքներով:

**«Բանավեճեր»** – Կառուցված է մասնակիցների՝ նախօրոք պլանավորված ելույթների վրա: Ներկայացուցիչները պետք է ընտրվեն խմբից: Վեճին հերթով մասնակցում է խմբի մեկական ներկայացուցիչ:

Քննարկումից հետո ուսուցիչը մեկ անգամ ևս կամփոփի և աշակերտների հետ կկրկնի ստացված եզրակացությունները: Լավագույն դեպքում եզրակացություններն իրենք՝ մասնակիցները պետք է արձանագրեն:

**Դասարանական քննարկման կազմակերպումը ծառայում է միաժամանակ մի քանի նպատակի.**
- աշակերտների ակտիվացմանը,
- աշակերտների քննադատական մտածողության ձևավորմանը,
- ուսումնական նյութի յուրացմանը նպաստելուն,
- աշակերտների հաղորդակցության հմտությունների զարգացմանը:

**Քննարկումները կարող են հիմնվել ինչպես անցած, այնպես էլ նոր նյութի վրա:**
- Ցանկալի է, որ կիրառենք շնորհանդեսից հետո, որ առաջարկել է մեզ աշակերտը կամ ուսուցիչը:
- Քննարկումը ճիշտ վարելու համար կարևոր է դասարանում նստարանների դասավորությունը: Ցանկալի է նստարանների շրջանաձև կամ քառակուսի դասավորությունը:

Քննարկում վարելիս պետք է հաշվի առնենք հետևյալը.
- Քննարկումները պետք է կենտրոնացվեն կոնկրետ նպատակի և ոլորտի վրա `ուսուցիչը հստակորեն պետք է բացատրի և գրատախտակի վրա գրի քննարկման նպատակները:
- Պետք է մշակենք քննարկման կանոնները (միմյանց լսելը, ժամանակի բաշխումը, կանոնակարգը):
- Պարբերաբար պետք է արձագանքենք աշակերտների գաղափարներին և արտահայտություններին, դա կօգնի երեխային հասկանալ և ընկալել իր ասածը:
- Հաջող քննարկումների համար կարևոր է, որ աշակերտները հարգեն միմյանց կարծիքը:
- Քննարկման ավարտին անհրաժեշտ է ամփոփում կազմակերպել, վերլուծել, թվարկել հարցերը, որ առաջ քաշվեցին քննարկման ժամանակ, գնահատել գործընթացը՝ ինչ արվեց և ինչպես

արվեց: Կարևոր է նշել, թե ինչը պետք է շտկվի հետագայի համար:

Քննարկումը նպաստում է աշակերտների մեջ դատողության, քննադատական մտածողության և խնդրի լուծման կարողության զարգացմանը: Մարզում է աշակերտներին մտքերը բանավոր, հստակ արտահայտման և եզրակացություններ անելու, վիճելի հարցերը լուծելու և այլընտրանքային լուծումներ գտնելու մեջ: Քննարկման ժամանակ աշակերտներից պահանջվում է փաստարկված դատողություն, որոշումների ընդունում, քննարկման կանոնների պահպանում: Քննարկման հիմնական նպատակն է նպաստել խմբի՝ քննարկվելիք հարցի վերաբերյալ գիտելիքի դրսևորմանը և խնդրի լուծման համար այդ գիտելիքի կիրառմանը: Քննարկումն առաջացնում է անսահմանափակ քանակությամբ պատասխաններ և չի պահանջում բացառիկ եզրակացություն: Երբ տրված հարցին հաջորդում է մյուս հարցը, և աշակերտը մտքում պտտում է իր համար հետաքրքիր թեման և փորձում է պատասխաններ գտնել, հետաքրքրասիրությունը ձևավորվում է՝ որպես դրական մտավոր ուժ: Դիտարկման արդյունքում հայտնաբերվում են այն թերությունները, որոնք ուղեկցում են այս մեթոդի կիրառմանը: Մասնավորապես, դժվարանում են պահպանել կանոնները, ջանասիրությամբ լսել բոլոր տեսակետները, ինչն աղմուկ է առաջացնում, և բոլոր աշակերտներին չի տրվում հնարավորություն ակտիվորեն ներգրավվել դասի գործընթացի մեջ:

### III. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ-ԴԵՐԵՐՈՎ ԽԱՂ

Խաղը մարդու և հատկապես՝ երեխայի վարքագծի առաջատար ձևերից մեկն է: Ուսուցանելու նպատակով խաղը հնարավոր իրականության խմբային հետազոտման միջոց է, և այս ճանապարհով՝ սոցիալական փորձի կուտակման միջոց:

Գերմանացի հոգեբան Բյուլերը համարում էր, որ խաղը գործունեություն է, որի իրականացման հիմքում դրված է ֆունկցիոնալ հաճույք ստանալը: Բոլոր վերոասացյալներից կարելի է սահմանել, որ խաղը հնարավոր իրականության խմբային կամ երկխոսությամբ հետազոտման մեթոդ է: Խաղային գործունեության հիմքում իրականում դրված են տարբեր տեսակի հաճույքները, մասնավորապես.

1. Գործընկերների հետ ուղղակի շփման հաճույքը:
2. Խաղային իրավիճակների արդյունքները արագությամբ հստակեցնելու հաճույքը:
3. Մրցույթից ստացած հաճույքը:
4. Սեփական անձի և հնարավորությունների բացահայտումից ստացած հաճույքը:
5. Դերի մեջ մտնելու հաճույքը և այլն:

Իրավիճակային խաղ – Սա դասի ժամանակ խաղարկված փոքր բեմականացում է, ներկայացում, որի նպատակն է երեխայի համար անծանոթ և անսովոր իրադարձությունների կենդանացումը՝ դրանց խաղարկման միջոցով:

Ուսուցիչն ընտրում է դասի ժամանակ քննարկվելիք (ուսումնասիրվելիք) թեման և կազմում սյուժեն: Այնուհետև երեխաների հետ բաշխում է դերերը և դատողություն անում այն մասին, թե ինչպես իրականացվի մանկական ներկայացումը: Ներկայացման ընթացքում ուսուցիչը կարող է ընտրել երեխաների և նրանց հարցեր տալ (օրինակ, ներկայացման բարելավման նպատակով): Խաղն ավարտելուց հետո ամբողջ դասարանը վերլուծում է այն:

Այս մեթոդը երեխային հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ իրեն ծանոթ իրադարձությունները, համարձակ արտահայտել իր զգացմունքներն ու մտքերը, իրեն զգալ խմբի անդամ, համագործակցել ուրիշ երեխաների հետ (այսինքն՝ մասնակցել) և այլն: Միևնույն ժամանակ, խաղով հասնում են երեխայի սոցիալականացման (հասարակության մեջ առկա փորձի յուրացում և ստացում):

1. Սիմուլյացիայի և դերերով խաղերի օգտագործումը խրախուսում է ուսումնառության գործընթացը և այն ավելի հետաքրքիր դարձնում աշակերտի համար:
2. Սիմուլյացիան նշանակում է արհեստական իրավիճակի ստեղծում, որը նման է իրականությանը:
3. Սիմուլյացիան նրա մոդելավորումն է, ինչը գոյություն ունի կամ կարող է գոյություն ունենալ: Մի խոսքով, սիմուլյացիան իրականության խաղարկումն է:
4. Սիմուլյացիան կարող է խաղարկվել մարդկանց մասնակցությամբ և համակարգչի միջոցով:
5. Մարդկանց մասնակցությամբ սիմուլյացիան կոչվում է դերերով խաղ:
6. Ցանկալի է այս ռազմավարությունն օգտագործել բարդ թեման մշակելիս:
7. Ի տարբերություն խաղի, սիմուլյացիային հաղթող պետք չէ:
8. Դերախաղը բաղկացած է երեք հիմնական մասերից ՝ իրավիճակ, դերային խաղ, դասարանական

քննարկում:

Դերերով խաղերը նպաստում են.

- Հարցի մեջ խորը թափանցմանը, նրա յուրացմանը հուզական մակարդակով (դերային խաղով աշակերտը դառնում է այլ անհատ, ավելի լավ է թափանցում այն մարդու բնավորության և մոտիվացիայի մեջ, ում դերը մարմնավորում է):
- Հարցի երկար ժամանակով մտապահմանը, տեղեկությունների գնահատմանը և կազմակերպմանը, ուսումնական գործընթացի մեջ առավելագույն ներգրավմանը և մոտիվացիայի բարձրացմանը, աշակերտի հաղորդակցման մակարդակի բարձրացմանը, վերլուծաբանական և քննադատական մտածողության զարգացմանը, ապրումակցման զարգացմանը:

**10.** Սիմուլյացիայի կազմակերպման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը.

- խրախուսի աշակերտներին, իմպրովիզացիայի համար աշակերտներին նախապատրաստել տա սցենարների կամ գործողությունների պարզ ուրվագիծ, բաշխի դերերը, ձևակերպի բեմականացման էությունը և ըստ հնարավորինս ձևակերպի նպատակը (ցանկալի է գրավոր), աշակերտներին պատրաստել տա պարզ դեկորացիաներ, ինքնագործ ռեսուրսներ, պարզ հագուստ:

**11.** Բացի դրական արդյունքներից, պետք է նկատի ունենալ մի շարք դժվարություններ, որ ծագում են դերային խաղերի կազմակերպման դեպքում.

- Դերերով խաղերը պահանջում են աշակերտի կողմից լավ զարգացած երևակայության կարողություն:
- Դերերով խաղերի ժամանակ ուսուցչի և աշակերտի միջև հնարավոր է ձևավորվի չափազանց ոչ ֆորմալ վերաբերմունք, որը հետագայում կխանգարի դասի կառավարման գործընթացին:

**12.** Դերերով խաղերն ավարտելու հաջորդ փուլում ցանկալի է քննարկել կատարված աշխատանքը և գնահատել այն: Դրա համար նպատակահարմար է կիրառել դասարանական քննարկումը:

***Քննարկումն*** ինտերակտիվ ուսուցման ամենատարածված մեթոդներից մեկն է: Դասարանական քննարկման կիրառումն ավելացնում է աշակերտների ներգրավվածությունն ուսումնական գործընթացում, նպաստում է նրանց սոցիալական և միջանձնային հմտությունների զարգացմանը:

Համագործակցային ուսուցման մեթոդներից կիրառվում է այսպես կոչված Ջիգսոու մեթոդը: Այս մեթոդը հատկապես արդյունավետ է մեծ ծավալով թեմաներ ուսումնասիրելիս: Բոլոր տարիքային խմբերում այս մեթոդը հաջողությամբ է աշխատում: Աշակերտները կարող են առանձին թեմաներ մշակել հիմնական խմբերի ներսում, փորձագետների խմբում տեղի է ունենում թեմայի մասերի խորացում, թեմայի մասերը կրկին փոխանցվում են հիմնական խմբերին և ստուգվում են յուրաքանչյուր աշակերտի անհատական գիտելիքները: Այս մեթոդի կիրառմամբ հստակ է դառնում, որ աշակերտների մոտ զարգանում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային պատասխանատվության զգացումը, ինչպես նաև հաղորդակցման հմտությունները: Միևնույն ժամանակ, դիտարկման արդյունքում հստակ է դառնում, որ համեմատաբար թույլ աշակերտները դժվարանում են թեմայի մասն ինքնուրույն մշակել, և սա հնարավոր է որոշ չափով խոչընդոտող հանգամանք դարձավ նրանց համար, որ գնահատեին անհատական ձեռքբերումը, և մեթոդի կիրառմանը երկար ժամանակ է անհրաժեշտ:

***Շնորհանդեսը,*** այսինքն՝ կատարած աշխատանքը ներկայացնելը, ուսումնական գործընթացի անբաժանելի մասն է դարձել: Ելնելով առարկայական չափորոշիչների պահանջից՝ աշակերտները դասարանի առջև միշտ պետք է հանդես գան կարճաժամկետ կամ երկարաժամկետ հետազոտության արդյունքներով, ինչը միայն մեկ առարկայի շրջանակներում չի կատարվում: Շնորհանդեսի ունակությունը նախապայման է ոչ միայն դպրոցում բարձր գնահատում ստանալու, այլ նաև՝ սեփական հնարավորությունները ցուցադրելու համար: Այս մեթոդը հետաքրքիր, զվարճալի և պահանջված է հատկապես տարրական և հիմնական մակարդակի աշակերտների համար, բայց պարզ է դառնում, որ աշակերտները դժվարանում են ոչ բառային հաղորդակցման տարրերը նախատեսել, ժամանակի սահմանաչափը պահպանել, թեմայի համար հետաքրքիր նյութեր օգտագործել:

Մինի դասախոսությունը հաճախակի օգտագործված մեթոդ է: Սա հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում աշակերտներին փոխանցել անհրաժեշտ տեղեկատվությունը: Սակայն այս մեթոդը աշակերտներին առավելապես գիտելիքներ է տալիս (ինչը կարևոր է) և ավելի քիչ է տալիս հմտությունները զարգացնելու հնարավորություն: Այս ժամանակ դժվար է պահպանել լսարանի ուշադրությունը, և դասախոսության գործընթացում դժվար է գնահատելը:

Վերոնշյալ մեթոդները նպաստում են ընդհանուր ունակությունների զարգացմանը, մասնավորապես՝ տեղեկատվության ձեռքբերմանը և կազմակերպմանը, ստեղծագործական մտածողությանը, հաղորդակցությանը, հետազոտությանը, սովորելուն, համագործակցությանը: Սակայն Ազգային ուսումնական նպատակներից ելնելով՝ անհրաժեշտ է նաև հատուկ հմտություններ զարգացնել, ինչին նպաստում են քննարկումներն ու բանավեճերը:

**Բանավեճը** լավագույն միջոցներից է, որը կարող է խթանել, ավելի ստեղծագործական դարձնել ուսումնառության գործընթացը: Այն նպաստում է քննադատական մտածողության և աշխատանքի ներկայացման չափազանց կարևոր հմտությունների բարելավմանը և զարգացմանը: Կարող ենք թվարկել նաև ճանաչողական հմտությունները, որ աշակերտները զարգացնում են բանավեճի միջոցով. վերացական մտածողություն, քաղաքացիության զգացում, էթիկետի գիտակցում և պահպանում, ինքնակազմակերպում, հավատը սեփական անձի նկատմամբ, հրապարակային խոսքի մշակույթ, հետազոտություն, թիմային աշխատանք: Եվ սա ամբողջական ցուցակը չէ: Կարծում ենք, բանավեճը կարող է օգտագործվել պատմության ուսուցչի կողմից, քանի որ պատմության դասերի համար դրանք հատուկ նշանակություն ունեն: Վերոնշյալ հմտությունների ու կարողությունների զարգացման հետ մեկտեղ, բանավեճը պատմությունը հասկանալու լավագույն ուղիներից մեկն է: Այն պատմության ուսուցչին օգնում է հասնել առարկայի չափորոշչով նախատեսված նպատակներին, բարձրացնում է աշակերտի մոտիվացիան, ավելի հետաքրքիր է դարձնում ուսումնական գործընթացը: Բանավեճը համահունչ է պատմության ուսուցման ժամանակակից մոտեցմանը, որը կենտրոնացած է ոչ թե փաստերի և տարեթվերի մտապահմանը, այլ պատմական գործընթացների վերլուծմանն ու գնահատմանը, պատմական անձանց և իրադարձությունները տարբեր տեսանկյուններից տեսնելուն:

**Բանավեճերի** կազմակերպման նախնական փուլում ցանկալի է նրանց մասնակցելու իրավունքի ղեկը լինի առավել ակտիվ աշակերտների ձեռքին: Դրա համար կօգտագործենք «երեք քարտի» ռազմավարությունը: Ըստ այդ ռազմավարության՝ ուսուցիչը բանավեճի մեկնարկից առաջ յուրաքանչյուր աշակերտի երեքական քարտ է տալիս, որոնցում գրված են «հարց կամ մեկնաբանություն» բառերը: Եթե աշակերտն ունի բանավեճին ներգրավվելու ցանկություն, կբարձրացնի քարտը, իսկ այն բանից հետո, երբ կբարձրացնի քարտը կամ կանի մեկնաբանություն, քարտը կողքի կդնի և կշրջի: Նա երեք անգամ կունենա քննարկմանը ներգրավվելու հնարավորություն: Այսպիսով, այս ռազմավարությունը աշակերտին կհարկադրի լավ մտածել, ապա նոր ներգրավվել քննարկման մեջ: Սա հատկապես վերաբերում է ակտիվ աշակերտներին: Նրանք կփորձեն հասկանալ՝ արժե՞ քարտը «կորցնել» այն մեկնաբանության գնով, որը մտադիր են կատարել, թե՞ այն պահեն ավելի կարևոր և արժեքավոր մեկնաբանության համար: Բոլոր երեք քարտերը օգտագործելուց հետո աշակերտը քննարկումներից դուրս է մնում, մինչև բոլոր մասնակիցներն օգտագործեն իրենց քարտերը:

Մեր կողմից քննարկված մեթոդները միանշանակ օգտակար են և զարգացնում են ինչպես ընդհանուր, այնպես էլ կոնկրետ հմտություններ ու կարողություններ: Սակայն դիտարկման ընթացքում պարզվել է, որ բանավոր խոսքի հետ կապված այս մեթոդները բոլոր աշակերտներին չեն տալիս դասապրոցեսին ակտիվ ներգրավվելու միանման հնարավորություններ: Կարող է պատահել, որ բոլոր աշակերտները չկարողանան արտահայտել իրենց կարծիքները, ոմանք ձեռնպահ կարող են մնալ, մյուսներին ժամանակը չի բավարարի՝ իրենց կարծիքն այնպես արտահայտելու, ինչպես ցանկանում են: Բացի այդ, բանավոր խոսքի հետ կապված մեթոդները չեն կարող համոզել, որ աշակերտները լրիվությամբ են հասկացել կարդացած տեքստը, խորը թափանցել են հարցի էության մեջ: Հենց այս թերությունները շտկելու հնարավորություն են տալիս գրավոր առաջադրանքները: Գրավոր հանձնարարության ժամանակ աշակերտն աշխատում է անհատապես և հանգիստ վիճակում: Զգտում է հստակորեն արտահայտել, փաստարկներով ամրապնդել իր կարծիքը: Այս պահին նա ստիպված չէ ուրիշներին համոզել իր արտահայտած կարծիքի ճշմարտացիության մեջ, ոչ էլ՝ տարբերվող կարծիքի հետ հաշվի նստել և փոխզիջման գնալ: Փոխարենը աշակերտից պահանջվում է հիմնավոր գիտակցել պատմական համատեքստը:

# 4. ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

**Ինչպե՞ս պլանավորենք դասը:**

Մինչև սկսեք աշխատել դասի պլանավորման վրա, չափորոշչում գտեք այն արդյունքները և ստուգիչները, որոնք ստուգում են տվյալ թեմայի յուրացումը, կոնկրետ դասը (տե՛ս` նպատակների քարտեզը), և ինքներդ ձեզ երկու հարց տվեք.

1. Ինչպե՞ս հասնենք ցանկալի արդյունքին:
2. Ինչպե՞ս հասկանամ` հասե՞լ եմ արդյոք դրան:

Դասն այնպես պետք է պլանավորվի, որ ուսումնական նյութը հիմնականում դասարանում (ուսումնական գործընթացում) յուրացվի, իսկ տնային առաջադրանքները փոքր քանակությամբ պետք է տրվեն աշակերտներին, որպեսզի նրանք կարողանան դպրոցում ստացած գիտելիքն ամրապնդել և կրկնել:

Դասի անցկացման համար մենք առաջարկում ենք կիրառել դասի եռափուլ (երեք հատվածով), այսպես կոչված` ABC մոդել:

Այն բաղկացած է երեք փուլից (A, B և C), և անվանումն էլ հենց այստեղից է բխում:

**A փուլում** տեղի է ունենում աշակերտների խթանում և հետաքրքրությունների արթնացում ուսումնասիրվելիք հարցի նկատմամբ: Աշակերտները մտաբերում են այն, ինչն արդեն գիտեն (կամ իմացել են) այս հարցի վերաբերյալ:

Նույն փուլում պետք է աշակերտները մոտիվացվեն և ակտիվացվեն: Աշակերտների ակտիվացումը նշանակում է, որ նրանք իրենք պետք է մտածեն, ընդգրկվեն բանավեճի մեջ, դատողություն անեն և հարցեր առաջադրեն: Հետազոտությունը և ճանաչողությունը սկսվում է այնտեղ, որտեղ հարցեր են առաջանում: Այդ պատճառով կարևոր է աշակերտների հետաքրքրասիրության խթանումը:

Այս աստիճանում կարևոր է նաև, որ աշակերտները հասկանան, որ պետք է ուսումնասիրեն այս հարցերը և նրանց մոտ ձևավորվի որոշակի սպասում դասի գործընթացի նկատմամբ:

**B փուլը** գիտելիքի կառուցքավորման աստիճանն է: Այս աստիճանում աշակերտը ծանոթանում է նոր տեղեկությունների և գաղափարների: Սա կարող է իրականացվել տեքստի ընթերցմամբ կամ երևույթների անմիջական դիտարկմամբ, փորձի անցկացմամբ կամ պատմածը լսելով: Ինչպես ասում է «կառուցքավորում» բառը, այս փուլում աշակերտը պետք է հայտնագործի գիտելիքը, հայթայթի, կառուցի և ոչ թե պատրաստ գիտելիքը մեխանիկորեն մտապահի: Սա ուսանման այն փուլն է, երբ աշակերտն առավելագույնս ակտիվ է և ինքնուրույն: Այս ժամանակ տեղի է ունենում առաջին փուլում բորբոքված հետաքրքրության պահպանում և առաջ քաշված հարցերի պատասխանների որոնում, նոր տեղեկության գիտակցում, քննադատաբար վերլուծում, արվում են եզրակացություններ:

**C փուլը** գիտակցման և գիտելիքի ամբողջականացման աստիճանն է: Հենց այս փուլում է տեղի ունենում նոր գիտելիքի` հնի հետ կապումը, համադրումը, գիտելիքի ամբողջականացումը, նոր հասկացությունների էության մեջ թափանցումը: Նոր գիտելիքը նոր բան է տալիս մարդուն, այս նորությունը կարող է կապված լինել հմտությունների և կարողությունների կամ բանականության զարգացման, արժեքային համակարգի, տրամադրվածությունների և վերաբերմունքների ձևավորման կամ գործնական գործունեության հետ: Այսպիսի ճանաչողության հետևանքով մարդ երկար ժամանակով է մտապահում այն, ինչը էական է, և կարող է ստացած գիտելիքը կիրառել կյանքում:

Նույն փուլի խնդիրն է նաև աշակերտների միջև մտքերի փոխանակումը և դրա միջոցով բառապաշարի հարստացումը, մտահորիզոնի ընդլայնումը և մտածողության խորացումը (Պիաժեի պնդմամբ, երեխան մտածել է սկսում այն ժամանակ, երբ ընդգրկվում է հասակակիցների հետ բանավեճի մեջ):

Դասի պլանավորման գործընթացում ուսուցիչը ABC մոդելի երեք փուլերն էլ լավ պետք է գիտակցի և պլանավորի: Դրանում նրան կօգնեն մեր կողմից առաջարկված մոդելների և դասի սցենարների նմուշները:

**Նպատակը**

Դասի պլանավորման ժամանակ, նախ՝ պետք է սահմանվի դասի նպատակը, ինչն իր հերթին սահմանում է արդյունքը, կամ ուսուցիչը նախօրոք պետք է սահմանի, թե տվյալ դասին իր աշակերտները ինչի պետք է հասնեն (դասի կոնկրետ և հեռանկարային պլաններ):

Դասի պլանում ակնհայտորեն պետք է երևան.

- դասի կոնկրետ նպատակները,
- դասի հեռանկարային նպատակները,
- ինչ ենք սպասում մասնակիցներից, ինչ գիտելիք և հմտություններ ու կարողություններ կստանան այս դասին:

**Խնդիրները**

Նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է որոշակի խնդիրներ նախանշել.

1. դասին կատարվելիք ակտիվությունների սահմանում,
2. աշխատանքի կատարման փուլերը,
3. ստացած գիտելիքի և հմտությունների ու կարողությունների ցուցադրման ձևը,
4. գնահատման չափանիշները:

**Պարտադիր պայմանները և ռեսուրսները**

Նպատակներին հասնելու համար նախօրոք պետք է սահմանվի, թե արդյոք պատրա՞ստ են աշակերտները պլանավորված ակտիվությունները կատարելուն: Ուսուցիչը նախօրոք պետք է հաշվարկի, թե որքան ժամանակ և ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ նրան պլանի՝ հաջողությամբ իրականացման համար (դասագիրք, տարբեր գիտական և ճանաչողական բնույթի գրականություն, աշխատանքային սխեմաներ, դիդակտիկ նյութեր, նկարներ, դիագրամներ, գծապատկերներ, պատկերազարդումներ և այլն), այսինքն՝պետք է սահմանվեն.

- դասի համար անհրաժեշտ նյութը,
- տեսական և գործնական աշխատանքի իրականացման փուլերը:

**Դասի նկարագիրը**

Ուսուցիչը մանրամասնորեն պետք է նկարագրի դասի ընթացքը, նրա առանձին փուլերը՝ ակտիվությունները, որ կատարվում են տվյալ դասին (թե ինչպես է կարողանում ուսուցիչն իրականացնել դասի նպատակները և հիմնականում ինչն է նրա համար կարևոր այս դասի ընթացքում):

Դասի ընթացքը

Պլանի այս մասը ենթադրում է դասի մանրամասն նկարագրում:

Ցանկալի է, որ ուսուցիչն այնպես նկարագրի դասի ընթացքը, որ գործընկերը, եթե նա կունենա դրա ցանկություն, կարողանա օգտվել առաջադրված դասի մոդելից:

Ցանկալի է պլանի մեջ մանրամասնորեն նկարագրել 3 կարևորագույն փուլերը.

1. Ներածություն՝ մարտահրավեր կամ խթանման փուլ:
2. Գլխավոր ակտիվություն՝ հիմնական մասը, որը ծառայում է բովանդակության իրականացմանը, հարցի էության մեջ թափանցմանը:
3. Եզրափակիչ մաս՝ գիտակցման փուլ, որի ժամանակ պետք է տեղի ունենա դասի ընթացքում քննարկված թեմաների վերլուծություն և համադրություն, համեմատություն և ստացած գիտելիքի ամրապնդում:

Ցանկալի է, որ ուսուցիչը նախօրոք պլանավորի, թե որքան ժամանակ անհրաժեշտ կլինի դասի յուրաքանչյուր փուլին (դասի բաշխում ժամանակի մեջ):

**Քննարկենք յուրաքանչյուր փուլն առանձին-առանձին.**

**Ներածություն**

Դասի ներածական մասը, անհրաժեշտության դեպքում, կարող է սկսվել նախորդ դասին քննարկված թեմայի հիշեցումով (ընդհանուր հարցերով): Այս փուլում աշակերտը պետք է վերականգնի հարցի հետ կապված տեղեկությունները, անցած նյութը, ինչն ինքնըստինքյան կնպաստի նոր թեմայի նախապատրաստմանը: Գլխավորն է նախօրոք սահմանած լինեք.

- ինչպես ծանոթացնել աշակերտներին դասի նպատակները և խնդիրները,
- ինչպես կարողանաք կենտրոնացնել, համախմբել աշակերտների ուշադրությունը և շահագրգռել նրանց,
- ինչպես կապեք դասի նպատակներն աշակերտների հետաքրքրություններին:

**Հիմնական մաս (բովանդակության իրացում)**

Այս փուլի խնդիրն է, մի կողմից՝ «մարտահրավերի» փուլում բորբոքված հետաքրքրությունների և ազդակների պահպանումը, մյուս կողմից՝ աշակերտների ակտիվություններին նպաստումը (մասնակցություն բանավեճին, քննադատական վերլուծություն, տեսակետների համադրություն և համեմատություն, այլընտրանքային ուղիների որոնում): Այս փուլում նշանակալի է.

- դասի գլխավոր թեմայի սահմանումը,
- դասի գործընթացի հետաքրքիր ներկայացման համար անհրաժեշտ միջոցների և մեթոդների ընտրությունը,
- աշակերտները կարողանան գիտակցել ստացած գիտելիքի և տեղեկությունների անհրաժեշտությունը և նշանակությունը:

**Եզրափակիչ մաս (կշռադատում, ըմբռնում)**

- Դասի այս մասում կարող է ընդգծվել մի քանի պահ.
- Դասի այս փուլում տեղի է ունենում աշակերտների ստացած գիտելիքի և տեղեկությունների գիտակցում և ամրապնդում:Հարցի նկատմամբ սեփական վերաբերմունքի ձևավորում: Տեսակետի կամ տեղեկությունների մեկնաբանություն (իր բառերով փոխանցում):

Աշակերտն ամենից լավ այն է մտապահում, ինչը յուրացվում է իրեն ծանոթ համատեքստում, և հաղորդում է իր բառերով և հիմնավորում այն: Ընկալումն այն ժամանակ է հիմնավոր, երբ տեղեկությունը տեղադրվում է համատեքստային գծապատկերի մեջ:

Այս փուլի երկրորդ խնդիրն է աշակերտների միջև կարծիքների առողջ փոխանակումը: Կշռադատման ժամանակ բանավեճին ընդգրկվելը ոչ միայն բանավեճի մասնակիցներին, այլև պասսիվ ունկնդիրներին հնարավորություն է տալիս հասկանալ, մտածել և դրա հիման վրա ձևավորել, ստեղծել իրենց կարծիքը և վերաբերմունքը քննարկված հարցի շուրջ: Բացի այդ, սա փոփոխությունների և հայեցակետերի փոփոխման աստիճանն է սովորելու ընթացքում: Այս փուլում են ծանոթանում նորանոր տեղեկությունների, ինտեգրման բազմապիսի միջոցների, վերջինս ավելի ճկուն կառուցվածքների է մոտեցնում, որոնք հետագայում աշակերտները հնարավոր է ավելի գործնականորեն և նպատակաուղղված կիրառեն:

Բացի այդ, դասի եզրափակիչ կամ կշռադատման փուլում պետք է սահմանվի.

1. Ամփոփման ինչ միջոցի կդիմեք դասի վերջին:
2. Ինչպես կիրականացնեք հետադարձ կապն աշակերտների հետ:

Դասի վերջին ուսուցիչն առաջադրանք է տալիս աշակերտներին. տանը մեկ անգամ ևս վերհիշել, թե ինչ են արել այս դասին, ուշադիր ծանոթանալ (կարդալ) դասագրքում տրված տեղեկությանը (տեքստ,աղբյուր) և կատարել «տնային առաջադրանքը»:

**Մեթոդական երաշխավորություն՝** կապված հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտներին կրթական գործընթացի մեջ ներգրավելու հետ

Սովորելիս շատ երեխաներ ունենում են ուսանման հետ կապված դժվարություններ, ինչը կարող է հարուցված լինել աշակերտի ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հուզական, լեզվական կամ այլ վիճակով: Իսկ երկրի կրթական համակարգի պարտավորությունն է՝ գտնել բոլոր երեխաներին հաջողությամբ ուսուցանելու ուղիները:

Ներառական կրթությունը նշանակում է հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների ներգրավում կրթական գործընթացի մեջ: Նրա նպատակն է այս երեխաների կրթությանը նպաստելը, նրանց ինտեգրումը, հնարավորությունների բացահայտումը և զարգացումը: «Ինկլյուզիա» նշանակում է ներառում: Ներառական կրթության նպատակն է՝ բոլոր երեխաներին տրվի հասակակիցների հետ սովորելու և բնակման վայրին մոտ որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորություն:

Ներառական կրթությունը պահանջում է ամբողջությամբ դպրոցի և առարկայի ուսուցչի անխոնջ աշխատանք նրա համար, որ հզորացնի և զարգացնի հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի հնարավորությունները, բարելավի աշակերտի ակադեմիական և սոցիալական հմտություններն ու կարողությունները, պատրաստի աշակերտին ինքնուրույն կյանքի համար և ակտիվորեն նպաստի աշակերտի՝ որպես հասարակության լիարժեք անդամ ձևավորմանը: Նա ամբողջությամբ պետք է մասնակցի դպրոցական և դասարանական ակտիվություններին:

Տարբերակման տեսությունը հիմնված է այն եզրակացության վրա, որ աշակերտների միջև զգալի տարբերություն կա (Կ. Թոմլինսոն): Այս եզրակացության հիման վրա տարբերակման տեսությունը առաջարկում է ռազմավարություն, որն օգնում է ուսուցչին հատուկ պայմաններ ստեղծել յուրաքանչյուր աշակերտի լավ սովորելու համար: Դրա համար ուսուցիչը օգտագործում է տարբեր ուսումնական նյութեր, տարբեր առաջադրանքներ և այլ պրակտիկա:

Համաձայն այս տեսության, ուսուցման ժամանակ դասին իրականացված ակտիվությունների բովանդակությունը, գործընթացը, մթերքը կանոնավոր կերպով փոխվում է՝ ելնելով նրանից, թե ինչի համար են պատրաստ աշակերտները:

Դասասենյակում տարբերակման տեսության գործնական կիրառման ժամանակ ուսուցիչը կատարում է հետևյալ բաղադրիչների փոփոխում.

Ուսումնական նյութերի

Ուսումնական ռեսուրսների-ուսումնական միջավայրի:

Փոփոխումն անհրաժեշտ է երեք հիմնական ասպեկտների պատճառով.

1. Սովորելու հնարավորություն
2. Սովորելու մոտիվացիա
3. Սովորելու արդյունավետություն:

Այս երեք ասպեկտները անպայման պետք է կապենք աշակերտի պատրաստակամության, հետաքրքրության և ուսանման հետ:

Փաստ է, որ բոլոր աշակերտները տարբեր են: Գոյություն չունի «ստանդարտ» աշակերտ, և չկա որևէ իդեալական մեթոդ, որով ուսուցիչը կհաղթահարի բոլոր աշակերտների խնդիրները: Ահա այստեղ է մեզ օգնում տարբերակման տեսությունը, որը ճանաչում է աշակերտների միջև զգալի տարբերությունը: Ուսումնական գործընթացի պլանավորման ժամանակ ուսուցիչը կարող է հեշտությամբ օգտագործել աշակերտների տարբերությունը՝ ուսումնական նպատակով նախատեսված արդյունքներին հասնելու համար: Այդ տարբերությունները դրսևորվում են հետևյալ ձևերով.

Լսելով սովորողներ

Տեսնելով սովորողներ

Կինեսթետիկ սովորողներ

Տեսնելով սովորողներ

Տեսնելով սովորողները դասարանի ամենամեծ խումբն են կազմում: Նման աշակերտները պետք է «տեսնեն» ուսումնական նյութը, որպեսզի այն հասկանալի դառնա իրենց: Կարևոր է ունենալ ցուցադրական օժանդակ միջոցներ, որոնց միջոցով կկարողանան տեսնել տեղեկությունը:

Ի՞նչ է կրթությունը:

Լսելով սովորողներ

Լսելով սովորող աշակերտները դասարանի ամենափոքր խումբն են կազմում: Հնարավոր է, մուլտիմեդիայի, այսօրվա տեխնիկական միջոցների մեղքն է այն, որ այն աշակերտների թիվը, որոնք գերադասում են նստելու և լսելու միջոցով սովորել, այսպես նվազել է:

**Կինեսթետիկ սովորողներ**

Սպրենջերն ասում է. «Ամեն դաս պետք է ներառի շարժում: Վերցրեք այս շարժումը և այն հաճախ կրկնեք: Վերջում այն կվերածվի մշտական հիշողության»: Նման աշակերտներին շարժվել է անհրաժեշտ: Նրանց նաև անհրաժեշտ են ուսումնական մոդելներ, որոնք նրանք կբռնեն ձեռքում և կչոշափեն: Այդպիսի աշակերտներին անհրաժեշտ է մասնակցություն գործնական ակտիվությունների և գործնական ուսանում, որպեսզի ուսումնական նյութը նրանց համար հասկանալի դառնա: Տարբերակման տեսությունը կիրառելիս, ուսուցիչը պլանավորում է ակտիվություններ տարբեր մոդալության աշակերտների համար, ստեղծում արդյունավետ ուսումնական միջավայր, ինչով օգնում է սովորել դասարանում գտնվող տարբեր հնարավորություն ունեցող աշակերտներին: Երբ աշակերտին ուսումնական նյութը տրամադրվում է համապատասխան մոդալությամբ, տեղի է ունենում տեղեկատվության արագ ծածկագրում և այն չի կորչում:

Դասասենյակում տարբերակման տեսությունը հնարավոր է օգտագործել տարբեր ձևաչափերով.

1. Ուսումնական նյութերն ու ակտիվությունները նախատեսված են բոլոր մոդալության աշակերտների համար: Այս ձևաչափով ուսուցման հաջողությունը կախված է նրանից, թե որքան ճիշտ է կարողանում ուսուցիչը ակտիվության մակարդակում իրացնել տարբերակման տեսությունը:
2. Դասարանում խմբերի ձևավորումը տեղի է ունենում՝ ըստ ուսանման մոդալության, և յուրաքանչյուր խմբի համար ստեղծվում է համապատասխան վարժություն: Երկրորդ ձևաչափը հիմնվում է այն գաղափարի վրա, որ գլխավորն այն է, որ աշակերտը սովորի այն մոդալությամբ, որը նրա համար նախընտրելի է: Նման ձևաչափով ուսուցման արդյունավետությունը կախված է երկու գործոններից.
    1. Որքանով ճիշտ կարողացավ ուսուցիչը ըստ համապատասխան մոդալության խմբեր ձևավորել:
    2. Որքանով ճիշտ է հարմարեցված ուսումնական ակտիվությունը կոնկրետ մոդալության շրջանակներում:

Գործնականում երկրորդ մոդալությունն ավելի տարածված է, սակայն կրթական ոլորտի մասնագետները մշտապես նշում են առաջին ձևաչափի արդյունավետությունը:

# 5. V-VI ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

**ա) VI դասարանի վերջում ձեռքբերվելիք արդյունքներ**

**Դասիչների բացատրություն**

Տարրական աստիճանում չափորոշչում յուրաքանչյուր արդյունքի նախորդում է դասիչ, որը մատնանշում է առարկան, ուսուցման փուլը և չափորոշչի արդյունքի համարը: Օրինակ՝Հաս.գիտ. տարր (II).1.:

**«Հաս.գիտ.»** – մատնանշում է հասարակական գիտությունները:

**«Տարր.»** – մատնանշում է տարրական աստիճանը:

**«(II)»** – մատնանշում է, որ չափորոշիչը ներառում է V-VI դասարանները:

**«1»** – մատնանշում է չափորոշչի արդյունքի համարը:

| **«Մեր Վրաստանը» առարկայի չափորոշիչ (V-VI դասարաններ)** | |
|---|---|
| **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԻՉԸ** | **1. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ԺԱՄԱՆԱԿ, ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ. (II).1.** | Աշակերտը պետք է կարողանա.<br>Պատմական փաստերն ու երևույթներն ըմբռնել ժամանակագրական կտրվածքում և փոխանցել: Դրանք կապել ժամանակակից սոցիալ-մշակութային միջավայրի և պատմական ժառանգության հետ: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ. (II).2.** | Լեգենդներն ու առասպելները, կարևոր պատմական իրադարձությունները և անհատներին կապել տեղի միջավայրի հետ: Գիտակցել երկրի զարգացման մեջ անհատի դերը: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).3.** | Ուսումնասիրել Վրաստանի երկրամասերի բնական և սոցիալ-մշակութային բնութագրիչները: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).4.** | Քարտեզի պայմանական նշանների միջոցով կարդալ քարտեզի վրա տեղ գտած տեղեկությունները: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).5.** | Գիտակցել Վրաստանին բնորոշ բնական երևույթները հարուցող պատճառները և դրանց արդյունքները: Պատշաճ կերպով արձագանքել բնական երևույթներին: |
| | **2. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ** |
| | Աշակերտը պետք է կարողանա. |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).6.** | Գիտակցել երկրի զարգացման համար առևտրի, այլ ավանդական և ներկայիս մասնագիտութունների և գործունեությունների նշանակությունը և անհրաժեշտությունը: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).7.** | Հանդես բերել նախաձեռնություն, մարդկային և նյութական ռեսուրսների նախատեսմամբ՝ պլանավորել արդյունքին միտված գործունեություն: |
| | **3. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ** |
| | Աշակերտը պետք է կարողանա. |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).8.** | Գիտակցել իր՝ որպես երեխայի իրավունքներն ու պարտականությունները, սահմանված կանոնների և օրենքների հիման վրա իրացնել իր իրավունքները և պաշտպանել ուրիշի իրավունքները: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).9.** | Հասարակության համար հրատապ խնդիրները/ իրադարձությունները ընկալել պատմական և ժամանակակից կտրվածքում: Սեփական ներգրավվածությամբ գիտակցել դրանց ուղղման մեխանիզմները: |

| «Մեր Վրաստանը» առարկայի չափորոշիչ (V-VI դասարաններ) | |
|---|---|
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).10.** | Գիտակցել առողջ կենսակերպի (անձնական հիգիենայի, առողջ սննդի, ավանդական և ներկայիս մարզական ակտիվությունների) նշանակությունը և հետևել դրանց: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).11.** | Գիտակցել անվտանգության կանոնների պահպանման նշանակությունը և արտակարգ և կենցաղային իրավիճակներում համապատասխանաբար գործել (օրինակ՝ փողոցում տեղաշարժվելիս, տրանսպորտում գտնվելիս, էքսկուրսիայի և արշավի ժամանակ, բնական աղետների ժամանակ): |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).12.** | Գիտակցել արժեքների, օրինակ՝ ժողովրդավարության սկզբունքների, մշակութային ժառանգության, շրջակա միջավայրի պահպանության, հանդուրժողականության նշանակությունը անհատի և հասարակության զարգացման համար: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).13.** | Գիտակցել Վրաստանի էթնիկ, մշակութային-կրոնական բազմազանությունը և դրսևորել դրական վերաբերմունք: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).14.** | Գիտակցել բնական միջավայրի, պատմական և մշակութային ժառանգության նշանակությունը և հոգատար վերաբերմունք դրսևորել դրա նկատմամբ: |
| **ՀԱՍ.ԳԻՏ.ՏԱՐՐ (II).15.** | Գիտակցել իր շուրջն առկա սոցիալ-մշակութային հաստատությունների (օրինակ՝ դպրոց, պաշտամունքային (կրոնական) կառույցներ, կինոթատրոն, ակումբ, թանգարան, բժշկական հաստատություն, ոստիկանություն) գործառույթները: |

**բ) Բովանդակություն**

Ուսումնական գործընթացը պետք է ընթանա հետևյալ հասկացական կարգերի և թեմաների մշակման հիման վրա:

**Հասկացություններ և տերմիններ**

«Մեր Վրաստանը» առարկայի չափորոշիչը ենթադրում է թվարկված հասկացությունների իմպլիցիտիվ և էքսպլիցիտիվ մշակում.

1. Անհատ, հասարակական խմբեր:
2. Ժամանակ, շարունակականություն և փոփոխություն (պատմություն, աղբյուր, փաստ և մեկնաբանություն, օրացույց, դար, թվարկություն):
3. Ժողովուրդ, աշխարհագրական դիրք, միջավայր (աշխարհագրություն, քարտեզ/տեղանքի պլան, սահման, բնական ռեսուրսներ, բնակեցման տեսակներ, կացարանի տեսակներ, լանդշաֆտ (բնական), էկոլոգիա/շրջակա միջավայրի պահպանություն, ռելիեֆ, կլիմա, բնական երևույթներ և պաշտպանություն դրանցից, արտակարգ իրավիճակներ, ազգ, էթնիկ խումբ, պատմա-ազգագրական երկրամաս):
4. Էկոնոմիկա (մասնագիտություն, գյուղատնտեսություն, առևտուր, տրանսպորտ և հաղորդակցություններ):
5. Պետություն և քաղաքացի (հասարակություն, պատասխանատվություն, առողջ կենսակերպ, կամավորություն, մասնակցություն, քաղաքացիական անվտանգություն, օրենք, հակամարտություն, բռնություն), ընտրություններ, խորհրդանշաններ:
6. Մշակութային բազմազանություն (էթնիկ, մշակութային-կրոնական բազմազանություն, մշակութային ժառանգություն, թանգարան, ավանդույթ/նորարարություն, ժողովրդական բանահյուսություն, գիր, ավանդական մարզատեսակներ, ավանդական կենցաղային գործունեություններ):

# Թեմա V-VI դասարանների համար

Վրաստանի երկրամասի տրված մատրիցան համապիտանի նմուշ է, համաձայն որի պետք է կառուցվի նյութը բոլոր երկրամասերի շուրջ, իհարկե, երկրամասերի ինքնատիպության նախատեսմամբ

| Թեմա | Ուսումնական թեման չափորոշչի արդյունքների հետ կապող հարցեր |
|---|---|
| **Վրաստանի երկրամաս** | Ի՞նչ գիտենք Վրաստանի և նրա երկրամասերի մասին: (Հաս.գիտ.տարր.(II). 3, 4)<br>Ի՞նչ կարող ենք իմանալ Վրաստանի այս կամ այն երկրամասի մասին քարտեզի վրա արված պայմանական նշանների միջոցով (ռեսուրս, հուշարձան, ճակատամարտի վայր, քաղաք, գետ, լիճ, լեռ, հարթավայր: (Հաս.գիտ.տարր.(II). 3, 4)<br>Պատմության մասին ի՞նչ և ինչպե՞ս են պատմում մեզ Վրաստանի այս կամ այն երկրամասում պահպանված հուշարձանները: (Հաս.գիտ.տարր.(II). 1, 2, 4, 14)<br>Ո՞ր նշանավոր մարդիկ, իրադարձությունները, առասպելներն ու լեգենդներն են կապվում Վրաստանի այս կամ այն երկրամասի պատմության հետ: (Հաս.գիտ.տարր.(II). 1, 2, 12)<br>Պատմականորեն ո՞ր հայտնի ճանապարհորդությունն է կապվում Վրաստանի այս կամ այն երկրամասի հետ: (Հաս.գիտ.տարր.(II). 1, 2, 6)<br>Ինչպե՞ս են արտացոլվում պատերազմի և խաղաղության հետևանքները (օրինակ, պատմական փլատակներ, սահմանների փոփոխություն, բնակչության փոփոխություն) Վրաստանի այս կամ այն երկրամասի պատմության և կենցաղի վրա: (Հաս.գիտ.տարր.(II). 1, 9, 12)<br>Ինչպե՞ս են տարբերվում Վրաստանի տարբեր պատմա-ազգագրական երկրամասերը տարբեր հատկանիշներով (օրինակ, ժողովրդական բանահյուսություն, խոհանոց, հագուստ, ծեսեր և սովորույթներ), և ի՞նչն է պայմանավորել դա: (Հաս.գիտ.տարր.(II). 3, 13)<br>Ի՞նչն է պայմանավորել, որ Վրաստանի այս կամ այն երկրամասում տարբեր էթնիկ, մշակութային և կրոնական խմբերի ներկայացուցիչներ են ապրում: (Հաս.գիտ.տարր.(II). 1, 3, 13)<br>Ինչո՞ւ է Վրաստանի այս կամ այն երկրամասում տարածված այս կամ այն ավանդական գործունեությունը և տնտեսության բնագավառը: (Հաս.գիտ.տարր.(II). 3, 6)<br>Ի՞նչն է պայմանավորել բնակեցման և կացարանի տեսակների առանձնահատկությունները Վրաստանի այս կամ այն երկրամասում: (Հաս.գիտ.տարր.(II). 3, 5)<br>Ինչպե՞ս են պաշտպանվում Վրաստանի այս կամ այն երկրամասին բնորոշ տարերային երևույթներից: Ինչո՞վ են պայմանավորված տարերային երևույթները: (Հաս.գիտ.տարր.(II). 5, 11)<br>Ինչպե՞ս կարող ենք մասնակցել այս կամ այն երկրամասի համար հրատապ խնդիրների (օրինակ՝ շրջակա միջավայրի պահպանություն, մշակութային ժառանգության պահպանություն, էկոմիգրանտներ, փախստականներ, կրթության հասանելիություն, պետական լեզվի չիմացություն*) լուծմանը: (Հաս.գիտ.տարր.(II). 7, 12, 14) *Այս ցանկից պետք է առանձնացնենք և մեկնաբանենք կոնկրետ երկրամասին բնորոշ սոցիալական խնդիրը:<br>Ինչպե՞ս կարող եմ խաղաղ ճանապարհով պաշտպանել իմ և իմ հասակակիցների իրավունքները և ի՞նչ միջոցներ կարող եմ կիրառել հասարակության համար վնասակար բռնի վարքագծի կանխման համար: (Հաս.գիտ.տարր.(II). 7, 8, 9, 10, 12)<br>Ի՞նչ խնդիրներ կարող են ստեղծել իմ երկրամասին իմ և հասակակիցներիս անպատասխանատու գործողությունները և պարտականությունների անտեսումը: (Հաս.գիտ.տարր.(II). 9, 10, 14)<br>Ինչո՞ւ է կարևոր, որ և՛ աղջիկները, և՛ տղաները պահպանեն առողջ կենսակերպ, և ինչպե՞ս են մեզ օգնում Վրաստանի այս կամ այն երկրամասում տարածված ավանդական մարզաձևերը առողջ կենսակերպի պահպանման հարցում: (Հաս.գիտ.տարր.(II). 10)<br>Ինչո՞ւ էր/է անհրաժեշտ Վրաստանի տարբեր երկրամասերում սոցիալ-մշակութային ինստիտուտների առկայությունը (օրինակ՝դպրոց, ակադեմիա, պաշտամունքային (կրոնական) կառույցներ, գրադարան) անցյալում և ներկայում: (Հաս.գիտ.տարր.(II). 1, 6, 15) |

| Թեմա | Ուսումնական թեման չափորոշչի արդյունքների հետ կապող հարցեր |
|---|---|
| **Թբիլիսի՝ Վրաստանի մայրաքաղաք** | Ինչպե՞ս հիմնադրվեց Թբիլիսին: Ինչպե՞ս վերածվեց այն Վրաստանի մայրաքաղաքի: Ինչպիսի՞ տեսք ուներ այն պատմական անցյալում: (Չաս.գիտ.տարր.(II). 1, 2, 13) |
| | Ինչպե՞ս են արտացոլվում պատերազմի և խաղաղության հետևանքները (օրինակ՝ պատմական փլատակներ, սահմանների փոփոխություն, բնակչության փոփոխություն) Թբիլիսիի պատմության և կենցաղի վրա: (Չաս.գիտ.տարր.(II). 1, 12) |
| | Ի՞նչ և ինչպե՞ս են պատմում մեզ պահպանված հուշարձանները Թբիլիսիի պատմության մասին (օրինակ՝ Նարիղալա, Մետեխի): (Չաս.գիտ.տարր.(II). 1, 14) |
| | Ինչո՞վ է տարբերվում պատմական Թբիլիսին ժամանակակից Թբիլիսիից: Թբիլիսիի պատմության և զարգացման մասին ի՞նչ են մեզ պատմում գեղանկարներն ու լուսանկարները: (Չաս.գիտ.տարր.(II). 1, 2, 3, 6, 14) |
| | Ինչո՞ւ են տարբեր Թբիլիսիի թաղամասերը (ճարտարապետական, բնակչության կենցաղի առումով): (Չաս.գիտ.տարր.(II). 1, 3, 5, 15) |
| | Ինչո՞ւ են Ռուսթավելի պողոտան և Ազատության հրապարակը համարվում Թբիլիսիի կենտրոն (մշակութային-քաղաքական նշանակությամբ): (Չաս.գիտ.տարր.(II). 15) |
| | Ինչո՞վ է պայմանավորված տարբեր գործունեությունների և մասնագիտությունների բազմազանությունը Թբիլիսիում: (Չաս.գիտ.տարր.(II). 1, 3, 6, 13, 15) |
| | Ինչո՞ւ են Թբիլիսիում ապրում տարբեր էթնիկ, մշակութային և կրոնական խմբերի ներկայացուցիչներ: (Չաս.գիտ.տարր.(II). 1, 3, 12, 13) |
| | Ինչպե՞ս էր/է արտացոլվում Թբիլիսին արվեստի և գրականության մեջ: (Օրինակ՝ Փիրոսմանի, Գրիշաշվիլի և այլն) (Չաս.գիտ.տարր.(II). 1, 2, 3) |
| | Ինչպե՞ս կարող ենք օգտագործել քաղաքի հատակագծի վրա արտացոլված պայմանական նշանները Թբիլիսիում կողմնորոշման համար (Չաս.գիտ.տարր.(II).4) |
| | Ինչո՞ւ են Թբիլիսիում սուր դրված շրջակա միջավայրի (էկոլոգիայի, օդի աղտոտման) պահպանության խնդիրները: (Չաս.գիտ.տարր.(II). 9, 14) |
| | Ինչպե՞ս արդյունավետ օգտագործենք առողջ կենսակերպի համար զբոսաշրջական և հանգստյան (ռեկրեացիոն) գոտիները: (Չաս.գիտ.տարր.(II). 10) |
| **Պետություն՝ մեր Վրաստանը** | Ե՞րբ և ինչպե՞ս է ստեղծվել վրացական պետությունը: Վրացական գի՞րը: (Չաս.գիտ.տարր.(II). 1, 2, 14) |
| | Ի՞նչ նշանակություն ունի և ինչո՞ւ կարող է փոխվել պետական սահմանը: (Չաս.գիտ.տարր.(II). 1, 2, 4) |
| | Ի՞նչ կարող եմ իմանալ Վրաստանի մասին տարբեր տեսակի քարտեզների և դրանց վրա տեղ գտած պայմանական նշանների միջոցով: (Չաս.գիտ.տարր.(II).4, 5) |
| | Ի՞նչ խնդիրներ կարող են ստեղծել մեր երկրին իմ և իմ հասակակիցների անպատասխանատու գործողությունները և պարտականությունների անտեսումը: (Չաս.գիտ.տարր.(II). 8, 12) |
| | Ինչպե՞ս կատարենք մեր ներդրումը երկրի զարգացման մեջ՝ առկա խնդիրների ֆոնին (էկոլոգիական խնդիրներ, ճանապարհային անվտանգություն, առողջ կենսակերպ, կրթության հասանելիություն, բռնության խնդիր, պետական լեզվի չիմացություն և այլն: (Չաս.գիտ. տարր. (II). 7, 9, 10, 12) |
| | Ինչո՞ւ է իմ պարտքը համարվում երկրի պատմամշակութային ժառանգության և շրջակա միջավայրի պահպանությունը: (Չաս.գիտ.տարր.(II). 7, 9, 14) |
| | Ինչո՞ւ է Վրաստանին բնորոշ էթնիկ, մշակութային և կրոնական բազմազանությունը: (Չաս. գիտ.տարր.(II). 3, 13) |
| | Ինչո՞ւ են Վրաստանին բնորոշ բազմազան ազգագրական ավանդույթները: (Չաս.գիտ.տարր. (II). 1, 3, 13) |
| | Ինչպե՞ս են հոգ տանում տարբեր ինստիտուտներ մեր իրավունքների պաշտպանության և իրացման մասին (օրինակ՝ խորհրդարան, դատարան, նախարարություններ, կրթական հաստատություններ, թատրոն, թանգարան): (Չաս.գիտ.տարր.(II). 15) |
| | Ինչպե՞ս է հոգ տանում պետությունը մեր քաղաքացիական անվտանգության մասին: (Չաս. գիտ.տարր.(II). 11) |
| | Ինչպե՞ս իմ ձայնը լսելի դարձնեմ իշխանությանը՝ կարևոր հարցերի հետ կապված իմ ձեռքի տակ եղած միջոցներով: (Չաս.գիտ.տարր.(II). 7, 8, 9, 12) |

# 6. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻՆ

| **Դասի վերնագիրը** | (II).1 | (II).2 | (II).3 | (II).4 | (II).5 | (II).6 | (II).7 | (II).8 | (II).9 | (II).10 | (II).11 | (II).12. | (II).13 | (II).14 | (II).15 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Բաժին 1. Կախեթի** | | | | | | | | | | | | | | | |
| 1.1. Կախեթիի աշխարհագրական դիրքը և բնական պայմանները | | | * | * | | | | | | | | | | * | |
| 1.2. Բնակեցման տեսակները և բնակելի կառույցները Կախեթիում | | * | * | | | | | | | | | | | | * |
| 1.3. Խաղողագործություն-գինեգործության ավանդույթները Կախեթիում | | | * | | | * | * | | | | | | | | |
| 1.4. Գինու մշակույթը Կախեթիում | | | * | | | * | | | | | | | | * | |
| 1.5. Մշակութային հուշարձանները Կախեթիում | * | | | | | | | * | | | | * | | * | * |
| 1.6. Տնտեսության բնագավառները Կախեթիում | | | * | | * | | * | | | | | | * | | |
| 1.7. Կախեթիի պայքարը գոյատևման համար | * | * | | | | | | * | * | | | | | | |
| 1.8. Կախեթիի բնության տեսարժան վայրերը | | | * | | | | | | | | | * | * | * | * |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | | | * | * | | * | * | | | | | | | * | |
| **Բաժին 2. Արևելյան Վրաստանի լեռնաշխարհը** | | | | | | | | | | | | | | | |
| 2.1. Արևելյան Վրաստանի լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը և բնությունը | | | * | * | * | | * | | | | | | | | |
| 2.2. Լեռնային պատմա-ազգագրական երկրամասերը | | * | * | * | | | * | | | | | | | | |
| 2.3. Հավատալիքներն ու պատկերացումները Արևելյան Վրաստանի լեռնաշխարհում | | * | * | | | | | | | | | | * | | * |
| 2.4. Լեռնային երկրամասերի տեղը Վրաստան պետության մեջ | | | * | | | * | | | | | | | | * | |
| 2.5 Բնակեցման տեսակները և հիմնական տնտեսական գործունեությունը լեռներում | | | * | | * | * | | | | | | | | | |
| 2.6. Արևելյան Վրաստանի լեռնականների կենցաղը և մշակույթը | * | | * | | * | * | | | | | | | | | |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | * | * | * | | | * | | | | | | | | * | |
| **Բաժին 3. Սամցխե-Ջավախեթի** | | | | | | | | | | | | | | | |
| 3.1. Սամցխե-Ջավախեթին՝ Վրաստանի հարավային դարպաս | * | | * | * | | | | | | | | | | | |

| **Դասի վերնագիրը** | (II).1 | (II).2 | (II).3 | (II).4 | (II).5 | (II).6 | (II).7 | (II).8 | (II).9 | (II).10 | (II).11 | (II).12. | (II).13 | (II).14 | (II).15 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.2. Սամցխե-Ջավախեթիի մշակութային ժառանգությունը | * | * | | | | | | | | | | * | * | * | * |
| 3.3. Սամցխե-Ջավախեթիի բնակչության բազմազանությունը | * | * | | | | | | | | | | * | * | | |
| 3.4. Տնտեսության բնագավառները Սամցխե-Ջավախեթիում | | | * | | | * | * | | | | | | | * | * |
| 3.5. Բնակելի տները Սամցխե-Ջավախեթիում | | | * | | | | | | | | | | | * | * |
| 3.6. Ապաստարանները և բերդ-ամրոցները Սամցխե-Ջավախեթիում | * | * | * | | * | | | | | | | | | * | |
| 3.7. Առևտուրը, արհեստագործությունը և քաղաքային կյանքը Սամցխե-Ջավախեթիում | | | * | | | * | * | | * | | | | | | |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | * | * | * | | * | * | | | | | | * | | | |
| **Բաժին 4. Գուրիա** | | | | | | | | | | | | | | | |
| 4.1. Գուրիայի աշխարհագրական դիրքը և բնական պայմանները | | | * | * | | | | | | | | | | * | |
| 4.2. Գուրիայի տնտեսության բնագավառները | | * | * | | | * | | | | | | | | * | |
| 4.3. Գուրիան՝ հանգստավայրերով հարուստ երկրամաս | | | * | | | * | * | | | | | * | | * | |
| 4.4. Բնակեցման տեսակները և շինարարական գործը Գուրիայում | | | * | | * | | | | | | | * | | * | |
| 4.5. Գուրիական ժողովրդական բանահյուսությունը | | | * | | | * | | | | | | | | * | |
| 4.6. Մարզական խաղերը Գուրիայում | | | * | | | | | | | * | | | | * | |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | | | * | | | | | * | | | | * | | | |
| **Բաժին 5. Ռաճա-Լեչխումի** | | | | | | | | | | | | | | | |
| 5.1. Ռաճա-Լեչխումիի անցյալը և աշխարհագրական միջավայրը | | * | * | * | | | | | | | | | | | |
| 5.2. Տնտեսությունը Ռաճա-Լեչխումիում | | | * | * | | | * | | | | | | | | |
| 5.3. Արհեստագործությունը Ռաճա-Լեչխումիում | | | * | | | * | * | | | | | | | | |
| 5.4. Ռաճա-Լեչխումիի բնակչության կյանքի ոճը | | | * | * | | * | | | | | | | | | |
| 5.5. Ռաճացիները՝ վրաց վաճառականներ | | | * | | | * | * | | * | | | | | | |
| 5.6. Հրեաները և հայերը Ռաճա-Լեչխումիում | | | * | | | * | * | | * | | | | | | |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | * | | | | * | * | | | * | | | | | | |

| Դասի վերնագիրը | (II).1 | (II).2 | (II).3 | (II).4 | (II).5 | (II).6 | (II).7 | (II).8 | (II).9 | (II).10 | (II).11 | (II).12. | (II).13 | (II).14 | (II).15 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Բաժին 6. Աբխազիա** | | | | | | | | | | | | | | | |
| 6.1. Աբխազիայի աշխարհագրական դիրքը և բնական պայմանները | | | * | * | | | | | | | | | | * | |
| 6.2. Տնտեսության բնագավառները Աբխազիայում | | | * | | | * | | | | | | | | | |
| 6.3. Բնակեցման տեսակները և ամենօրյա կյանքը Աբխազիայում | | | * | | | * | | | | | | | | * | |
| 6.4. Աբխազիայի բնակչությունը | * | | * | | | | | | | | | * | * | * | |
| 6.5. Մշակույթի հուշարձանները Աբխազիայում | * | | | | | | | | * | | | | * | * | |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | * | * | * | | | | | | * | | | | * | * | |
| **Բաժին 7. Թբիլիսի** | | | | | | | | | | | | | | | |
| 7.1. Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսին | | * | | * | | | | | | | | | | * | |
| 7.2. Թբիլիսիի հիմնադրումը | * | * | | | | | | | | | | | | | |
| 7.3. Թբիլիսիի բնակչության էթնիկ կազմը | * | | | | | | | * | * | | | * | * | | |
| 7.4. Թբիլիսիի բնակչության կրոնական կազմը | * | | | | | | | | | | | * | * | | |
| 7.5. Թբիլիսցիների հիմնական տնտեսական գործունեությունը | | | * | | | * | | | | | | | | | |
| 7.6. Առևտուրը և առևտրային վայրերը Թբիլիսիում | | | | | | * | | | | | | | * | | |
| 7.7. Փոխադրամիջոցները Թբիլիսիում | | | | | | * | | | | | | | | | |
| 7.8. XIX դարի քաղաքային կյանքը | | | | | | | | | | | | * | * | * | |
| 7.9. Ջուրը թբիլիսցիների կյանքում հնում և այսօր | | | * | | * | * | | | * | * | | | | * | |
| 7.10. Հանգիստը և ժամանցը Թբիլիսիում | | | * | | | * | | | | * | | | * | * | * |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | * | * | * | | | | | | | * | | * | * | * | |
| **Բաժին 8. Պետություն՝ Մեր Վրաստանը** | | | | | | | | | | | | | | | |
| 8.1. Վրաստանի աշխարհագրական դիրքը | | | * | * | | | | | | | | | * | * | |
| 8.2. Վրաստանի տարածքը և սահմանները | * | | * | * | | * | | | * | * | * | | | | |
| 8.3. Վրաստանի հարևանները | * | | * | * | | | | | * | | | | * | | |
| 8.4. Վրաստանի բնական միջավայրը և լանդշաֆտը | | | * | * | * | | | | * | | * | | | | |

| Դասի վերնագիրը | (II).1 | (II).2 | (II).3 | (II).4 | (II).5 | (II).6 | (II).7 | (II).8 | (II).9 | (II).10 | (II).11 | (II).12. | (II).13 | (II).14 | (II).15 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8.5. Վրաստանի պետական խորհրդանշանները | * | | | | | | | * | * | | | * | | * | * |
| 8.6. Վրացական գրի ծագումը | * | * | * | | | | | | | | | | | * | |
| 8.7. Քարթլիի թագավորության ստեղծումը | * | * | * | * | | | | | | | | | | | |
| 8.8.Փառնավազի բարեփոխումները | * | * | * | | | * | | | * | | | * | | | |
| 8.9. Ճանապարհ դեպի Միասնական Վրաստանի ստեղծում | * | * | | * | | | | | | | * | * | * | | * |
| 8.10. Դավիթ Շինարար | * | * | * | * | | | | | * | | | | | | * |
| 8.11. Պետական կառավարումը միավորված Վրաստանում | * | * | | | | | | * | * | | | * | * | | |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | * | * | * | | * | | * | * | * | * | | * | | | * |

# 7. ԳՆԱՀԱՏՈՒՄ

«Մեր Վրաստանը» առարկայի ուսանում-ուսուցման ժամանակ կիրառվում է որոշող և զարգացնող գնահատում: Նրա խնդիրները սահմանված են Հասարակական գիտությունների չափորոշչի ընդհանուր մասում:

Առարկայի ուսանում-ուսուցման գործընթացում, ընթացիկ գնահատման բաղադրիչից, աշակերտը պետք է գնահատվի հետևյալ տիպիկ ակտիվություններով.

Առարկայի ուսանում-ուսուցման գործընթացում աշակերտը կարող է գնահատվել հետևյալ գործունեության տեսակներով.

**1. Աշխատանք քարտեզի վրա:**

**2.** Դիագրամների, **սանդղակների** (ժամանակի սանդղակ) ստեղծում:

**3.** Տեղեկատվություն, լուսանկարչական նյութի **հավաքագրում և շնորհանդեսի** պատրաստում, ցուցահանդեսի կազմակերպում:

**4.** Պատմության, անիմացիոն / գեղարվեստական / վավերագրական ֆիլմի, տեսահոլովակի, երաժշտական տեսահոլովակի, կենցաղային դեպքի, գրական ստեղծագործության, աղբյուրի **քննարկում**:

**5. Ստեղծագործական մթերքի ստեղծում** (պաստառ, նկար, կոմիքս, թռուցիկ, շարադրություն, պատմվածք, գրքույկ, պատի թերթ, մանրակաղապար, տեսահոլովակ, տեսաալբոմ, լուսանկարչական կոլլաժ (ժամանակի սանդղակի օգտագործմամբ), կարգախոս):

**6. Հետազոտական նախագիծ** (հարցում, հարցազրույց, ռեպորտաժ, հետազոտության անցկացում, վարվելակարգի կանոններ («Սահմանադրություն»), օրվա աշխատակարգ, «Բարեկամության օրագիր», ցուցահանդես):

**7. Փաստաթղթերի** ստեղծում (դասարանի «սահմանադրություն», օրվա աշխատակարգ, խնդրագիր և այլն):

**8. Հետազոտական նախագիծ** (հարցում, հարցազրույց, ռեպորտաժ և այլն):

**9.** Բարեգործական, կրթական և սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված **նախագծերի** պլանավորում և իրականացում:

**10. Էքսկուրսիա:**

**11. Քննարկում**:

**12. Դերային խաղ** (հանրային կառույցի իմիտացիա, մոդելավորված դատարան և այլն):

Տվյալ գործունեություններին (ակտիվություններին) աշակերտների մասնակցությունը պետք է գնահատվի գնահատման աղյուսակներով՝ խորագրերով, որոնք, մի կողմից, ստուգում են աշակերտի անհատական առաջընթացը, մյուս կողմից՝ ուսուցման գործընթացում ձեռք բերված գիտելիքների որակը (գիտելիքների երեք կարգ՝ դեկլարատիվ, ընթացակարգային, պայմանի հետ կապված):

Ամփոփիչ հանձնարարությունը պետք է ներկայացվի համալիր առաջադրանքի տեսքով: Համալիր առաջադրանքը կարող է լինել.

**1.** Վրաստանի այս կամ այն երկրամասի (օրինակ, Քարթլի) որևէ վայրում էքսկուրսիայի միջոցով հետազոտության անցկացում (պատմական, աշխարհագրական, սոցիալական խնդիրների մասին) և դրա արդյունքների **շնորհանդես**:

**2.** Վրաստանի այս կամ այն երկրամասի պատվին որևէ **միջոցառում անցկացնել**, որում կարտացոլվեն պատմության, աշխարհագրության և քաղաքացիական կրթության տվյալներ:

**3. Դերային խաղով** Վրաստանի այս կամ այն երկրամասի որևէ պատմական իրադարձության դրվագի ներկայացում:

**4. Մանրակաղապարների ստեղծում՝** Վրաստանի երկու երկրամասերի առանձնահատկություններն իրար հետ համեմատելու նպատակով:

**5. Այց ազգագրական թանգարան՝** դրա հիշարժան ցուցադրանմուշների ուսումնասիրման նպատակով:

**6.** Վրաստանի այս կամ այն երկրամասի մասին տեղեկատվական-գովազդային բուկլետի ստեղծում:

**7.** Սկայպի, հեռախոսի կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ՝ Վրաստանի տարբեր մասերում ապրող հասակակիցների հետ կապվել, տեղեկություններ փոխանակել և հասակակիցների խնդիրների շուրջ հավաքագրված տեղեկատվությունն ընդհանրացնել:

**8.** Վրաստանի այս կամ այն երկրամասի համար հրատապ **պարզ քաղաքացիական նախագծերի** (էկոլոգիա, արտակարգ իրավիճակներ, առողջ կենսակերպ) իրականացում:

# 8. ԺԱՄԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄ

| **Դասի վերնագիրը** | **Ժամերի բաշխում** |
|---|---|
| **Բաժին 1.** Կախեթի | |
| 1.1. Կախեթիի աշխարհագրական դիրքը և բնական պայմանները | 1 |
| 1.2. Բնակեցման տեսակները և բնակելի կառույցները Կախեթիում | 1 |
| 1.3. Խաղողագործություն-գինեգործության ավանդույթները Կախեթիում | 1 |
| 1.4. Գինու մշակույթը Կախեթիում | 1 |
| 1.5. Մշակութային հուշարձանները Կախեթիում | 1 |
| 1.6. Տնտեսության բնագավառները Կախեթիում | 2 |
| 1.7. Կախեթիի պայքարը գոյատևման համար | 1 |
| 1.8. Կախեթիի բնության տեսարժան վայրերը | 1 |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | |
| **Բաժին 2.** Արևելյան Վրաստանի լեռնաշխարհը | |
| 2.1. Արևելյան Վրաստանի լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը և բնությունը | 1 |
| 2.2. Լեռնային պատմա-ազգագրական երկրամասերը | 1 |
| 2.3. Հավատալիքներն ու պատկերացումները Արևելյան Վրաստանի լեռնաշխարհում | 1 |
| 2.4. Լեռնային երկրամասերի տեղը Վրաստան պետության մեջ | 1 |
| 2.5 Բնակեցման տեսակները և հիմնական տնտեսական գործունեությունը | 1 |
| 2.6. Արևելյան Վրաստանի լեռնականների կենցաղը և մշակույթը | 1 |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | |
| **Բաժին 3.** Սամցխե-Ջավախեթի | |
| 3.1. Սամցխե-Ջավախեթին՝ Վրաստանի հարավային դարպաս | 1 |
| 3.2. Սամցխե-Ջավախեթիի մշակութային ժառանգությունը | 1 |
| 3.3. Սամցխե-Ջավախեթիի բնակչության բազմազանությունը | 1 |
| 3.4. Տնտեսության բնագավառները Սամցխե-Ջավախեթիում | 2 |
| 3.5. Բնակելի տները Սամցխե-Ջավախեթիում | 1 |
| 3.6. Ապաստարանները և բերդ-ամրոցները Սամցխե-Ջավախեթիում | 1 |
| 3.7. Առևտուրը, արհեստագործությունը և քաղաքային կյանքը Սամցխե-Ջավախեթիում | 1 |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | |
| **Բաժին 4.** Գուրիա | |
| 4.1. Գուրիայի աշխարհագրական դիրքը և բնական պայմանները | 1 |
| 4.2. Գուրիայի տնտեսության բնագավառները | 1 |
| 4.3. Գուրիան առողջարաններով հարուստ երկրամաս | 1 |
| 4.4. Բնակեցման տեսակները և շինարարական գործը Գուրիայում | 1 |
| 4.5. Գուրիական ժողովրդական բանահյուսությունը | 1 |
| 4.6. Մարզական խաղերը Գուրիայում | 1 |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | |

| **Դասի վերնագիրը** | **Ժամերի բաշխում** |
|---|---|
| **Բաժին 5.** Ռաճա-Լեչխումի | |
| 5.1. Ռաճա-Լեչխումիի անցյալը և աշխարհագրական միջավայրը | 1 |
| 5.2. Տնտեսությունը Ռաճա-Լեչխումիում | 1 |
| 5.3. Արհեստագործությունը Ռաճա-Լեչխումիում | 1 |
| 5.4. Ռաճա-Լեչխումիի բնակչության կյանքի ոճը | 1 |
| 5.5. Ռաճացիները՝ վրաց վաճառականներ | 1 |
| 5.6. Հրեաները և հայերը Ռաճա-Լեչխումիում | 1 |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | |
| **Բաժին 6.** Աբխազիա | |
| 6.1. Աբխազիայի աշխարհագրական դիրքը և բնական պայմանները | 1 |
| 6.2. Տնտեսության բնագավառները Աբխազիայում | 2 |
| 6.3. Բնակեցման տեսակները և ամենօրյա կյանքը Աբխազիայում | 1 |
| 6.4. Աբխազիայի բնակչությունը | 2 |
| 6.5. Մշակույթի հուշարձանները Աբխազիայում | 1 |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | |
| **Բաժին 7.** Թբիլիսի | |
| 7.1. Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսին | 1 |
| 7.2. Թբիլիսիի հիմնադրումը | 1 |
| 7.3. Թբիլիսիի բնակչության էթնիկ կազմը | 2 |
| 7.4. Թբիլիսիի բնակչության կրոնական կազմը | 1 |
| 7.5. Թբիլիսցիների հիմնական տնտեսական գործունեությունը | 1 |
| 7.6. Առևտուրը և առևտրային վայրերը Թբիլիսիում | 1 |
| 7.7. Փոխադրամիջոցները Թբիլիսիում | 1 |
| 7.8. XIX դարի քաղաքային կյանքը | 2 |
| 7.9. Ջուրը թբիլիսցիների կյանքում հնում և այսօր | 1 |
| 7.10. Հանգիստը և ժամանցը Թբիլիսիում | 1 |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | |
| **Բաժին 8.** Պետություն՝ Մեր Վրաստանը | |
| 8.1. Վրաստանի աշխարհագրական դիրքը | 1 |
| 8.2. Վրաստանի տարածքը և սահմանները | 1 |
| 8.3. Վրաստանի հարևանները | 1 |
| 8.4. Վրաստանի բնական միջավայրը և լանդշաֆտը | 1 |
| 8.5. Վրաստանի պետական խորհրդանշանները | 1 |
| 8.6. Վրացական գրի ծագումը | 1 |
| 8.7. Քարթլիի թագավորության ստեղծումը | 1 |
| 8.8. Փառնավազի բարեփոխումները | 1 |
| 8.9. Ճանապարհ դեպի Միասնական Վրաստանի ստեղծում | 2 |
| 8.10. Դավիթ Շինարար | 1 |
| 8.11. Պետական կառավարումը միավորված Վրաստանում | 1 |
| Ինչ գիտեմ և ինչ եմ կարող | |

# 9. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ՝ ԽՈՐԱԳՐԵՐ

| Բարձր | Միջինից բարձր | Միջին | Ցածր |
|---|---|---|---|
| Աշակերտը լրացնում է դիագրամ, աղյուսակներ և անում եզրակացություններ: | Աշակերտը փորձում է լրացնել դիագրամ, աղյուսակներ և անել եզրակացություններ: | Աշակերտը կարիք ունի օգնության՝ դիագրամ, աղյուսակներ լրացնելու և եզրակացություններ անելու մեջ: | Աշակերտը չի կարող լրացնել դիագրամ, աղյուսակներ և անել եզրակացություններ: |
| Աշակերտը գնահատում է իրադարձությունները, գիտակցում անցյալի իրականությունը և այն կապում արդիականության հետ: | Աշակերտը փորձում է գնահատել իրադարձությունները, գիտակցել անցյալի իրականությունը և այն կապել արդիականության հետ: | Աշակերտն օգնության կարիք ունի՝ իրադարձությունները գնահատելու, անցյալի իրականությունը գիտակցելու և այն արդիականության հետ կապելու հարցում: | Աշակերտը չի կարող գնահատել իրադարձությունները, գիտակցել անցյալի իրականությունը և այն կապել արդիականության հետ: |
| Աշակերտը վերլուծում է այս կամ այն իրադարձությունները հարուցող պատճառներն ու հետևանքները: | Աշակերտը փորձում է վերլուծել այս կամ այն իրադարձությունները հարուցող պատճառներն ու հետևանքները: | Աշակերտը կարիք ունի օգնության՝ այս կամ այն իրադարձությունները հարուցող պատճառներն ու հետևանքները վերլուծելու հարցում: | Աշակերտը չի կարող վերլուծել այս կամ այն իրադարձությունները հարուցող պատճառներն ու հետևանքները: |
| Աշակերտը զուգահեռներ է անցկացնում: | Աշակերտը փորձում է զուգահեռներ անցկացնել: | Աշակերտն օգնության կարիք ունի՝ զուգահեռներ անցկացնելու մեջ: | Աշակերտը չի կարող զուգահեռներ անցկացնել: |
| Աշակերտն արտահայտում է իր վերաբերմունքը և առաջարկում խնդրի լուծման այլընտրանքային ուղի: | Աշակերտը փորձում է արտահայտել իր վերաբերմունքը և առաջարկել խնդրի լուծման այլընտրանքային ուղի: | Աշակերտն օգնության կարիք ունի իր վերաբերմունքը արտահայտելու և խնդրի լուծման այլընտրանքային ուղի առաջարկելու հարցում: | Աշակերտը չի կարող արտահայտել իր վերաբերմունքը և առաջարկել խնդրի լուծման այլընտրանքային ուղի: |

## Գնահատման 10 միավորանոց համակարգ

| Միավորներ | Բնութագրիչներ |
|---|---|
| 1 | Չի կարող փոխանցել կարդացածի բովանդակությունը: Չի կարողանում աշխատել քարտեզի վրա: Չի կարող աշխատել աղյուսակների և այլ միջոցների վրա: Իրարից չի կարող տարբերել պատմական և աշխարհագրական ժամանակի միավորները: Դժվարանում է դատողություն անել պատմական անձանց մասին, չի կարող ուրիշի հետ համագործակցել: |
| 2 | Չի կարող փոխանցել բովանդակությունը: Դժվարանում է աշխատել քարտեզների և այլ վիզուալ միջոցների վրա (սխեմա, աղյուսակ և այլն): Դժվարանում է տարանջատել պատմական և աշխարհագրական ժամանակաշրջանները: Դժվարանում է բնութագրել հերոսներին և նրանց մասին դատողություն անել: Դժվարանում է համագործակցել: |
| 3 | Դժվարանում է փոխանցել կարդացածի բովանդակությունը: Առանց ուրիշների օգնության չի կարողանում աշխատել քարտեզների վրա: Դժվարանում է աշխատել աղյուսակների և սխեմաների վրա: Դժվարանում է դատողություն անել և միտքը ձևակերպել: Դժվարանում է զույգերով և խմբով աշխատել`չի կարող իր ներդրումն ունենալ: |
| 4 | Կարող է փոխանցել կարդացածի բովանդակությունը, սակայն նրան անհրաժեշտ է օգնություն` միտքը հասկանալի ձևակերպելու համար: Կարող է քարտեզի վրա ցույց տալ օբյեկտներ, սակայն թերություններով: Դժվարանում է դատողություն անել և որևէ մեկի կամ որևէ բան բնութագրել: Զույգով կամ խմբով աշխատելու ժամանակ կարող է ընդունել ուրիշի օգնությունը: |
| 5 | Հաճախ ինքնուրույն աշխատելու ցանկություն ունի: Կարող է հասկանալ կարդացածի բովանդակությունը: Կարողանում է գիտելիքն օգտագործել տարբեր իրավիճակներում: Թերություններով, սակայն կարող է վիզուալ միջոցների` քարտեզների, նկարազարդումների, դիագրամների վրա աշխատել: Կարող է համագործակցել, սակայն երբեմն ավելորդ ակտիվություն է ցուցաբերում և ինքնավստահ է: |
| 6 | Կարող է ինքնուրույն աշխատել տարբեր միջոցների և աղբյուրների վրա: Կարող է դատողություն անել, վերլուծել, ինչպես նաև` խմբով աշխատել: Թերություններ ունի` կապված բառապաշարի և տրամաբանական մտածողության հետ: |
| 7 | Համարյա միշտ տիրապետում է նյութին: Ինքնուրույն կարող է աշխատել կարդալու, գրելու և այլ ակտիվությունների վրա: Կարող է աշխատել տեղեկատվության տարբեր աղբյուրների վրա: |
| 8 | Ունի լավ խոսք: Կարող է սահուն ձևակերպել միտքը:Կարող է դատողություն անել փաստերի և իրադարձությունների մասին: Կարող է ինքնուրույն աշխատել: Ակտիվ է տնային և դասարանական աշխատանքների կատարման մեջ: Ազատ կարող է աշխատել քարտեզների վրա: Կարող է համագործակցել, սակայն երբեմն դժվարանում է ընդունել ուրիշի կարծիքը: |
| 9 | Լավ է մտածում: Ունի ստեղծագործական աշխատանքի կարողություն: Միշտ պատրաստ է ինքնուրույն ներգրավվել ցանկացած աշխատանքի կատարման մեջ: Կարող է համագործակցել, սակայն չունի առաջնորդի հատկություններ: |
| 10 | Լավ է մտածում: Ունի ստեղծագործական աշխատանքի կարողություն: Միշտ պատրաստ է աշխատելու համար: Ունի առաջնորդի առանձնահատուկ հատկանիշներ: Կարող է օգնել ուրիշի: |

### Շնորհանդեսի գնահատման աղյուսակ՝ խորագիր

Աշակերտներին յուրաքանչյուր չափանիշից շնորհվում է զրո կամ մեկ միավոր և վերջնական միավորը ստանալու համար հաշվվում է դրանց գումարը: Առավելագույն միավորն է տասը:

| | **Աշակերտի անունը, ազգանունը** | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հետաքրքիր ներածություն (խնդրի նույնականացում) | | | | | | | | | | |
| Հետազոտությունների/աշխատության ներկայացման կարողություն | | | | | | | | | | |
| Ստեղծագործական հմտություն | | | | | | | | | | |
| Խնդրի լուծման ուղիների առաջարկում | | | | | | | | | | |
| Թեմայի հասկանալի ներկայացում (տրամաբանական շղթա) | | | | | | | | | | |
| Խոսք (հստակություն, տեմբր) | | | | | | | | | | |
| Դիդակտիկ նյութերի օգտագործում | | | | | | | | | | |
| Հաղորդակցություն լսարանի հետ | | | | | | | | | | |
| Տեղեկությունների տիրապետման կարողություն (ադեկվատ հարց-պատասխան) | | | | | | | | | | |
| Ժամանակի սահմանաչափի պահպանում | | | | | | | | | | |
| Գումարը | | | | | | | | | | |

### Նախագծի գնահատման ընդհանրացված աղյուսակ՝ խորագիր

Առավելագույն ընդհանուր գումարը երեքի բաժանելով տեղի կունենա կուտակած միավորների տեղափոխում տասը միավորանոց գնահատման համակարգ

| | **Տարրական՝ 1 միավոր** | **Ընդունելի՝ 2 միավոր** | **Վարպետ՝ 3 միավոր** |
|---|---|---|---|
| **1.Նպատակ** | Լավ չի ընդգծված, հստակ չէ: | Կենտրոնացված է մեկ նպատակի վրա: | Լավ ընդգծված նպատակներ, պարզ հեշտորեն ընկալելի: |
| **2.Կազմակերպում** | Թույլ կազմակերպված, գաղափարների միջև չկա տրամաբանական շղթա, ինչը շփոթեցնում է ընթերցողին/ունկնդրին: | Գիտակցված է հաջորդականությունը, կազմակերպման նշաններով, որոշ անցումներ գաղափարների միջև պարզ են, որոշ անցումներ՝ անհասկանալի: | Լավ կազմակերպված ձևաչափ, տրամաբանական անցում մի գաղափարից մյուսին, կազմակերպվածությունն ավելացնում է նախագծի արդյունավետությունը: |
| **3.Բովանդա-կության կոռեկտություն** | Հաճախ են հանդիպում անհամապա-տասխանություն, սխալ տեղեկություններ: | Հիմնականում կոռեկտ է՝ որոշ անհամապատասխան կամ սխալ տեղեկատվությամբ: | Ամբողջովին կոռեկտ, փաստերը ճշգրիտ և հստակ: |
| **4.Լեզվական հստակություն** | Լեզվական առումով ոչ հստակ, հաճախակի սխալներով: | Լեզվական առումով հստակ, աննշան սխալներով: | Լեզվական առումով հստակ, պահպանված են կետադրության կանոնները: |

| | Տարրական՝ 1 միավոր | Ընդունելի՝ 2 միավոր | Վարպետ՝ 3 միավոր |
|---|---|---|---|
| **5. Հետազոտություն** | Հետազոտությունը ոչ հստակ է պլանավորած, օգտագործած աղբյուրները վստահելի չեն, վերլուծությունը մակերեսային է: | Հետազոտությունը պլանավորած է, սակայն խմբի ներուժն ամբողջությամբ չի օգտագործած, սահմանափակ քանակությամբ աղբյուրներ են օգտագործած, վերլուծությունն ընդունելի է: | Հետազոտությունը պլանավորած է, օգտագործած են բազմաթիվ աղբյուրներ, և վերլուծությունը խորն է: |
| **6.Դիդակտիկ նյութեր** | Դիդակտիկ նյութերը հաճախ բովանդակությանն անհամապատասխան են կամ խմբի կողմից չեն ստեղծված: | Դիդակտիկ նյութերի կապը բովանդակության հետ հստակ է, սակայն միապաղաղ է: | Բազմազան, բովանդակությանը համապատասխան, կոկիկ կատարած: |
| **7.Ստեղծագործականություն** | Փոքր ստեղծագործական ջանք խմբի կողմից: | Երբեմն երևում են խմբի օրիգինալ մտքերը, ինչն օգնում է նախագծի ավելի լավ ցուցադրմանը: | Երբեմն երևում են խմբի օրիգինալ մտքերը, նորությունը և յուրովի տեսլականը, ինչը նախագիծը հետաքրքիր է դարձնում: |
| **8.Միջառարկայական կապ** | Չի երևում խմբի տեղեկացվածությունը առարկաներից, հանդիպում ենք փաստերի ոչ ճշգրիտ մեկնաբանությունների: | Տեսակետները կապված են մեկ կամ երկու առարկայից ստացած գիտելիքի հետ: | Գլխավոր տեսակետները կապվում են տարբեր առարկաներից ստացած գիտելիքի հետ, ինչը մատնանշում է բազմաթիվ ուղղություններով խմբի տեղեկացված լինելը: |
| **9. Եզրակացություններ** | Եզրակացությունները չեն ձևակերպված: | Եզրակացությունները ձևակերպված են հետազոտությանը համապատասխան, սակայն հստակ չեն: | Եզրակացությունները նորույթ են (օրիգինալություն), զգացվում է տրամաբանական կապը հետազոտության հետ, դրանք հստակ են ձևակերպված: |
| **10. Շնորհանդես** | Արդյունավետորեն չի ներկայացված նախագծի էությունը, դժվարանում է միտքը ձևակերպել և պատասխաններ տալ, նպատակային չեն կիրառված դիդակտիկ նյութերը: | Ոչ հստակ է ձևակերպում նախագծի էությունը, կիրառում է դիդակտիկ նյութեր, պատասխանում է հարցերի մեծ մասին: | Հստակ է ձևակերպված նախագծի էությունը, խոսքը պարզ է՝ լսարանին հաշվարկված, բացված են հիմնական գաղափարները, կիրառում է դիդակտիկ նյութերը և պատասխանում բոլոր հարցերին: |

## Բանավեճի գնահատման աղյուսակ՝ խորագիր

| 1-3 | 4-5 | 6-7 | 8-10 |
|---|---|---|---|
| Աշակերտը դժվարանում է միտքն արտահայտել, ոչ համոզիչ է դատողություն անում: Շփոթված է և անկազմակերպ է խոսում: Հատկացված ժամանակից շուտ է ավարտում: | Փաստարկումներն անբավարար են: Հակադրվում է հակառակորդի դիրքորոշմանը, սակայն մակերեսորեն և կատարում է անկազմակերպ վերլուծություն: Փաստարկումը համոզիչ չէ: | Լավ ելույթ: Փաստարկումը բավարար է: Զեկուցողը լրիվ օգտագործում է ժամանակը, սակայն թերանում է համոզիչ լինելու հարցում: | Շատ լավ ելույթ: Համոզիչ փաստարկում: Վերլուծությունը, շնորհանդեսը, փաստարկները համոզիչ են: |

## Խմբային աշխատանքի գնահատման աղյուսակ՝ խորագիր

| Չափանիշ | Բարձր՝ 4 | Միջին՝ 3 | Միջինից ցածր՝ 2 | Ցածր՝ 1 |
|---|---|---|---|---|
| Խմբի կողմից նպատակի գիտակցում | Խումբը լավ է գիտակցել աշխատանքի նպատակը: | Խումբը գիտակցել է աշխատանքի նպատակը: | Խումբը մասամբ է գիտակցել աշխատանքի նպատակը: | Խումբը չի կարողացել գիտակցել աշխատանքի նպատակը: |
| Աշխատանքի կազմակերպում | Աշխատանքը լավ է կազմակերպված, խմբի անդամների միջև աշխատանքը ճիշտ է բաշխված: | Աշխատանքը լավ է կազմակերպված, սակայն խմբի անդամների միջև աշխատանքը անհամաչափ է բաշխված: | Աշխատանքը մասամբ է կազմակերպված, խմբի անդամների միջև աշխատանքը անհամաչափ է բաշխված: | Աշխատանքը կազմակերպված չէ, խմբի անդամների միջև աշխատանքը չի բաշխվել: |
| Փոխգործակ-ցության և մտքերի փոխանակման կարողություն | Ունեն լավագույն փոխգործակցության և կարծիքների փոխանակման կարողություն: | Ունեն լավ փոխգործակցության և կարծիքների փոխանակման կարողություն: | Մասամբ ունեն լավ փոխգործակցության և կարծիքների փոխանակման կարողություն: | Չունեն լսելու և կարծիքների փոխանակման կարողություն: |
| Համագործակ-ցություն | Խմբի բոլոր անդամներն ակտիվ էին, խմբի անդամների միջև դրական և գործնական հարաբերություններ էին: | Խմբի համարյա բոլոր անդամներն ակտիվ էին, խմբի անդամների միջև դրական և գործնական հարաբերություններ էին: | Խմբի մեծ մասը ակտիվ չէր, խմբի անդամների միջև հիմնականում պակաս էին դրական և գործնական հարաբերու-թյունները: | Խմբի մեծ մասը ակտիվ չէր, խմբի անդամների միջև չկային գործնական հարաբերու-թյուններ: |
| Ժամանակի սահմանաչափ | Լավագույնս պահպանում են ժամանակի սահմանաչափը: | Հիմնականում պահպանում են ժամանակի սահմանաչափը: | Դժվարանում են պահպանել ժամանակի սահմանաչափը: | Չեն կարող պահպանել ժամանակի սահմանաչափը: |

# 10. ԴԱՍԻ ՍՑԵՆԱՐՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասի տրված սցենարները ուսուցիչը կարող է հարմարեցնել աշակերտների հնարավորություններին և կարիքներին և անհրաժեշտության դեպքում՝ ձևափոխել դասի պլանը:

## ԲԱԺԻՆ 1. ԿԱԽԵԹԻ

| Դասի թեման | **1.1** Կախեթիի աշխարհագրական դիրքը և բնական պայմանները |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը ծանոթանում է Կախեթիի ֆիզիկա-աշխարհագրական բնութագրիչներին: Քարտեզի միջոցով սահմանում է Կախեթիի գտնվելու տեղը: |
| Համապատաս-խանությունը ԱՈՒՊ-ին | Հաս.գիտ.( II ) 3, Հաս.գիտ.( II) 4 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Դասը սկսվում է հարցով. ի՞նչ գիտեն Կախեթիի մասին (Մտավոր գրոհ): Ուսուցիչը գրատախտակին գրում է աշակերտների պատասխանները: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Ուսուցիչը խնդրում է Կախեթիի քարտեզի (էջ 10-11) օգնությամբ դուրս գրել Կախեթիի սահմանակից երկրամասերը և երկրները: (5 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Ուսուցիչն աշակերտներին խնդրում է ծանոթանալ դասագրքում տրված նկարազարդումներին (Աղբյուր 1,2,3) և արտահայտել իրենց ենթադրությունները Կախեթիի բնական-աշխարհագրական բնութագրիչների մասին: (5 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Խմբերը ծանոթանում են դասի տեքստին և լրացնում են աղյուսակը: (10 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Ուսուցիչն աշակերտներին խնդրում է արտահայտել կարծիք, թե ինչը կարող էր հարուցել սահմանի հաճախակի փոփոխություն Կախեթիում: (10 րոպե)<br>**Ակտիվություն 6.** Գնահատում (Զարգացնող)<br>**Ակտիվություն 7.** Տնային առաջադրանք. Գտնել տեղեկություններ Կախեթիում եղած օգտակար հանածոների մասին: |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը |
| Ռեսուրսներ | Դասագիրք, քարտեզ, գրատախտակ, կավիճ |
| Գնահատում | Զարգացնող, որոշող (ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր՝ աղյուսակ) |
| Նախապես ունեցած գիտելիքը | Հորիզոնի կողմերը, Քարտեզի ընթերցում պայմանական նշաններով |

Պլանավորված ակտիվությունները աշակերտներին կօգնեն ծանոթանալ Կախեթիի ֆիզիկական-աշխարհագրական բնութագրիչներին, անվանել Կախեթիի սահմանակից Վրաստանի երկրամասերը և երկրները: Տեքստի վերլուծության հիման վրա լրացնել աղյուսակ, որով տեղեկություններ կստանան Կախեթիի բնական ռեսուրսների մասին:

| Բնական ռեսուրս | Ինչի համար կարելի է այն օգտագործել |
|---|---|
| Կավ | |
| Մարմար | |
| Բուժիչ ցեխ | |
| Գաջ | |
| Ջերմային ջրեր | |

Ուսուցիչը տեղեկություններ է տրամադրում այն մասին, որ Կախեթիի սահմանը հաճախ էր փոխվում և աշակերտներին խնդրում է անվանել այս փոփոխությունների հնարավոր պատճառները (երկրի հզորությունը կամ, ընդհակառակը՝ թշնամու ներխուժումները և երկրի թուլությունը)

| | |
|---|---|
| Դասի թեման | 1.2. Բնակեցման տեսակները և բնակելի կառույցները Կախեթիում |
| Դասի նպատակը | Բնական պայմանների և ռեսուրսների ազդեցությունը կացարանների տեսակների վրա: |
| Համապատաս-խանությունը ԱՈՒՊ-ին | ( II) 1 ( II) 3 ( II) 15 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Ուսուցիչն աշակերտներին խնդրում է հիշել անցած նյութից, թե ինչ գործոններ էին ազդում բնակեցման տեսակների և բնակելի շինությունների վրա: Աշակերտների պատասխանները գրում է գրատախտակին: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Աշակերտները զույգերում ծանոթանում են տեղեկություններին բնակեցման տեսակների մասին և լրացնում են Վեննի դիագրամը. Հին և նոր գյուղը: (10 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Բաժանվում են խմբերի և աշխատում են բնակելի շինությունների մասին տեղեկության վրա, լրացնում են աղյուսակը. կացարանի տեսակը, շինանյութը, տնտեսական կառույցները, տնտեսության բնագավառները: Յուրաքանչյուր խումբ շնորհանդեսի տեսքով դասարանին ներկայացնում է իր աշխատությունը: (15 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Անհատապես ծանոթանան պատմական ավանդագրույցին Էրեկլե Բ-ի և հաշվենկատ գյուղացու մասին և ենթադրություններ արտահայտեն: (5 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում (5 րոպե)<br>**Ակտիվություն 6.** Տնային առաջադրանք. Գրել էսսե. «Իմ տեսած գյուղը»: |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը, խմբերով, անհատական |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ |
| Գնահատում | Խմբերում աշխատանքի գնահատման խորագիր՝ աղյուսակ |
| Նախապես ունեցած գիտելիքը | Արտաքին պայմանների ազդեցությունը բնակեցման տեսակների վրա: |

Առաջին ակտիվությունով աշակերտները կհիշեն բնական պայմանների, կլիմայի կամ աշխարհագրական բնութագրիչների ազդեցությունը բնակեցման տեսակների և բնակելի տների վրա:

Վեննի դիագրամը լրացնելը հին և նոր տների մասին, աշակերտներին հնարավորություն կտա ակներև կերպով տեսնել տարբերությունները:

Խմբային աշխատանքը բնակելի կառույցների մասին աշակերտներին հնարավորություն կտա տեղեկություններ ստանալ կացարանի տեսակի, շինանյութի, տնտեսական կառույցների, տնտեսության բնագավառների մասին, և նրանք լրացնում են աղյուսակը:

| Բնակելի տան տեսակ | Շինանյութ | Տնտեսական կառույց | Տնտեսության բնագավառներ |
|---|---|---|---|
| | | | |

| Դասի թեման | **1.3 Խաղողագործություն-գինեգործության ավանդույթները Կախեթիում** |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը ծանոթանում է տնտեսության բնագավառների, որոնք կապված են խաղողագործության հետ:<br>Աշակերտը վերլուծում է ֆիզիկական-աշխարհագրական միջավայրի ազդեցությունը տնտեսության զարգացման վրա:<br>Աշակերտը ծանոթանում է խաղողագործություն-գինեգործության զարգացման ավանդույթներին և դատողություն է անում նրա զարգացման հեռանկարների մասին: |
| Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին | ( II) 3 ( II) 6 ( II) 7 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Մինի դասախոսություն Կախեթիի ավանդույթների մասին: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Մտավոր գրոհ. Ինչ են պատրաստում խաղողից: Պատասխանները գրվում են գրատախտակի վրա: (5 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Տեքստի վերլուծություն: Աշակերտները ծանոթանում են տեղեկությունների խաղողի արտադրանքի և խաղողը պահելու կարգի մասին և լրացնում են աղյուսակ. Գիտեի, իմացա, ուզում եմ իմանալ: (15 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Շնորհանդես (10 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում (5 րոպե)<br>**Ակտիվություն 6.** Տնային առաջադրանք. Գտնել տեղեկություններ Կախեթիում տարածված խաղողի տեսակների մասին: |
| Գնահատումը | Ընթացիկ առաջադրանքի գնահատման չափանիշներ |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը, անհատական |

Մինի դասախոսություն խաղողագործության ավանդույթների մասին: Հնագույն վրացական ցեղերը խաղողագործության-գինեգործության առաջամատիկներ էին: Կարասը, որպես գինու անոթ, առաջինը վրացիներն են օգտագործել: Կախեթին հիմնականում գինու երկրամաս է, հնագույն օջախն է խաղողագործության, որի պատմությունը սկիզբ է առնում մեր թվարկությունից առաջ: Այս երկրամասում գրեթե 80 խաղողի տեսակ կա աճեցված: Բարձրագույն որակի են ինչպես կախեթական ավանդական կարգով պատրաստած գինին, այնպես էլ եվրոպական կարգով պատրաստած գինիները:

Ակտիվություն. «Գիտեի, իմացա, ուզում եմ իմանալ»-ը կօգնի աշակերտներին կազմակերպել գիտելիքը:

Կախեթիում տարածված խաղողի տեսակների մասին տեղեկություններ կարող եք գտնել կայքէջում՝ wineandwine.ge

| Դասի թեման | 1.4. Գինու մշակույթը Կախեթիում |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը ծանոթանում է գինեգործության զարգացման ավանդույթներին: |
| Համապատաս-խանությունը ԱՈՒՊ-ին | ( II ) 3 ( II ) 6 ( II ) 14 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Տեքստի վերլուծություն: Աշակերտները Ջիգսոու մեթոդով մշակում են դասագրքում տրված տեղեկատվությունը և շնորհանդեսի տեսքով դասարանի առջև ներկայացնում թեման. Գինու պատրաստման և պահման մշակույթը Կախեթիում: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Ուսուցիչը խնդրում է աշակերտներին արտահայտել իրենց ենթադրությունները, թե ինչ կգրեին այսօր եվրոպացիները գինու և գինու մշակույթի մասին, և ինչ դեր կարող է կատարել երկրի էկոնոմիկայում գինեգործության զարգացումը: (10 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Գնահատում (5 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Տնային առաջադրանք. Գտնել տեղեկություններ գինու արտահանման մասին: |
| Գնահատումը | Խմբային աշխատանքի գնահատման չափանիշ |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը, խմբերով |
| Ունեցած գիտելիքը | Տնտեսության բնագավառները և դրանց զարգացմանը նպաստող բնական-աշխարհագրական միջավայրը |

Դասը ծավալով ընդարձակ է, ուստի ցանկալի կլիներ տեղեկությունները մշակել Ջիգսոու մեթոդով (10 րոպե) և այնուհետև ներկայացնել: (15 րոպե) Երկրորդ ակտիվությունը կօգնի աշակերտների մոտ զարգացնել քննադատական մտածողության և փաստարկված դատողության կարողությունը:

| Դասի թեման | **1.5. Մշակութային հուշարձանները Կախեթիում** |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը ծանոթանում է Կախեթիում առկա մշակութային հուշարձաններին:<br>Աշակերտը դատողություն է անում երկրի զարգացման հարցում դրանց նշանակության մասին:<br>Աշակերտի մոտ հոգատար վերաբերմունք է զարգանում մշակութային ժառանգության նկատմամբ: |
| Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին | (II) 2 (II) 12 (II) 14 (II) 15 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Ուսուցիչը հարց է տալիս. Ի՞նչ տեղեկություն կարող են տրամադրել մեզ երկրի պատմության մասին մշակութային հուշարձանները: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Աշակերտները ծանոթանում են տեքստում առկա տեղեկություններին և լրացնում են իմաստային քարտեզը` Կախեթիի մշակութային հուշարձանները: Ակներև կտեսնեն նրա բազմազանությունը և տեղեկություններ կստանան այս հուշարձանների հետ կապված անձանց մասին (20 րոպե):<br>**Ակտիվություն 3.** Ուսուցիչը խնդրում է աշակերտներին արտահայտել իրենց կարծիքները, թե ինչու է անհրաժեշտ պահպանել մշակութային հուշարձանները և խնամքով վերաբերվել դրանց: (5 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Ընտրեն Կախեթիում գտնվող որևէ մշակութային հուշարձան, որը ցանկանում են տեսնել և հիմնավորեն իրենց ընտրությունը: (5 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում<br>**Ակտիվություն 6.** Տնային առաջադրանք. Կազմել վարքի կանոններ, որոնք պետք է պահպանեն մշակութային հուշարձանները դիտելու ժամանակ (Հիշեն IV դասարանի «Ես և հասարակությունը» դասագրքով սովորած կանոնները): |
| Գնահատումը | Ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, նկարազարդումներ |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը, խմբերով աշխատանք |
| Ունեցած գիտելիքը | Նախորդ տարի սովորած մշակութային ժառանգության հուշարձանները և դրանց նշանակության գիտակցում երկրի զարգացման մեջ: |

Դասը սկսվում է մշակութային ժառանգության հուշարձանների նշանակության վերլուծությամբ: Որպես ենթադրյալ պատասխաններ` կարող են անվանել. ինչպիսին էր երկրի զարգացման մակարդակը, ինչպիսի ճարտարապետական ոճ էր զարգացած, ինչ շինանյութ էին կիրառում և այլն:

Աշակերտները կծանոթանան տեքստին և դրանից հետո կլրացնեն իմաստային քարտեզը` Կախեթիի մշակութային հուշարձանները, ինչով ակներև կերպով կտեսնեն բազմազանությունը: Ինչպես նաև տեղեկություններ կստանան այս հուշարձանների հետ կապված պատմական անձանց մասին:

| Դասի թեման | **1.6. Տնտեսության բնագավառները Կախեթիում** |
| --- | --- |
| Դասի նպատակը | Աշակերտը ծանոթանում է Կախեթիում զարգացած տնտեսական բնագավառներին:<br>Պարզում է դրանց զարգացումը սահմանող գործոնները:<br>Վերլուծում է դրանց նշանակությունը երկրի համար: |
| Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին | (II)3 (II)5 (II)11 (II)13 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Ուսուցիչն աշակերտներին խնդրում է անցած նյութից հիշել, թե տնտեսության որ բնագավառներն են զարգացած Կախեթիում և արտահայտել ենթադրություններ՝ ֆիզիկական-աշխարհագրական պայմանները ուրիշ ո՞ր բնագավառների զարգացմանն են նպաստում: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Ուսուցիչն աշակերտներին բաժանում է խմբերի և յուրաքանչյուր խումբ մշակում է հետևյալ թեմաները. առաջին խումբ՝ Դաշտավարությունը Կախեթիում, երկրորդ խումբ՝ Անասնապահություն, երրորդ խումբ՝ Պանկիսցի քիստերը, չորրորդ խումբ՝ Արհեստագործությունը, հինգերորդ խումբ՝ Փոխադրամիջոցները: Տեղեկություններին ծանոթանալուց հետո խմբի անդամները շնորհանդեսի տեսքով դասարանին են ներկայացնում ստացած տեղեկությունները: (10 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Շնորհանդես (15 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Մինի-դասախոսություն տարերային երևույթների մասին (5 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Աշակերտները զույգերով մշակում են տեղեկությունը տարերային երևույթների դեմ պայքարի հին և նոր մեթոդների մասին: (5 րոպե)<br>**Ակտիվություն 6.** Աշակերտներն արտահայտում են իրենց կարծիքը տարերային երևույթները կանխելու ուղիների մասին:<br>**Ակտիվություն 7.** Գնահատում (2 րոպե)<br>**Ակտիվություն 8.** Տնային առաջադրանք. Խմբում պատրաստել պաստառ բնապահպանական միջոցառումների մասին: |
| Գնահատումը | Ընթացիկ առաջադրանքի գնահատման չափանիշներ |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, թերթեր |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը, խմբերով աշխատանք, զույգերով աշխատանք |
| Ունեցած գիտելիքը | Վրաստանի մյուս երկրամասերում զարգացած տնտեսության բնագավառները, տարերային երևույթները և դրանց դեմ պայքարի միջոցները, փոխօգնության ավանդույթները: |

Հիշելով Կախեթիի ֆիզիկական-աշխարհագրական պայմանները՝ թվարկում են տնտեսության բնագավառները, որոնք կարող էին զարգանալ Կախեթիում: Օրինակ՝ հողագործություն, դաշտավարություն, ոչխարաբուծություն և այլն: Դասում տրված են բազմազան տեղեկություններ և նման դեպքում գերադասելի է կիրառել խմբային աշխատանքի մեթոդը:

Մինի-դասախոսության տեսքով աշակերտներին ծանոթացրեք տեղեկություններ այն մասին, որ, բացի սովորական բնական երևույթներից (անձրև, ձյուն, չափավոր քամի), որոնք մարդուն չեն խանգարում ամենօրյա կյանքում, գոյություն ունեն այսպես կոչված տարերային բնական երևույթներ: Դրանք անսպասելիորեն վրա են հասնում գյուղերին, քաղաքներին, ավտոմոբիլային ճանապարհներին և երկաթուղային մայրուղիներին: Տարատեսակ վնասներ են հասցնում, քանդում տներ, ոչնչացնում ցանքերն ու բերքը, խափանում ճանապարհների վրա տեղաշարժը, իսկ երբեմն նաև մարդկային զոհերի պատճառ են դառնում:

Աշակերտներն արտահայտում են իրենց ենթադրությունները տարերային երևույթներից խուսափելու ուղիների մասին: Դրանով գիտակցում են նաև սեփական պատասխանատվությունը:

| Դասի թեման | **1.7. Կախեթիի պայքարը գոյատևման համար** |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը ծանոթանում է Վրաստանի պատմության նշանակալի փաստերի:<br>Աշակերտը վերլուծում է ներքին և արտաքին գործոնների ազդեցությունը երկրի զարգացման վրա: |
| Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին | (II)1 (II)2 (II)8 (II)9 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Մտավոր գրոհի միջոցով արտահայտեն իրենց կարծիքները, թե ինչը կարող է պատճառ լինել այս կամ այն երկրամասի՝ բնակչությունից դատարկվելու համար: Ենթադրյալ պատասխանները գրվում են գրատախտակի վրա: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Մինի-դասախոսություն Շահ Աբասի՝ Վրաստան արշավանքի մասին: (5 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Աշխատանք տեքստի վրա. Աղբյուրներ 5-6-ից դուրս գրել նախադասություններ, որոնք մատնանշում են կախեթցիների վիճակը իրանցիների ներխուժումից հետո, ծանոթանալ տեղեկությունների Բախտրիոնիի ապստամբության մասին և ենթադրություն արտահայտել՝ ինչ կլիներ, եթե տեղի չունենար Բախտրիոնիի ապստամբությունը, ծանոթանալ տեղեկությունների փերեիդանցի վրացիների մասին և գրավոր պատասխանել հարցին. Ինչպես կարողացան փերեիդանցի վրացիները պահպանել իրենց ազգությունը: (20 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Գնահատում (5 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Տնային առաջադրանք. Գտնել տեղեկություններ Վրաստանում փախստականների վիճակի և խնդիրների մասին և հայթայթած նյութը ներկայացնել դասարանին: |
| Գնահատումը | Ընթացիկ աշխատանքի գնահատման խորագիր |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, թերթեր |
| Դասարանական մենեջմենթը | Անհատական, ամբողջ դասարանը |
| Ունեցած գիտելիքը | Տեղեկություններ բնակչության միգրացիայի հնարավոր պատճառների մասին |

Դասը սկսվում է մտավոր գրոհով. Ինչը կարող է այս կամ այն երկրամասի՝ բնակչությունից դատարկվելու պատճառ դառնալ: Ենթադրյալ պատասխաններ՝ թշնամու ներխուժումը, բռնի վերաբնակեցումը, տարերային երևույթները, բնական աղետները:

Մինի-դասախոսություն Շահ Աբասի՝ Վրաստան արշավանքների մասին: Աշակերտներին պատմեք այն մասին, որ 1614-1617 թվականներին Շահ Աբաս Ա-ն չորս անգամ արշավեց Քարթլ-Կախեթի: Միայն մեկ արշավանքի ժամանակ Կախեթիից 200 000 մարդ վերաբնակեցրին Իրանի ոչ բերրի տարածքում՝ Փերեիդանում: Ներխուժումների հետևանքով սկսվեց թուրքմանների բնակեցում բնակչությունից դատարկված Իորիի և Ալազանիի բերրի դաշտային տարածքներում: Չնայած այս արշավանքներին՝ Շահ Աբասը չկարողացավ ենթարկել Արևելյան Վրաստանը: Վրացիները հերոսաբար դիմադրում էին թշնամուն: 1625 թվականին Գիորգի Սաակաձեի հակաիրանական ապստամբության հետևանքով հնարավոր դարձավ ազատագրել Քարթլ-Կախեթին և միավորել Թեյմուրազ Ա-ի թագավորությամբ:

Բախտրիոնիի ապստամբության մասին քննարկումը կզարգացնի նրանց ինքնուրույն մտածողությունը և խնդրի գիտակցման, քննադատական վերլուծության կարողությունը: Արտահայտում են իրենց կարծիքները փերեիդանցի վրացիների մասին: Կգիտակցեն, թե ինչ նշանակություն ուներ լեզվի պահպանումը վերաբնակեցված վրացիների շրջանում:

Փախստականների այսօրվա վիճակի մասին օգտվեն տարբեր աղբյուրներից. համացանցային ռեսուրսներ, բանավոր պատմություններ, սոցիալական ցանց:

| Դասի թեման | 1.8. Կախեթիի բնության տեսարժան վայրերը |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը ծանոթանում է Կախեթիի տեսարժան վայրերին:<br>Աշակերտը դատողություն է անում բնության պահպանության անհրաժեշտության մասին:<br>Աշակերտը վերլուծում է բնապահպանական խնդիրները: |
| Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին | (II)3 (II)11 (II)12 (II)13 (II)14 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Մինի-դասախոսություն Կախեթիի բնության տեսարժան վայրերի, այդ թվում՝ պահպանված տարածքների մասին: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Տեքստի վերլուծություն: Աշակերտները ծանոթանում են տեքստին և գրում համառոտ շարադրություն. «Ինչու պետք է պահպանենք բնությունը»: (15 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Կատարված առաջադրանքը ներկայացնում է դասարանին: (15 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Գնահատում (2 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Տնային առաջադրանք. Մտածել նշանաբան բնապահպանական խնդիրների մասին: |
| Գնահատումը | Ընթացիկ առաջադրանքի գնահատման չափանիշներ |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը, անհատական աշխատանք |
| Ունեցած գիտելիքը | Կախեթիի բնական և սոցիալ-մշակութային բնութագրիչները |

Մինի-դասախոսության միջոցով ուսուցիչը տեղեկություններ կտրամադրի ռեկրեացիոն ռեսուրսների մասին: Աշակերտներին բաժանում է երկու խմբի. բնական-ռեկրեացիոն և մշակութային-պատմական ռեսուրսների: Կախեթին հարուստ է երկու տեսակի ռեսուրսներով: Մշակութային-պատմական ռեսուրսների մասին աշակերտներն արդեն ունեն տեղեկություններ նախորդ գլուխներից: Ինչ վերաբերում է բնական-ռեկրեացիոն ռեսուրսներին, դրանց շարքին են դասվում ծովերի, լճերի, գետերի ափերը, անտառները, լեռները, ազգային պարկերը, արգելոցները: Այս առումով առանձնանում են Լագոդեխիի և Վաշլովանիի արգելոցները: Զբոսաշրջիկներին միշտ հրապուրում են այնպիսի երկրները, որտեղ իրար են միածուլված հանգստանալու համար նպաստավոր բնական պայմանները և պատմամշակութային տեսարժան վայրերը:

## Լրացուցիչ տեղեկություններ

**Խորագիր. Սա հետաքրքիր է**

Վաշլովանիի արգելոցի անվանումը կապված է այստեղ տարածված բթատերև պիստակենու հետ: Պիստակենիները հեռվից նման են խնձորենիների, և դա է պատճառը, որ այս վայրն անվանել են «Վաշլովանի» («վաշլի» - խնձոր):

Վաշլովանին երբեմն վրացական սավաննա են կոչում: Արգելոցի բուսականությունը տեսքով սավաննայի բուսականություն է հիշեցնում, սակայն նրա հետ ոչ մի ընդհանուր բան չունի բույսերի կազմով:

Վաշլովանիի պահպանված տարածքին է պատկանում Ալազանիի մարգագետնային բնության հուշարձանը:

Սա միակ վայրն է Վրաստանում, որտեղ աճում են վայրի ընկուզենիներ: Այդ պատճառով էլ անվանում են նաև «Ընկույզի ծոց»:

Վաշլովանիի պահպանված տարածքների կազմի մեջ է մտնում Արծիվխս կիրճը: Սա կրաքարային ժայռերում կտրված խնձահովիտ է: Այստեղ աճում են ոչնչացման վտանգի տակ գտնվող հազվադեպ բույսեր, ինչպիսին է, օրինակ՝ կախեթական զանգակը:

**Լագոդեխիի պահպանված տարածքները** ներառում են Լագոդեխիի արգելոցը և արգելավայրը: Արգելոցը ստեղծվել է 1912 թվականին և առաջին պահպանված տարածքն է Վրաստանում: Այստեղ

տարածված են շատ էնդեմիկ բույսեր: Կենդանիներից այստեղ ապրում են Վրաստանում արդեն կտրուկ նվազած տեսակներ՝ լեռնային այծը, եղնիկը, քարայծը, այծյամը, արջը, սովորական լուսանը, ցախաքլորը, որն առաջին անգամ այստեղ են նկարագրել:

Կախեթիում, Ախմետայի շրջանում են գտնվում Բածարա-Բաբանեուրիի պահպանված տարածքները, որոնք ոչնչացման եզրին գտնվող բույսերի՝ հատապտղային կենու և ձելկովայի պաշտպանության նպատակով են ստեղծվել:

Համաձայն լեգենդի, հատապտղային կենու՝ ութխովարիի անունը կապված է Թամար թագուհու անվան հետ: Ինչպես երևում է, այս ծառն այնքան թանկարժեք բույս էր համարվում, որ նրա հատման-չհատման հարցը ինքը թագավորն էր որոշում, և քանի որ թագավորի կամքն անկոտրում էր, այն անվանեցին «ութխովարի»՝ չխնդրվող: Պետերբուրգում, Էրմիտաժի պատկերասրահի որոշ սրահների հատակը վրացական «ութխովարիով» է զարդարված:

Հին ժամանակներում հատապտղային կենուց սնդուկ էին պատրաստում, ինչի մեջ դասավորում էին նորահարսի օժիտը:

**Խաղողաքաղը և ծիսակարգերը**

Իմերեթիում խաղողը հավաքելուց հետո խաղողի այգում աքլոր էին մորթում: Մարմնեղ երեխայի էին գլորում, որպեսզի ապագայում այսպես ծանր ողկույզներ աճեին:

Քարթլիում խաղողաքաղից առաջ աղոթատեղում այծ, ոչխար կամ աքլոր էին մատաղ անում: Սեղան էին բացում խաղողի այգում, իսկ առաջինը քաղած մի քանի ողկույզանոց խաղողի ոստը նվիրում էին աստվածությանը:

Ռաճայում խաղողը չէին սկսում հավաքել, քանի դեռ ցողը չէր չորացել նրա վրա, քանի որ խաղողի հետ ջուր է գնում, և գինին փափուկ է ստացվում:

Երբ Սամեգրելոյում խաղող էին հավաքում, իսկական տոն էր կազմակերպվում: Ընտանիքի ավագը շալակում էր երեխային և տանում թառմային խաղողի մոտ, օրհնում էր՝ դու էլ այսպես կքվիր խաղողի ողկույզներից, ինչպես ես եմ բեռի տակ կքված:

Կախեթիում խաղողաքաղից հետո ամենածանրաքաշ տիկնոջն էին գլորում խաղողի այգում, որպեսզի հաջորդ տարվա բերքը առատ լիներ:

**ՅՈՒՆԵՍԿՕ**-ն կարասի գինի քաշելու հնագույն վրացական ավանդական մեթոդին մշակութային հուշարձանի կարգավիճակ է շնորհել:

**Դավիթ Գարեջիի վանքը** VI դարում ասորի հայրերից մեկի՝ Դավիթի հիմնադրած վանական համալիրն է: Այստեղի խիստ բնական պայմանները համապատասխան էին վանականների ճգնավորական կյանքին: Նույնիսկ ջուրը սարսափելի դառը համ ուներ: Համաձայն ավանդազրույցի, Հայր Դավիթի աղոթքով ջուրը դարձավ քաղցրահամ և խմելու համար պիտանի: Այս աղբյուրն անվանեցին «Դավիթի արտասուքներ»: Չնայած բազմաթիվ ավերածություններին, վանական կյանքը Դավիթ Գարեջիում մինչև XIX դարի վերջը չի դադարել: Հայտնի է, որ Շահ Աբասը XVII դարում ոչնչացրել է այստեղ ապրող բոլոր վանականներին:

**Կախեթին** հայրենիքի բազմաթիվ նվիրյալ զավակներ է տվել: Ղվարելին Իլյա Ճավճավաձեի հայրենի անկյունն է: Թելավիում է մեծ արվեստի հետ շփվել անվանի նկարչուհի Էլենե Ախվլեդիանին: Կախեթիից էին վրացական թատրոնի անվանի ռեժիսորներ Կոտե Մարջանիշվիլին և Սանդրո Ախմետելին: Սագարեջոյի Պատարձեուլի գյուղից էր բանաստեղծ Գիորգի Լեոնիձեն, Կարդենախիից՝ Իոսեբ Նոնեշվիլին, Խաշմիից՝ Ռեզո Ինանիշվիլին: Սիղնաղիում է ծնվել անվանի վրաց երգիչ Վանո Սարաջիշվիլին, ում անունն է այսօր կրում Թբիլիսիի կոնսերվատորիան:

**Քաղաք Ղվարելին** կառուցված է Բուրսա և Դուրուջա գետերի ափերին: Ղվարելիի մունիցիպալիտե-տում են գտնվում հին թագավորանիստ քաղաք Գրեմին, Նեկրեսիի վանքը և երկու գեղեցկագույն լճեր՝ Իլյայի և Ղվարելիի լճերը: Ղվարելիի մոտակայքում է գտնվում նաև Լոպատա լիճը: Դրանք երեքն էլ նշանակալի զբոսաշրջական համալիրներ են:

Վրացական բանահյուսության մարգարիտներ են կախեթական ժողովրդական երգերը՝ «Մրավալժամիերի», «Դաիգվիանես», «Բերիկացի վար», «Ուրմուլի», իսկ «Չակրուլո» երգը 1977 թվականին ՆԱՍԱ-ն ուղարկեց տիեզերք:

## ԲԱԺԻՆ 2. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ

| **Դասի թեման** | **2.4. Արևելյան Վրաստանի լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը և բնությունը** |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը կվերլուծի լեռան՝ որպես բնական տարածաշրջանի նշանակությունը Վրաստանի համար: |
| Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին | (II)3 (II)6 (II)14 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Աշխատանք տեքստի վրա. Աշակերտները խմբերում մշակում են դասագրքի տեքստը: (10 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Աշակերտները կազմում են մեծ և փոքր հարցեր տեքստից: (10 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Պատասխաններ հարցերին (10 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Քննարկում. Լեռանն է ավելի անհրաժեշտ հարթավայրը, թե՞ հարթավայրին՝ լեռը: (5 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում<br>**Ակտիվություն 6.** Տնային առաջադրանք |
| Գնահատումը | Քննարկման գնահատման խորագիր |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, թերթեր |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը, զույգեր |
| Ունեցած գիտելիքը | Արևելյան Վրաստանի լեռնաշխարհի պատմա-ազգագրական երկրամասերը |

Երաշխավորություն

Բարդ և պարզ հարցեր տալու ռազմավարությունը ենթադրում է աղյուսակի լրացում հետևյալ կարգով.

| Բարդ հարցեր | Պարզ հարցեր |
|---|---|
| Այս վանդակում աշակերտները պետք է գրեն այնպիսի բաց հարցեր, որոնք պահանջում են խորը և ընդարձակված պատասխան: | Այս վանդակում աշակերտները պետք է գրեն այնպիսի հարցեր, որոնք պահանջում են միանշանակ պատասխան: |

| Դասի թեման | **2.5.Բնակեցման տեսակները և հիմնական տնտեսական գործունեությունը լեռներում** |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը ծանոթանա լեռնային տարածաշրջանի տնտեսության զարգացած բնագավառներին:<br>Աշակերտը դատողություն անի լեռնային գյուղի առանձնահատկությունների մասին և բացատրի դրանց պատճառը: |
| Համապատասխա-նությունը ԱՈՒԳ-ին | (II)3 (II)5 (II)6 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Իմաստային քարտեզ. Ինչ առանձնահատկություններով կարող է աչքի ընկնել լեռնային գյուղը, և ասեք հնարավոր պատճառները: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Աշխատանք աղբյուրի վրա. Նկարագրեն ինչ է արտացոլված Աղբյուր 2-ում և պատասխանեն առաջադրանքի հարցերին: (10 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Աշխատանք տեքստի վրա. Ծանոթանան տեքստին տնտեսության բնագավառների զարգացման մասին և լրացնեն աղյուսակը. մի սյունակում Վրաստանի լեռնային երկրամասերը, երկրորդ սյունակում՝ տնտեսության բնագավառները: (10 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Գնահատում (5 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Տնային առաջադրանք. Գրեն ակնարկ «Պե՞տք է պահպանվեն արդյոք գյուղում ավանդական տնտեսության բնագավառները» թեմայով: |
| Գնահատումը | Ընթացիկ առաջադրանքի գնահատման չափանիշներ |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը, խմբեր |
| Ունեցած գիտելիքը | Լեռնաշխարհի ֆիզիկա-աշխարհագրական պայմանները |

## Լրացուցիչ տեղեկություններ

(Արևելյան Վրաստանի լեռնաշխարհը)

**Երդումնեղբայրանալու** կարգը Վրաստանի Փշավ-Խևսուրեթիից է տարածվել: Եղբայրության երդում տալու երկու կարգ է գոյություն ունեցել: Ասում են՝ եղբայրացողները աջ ձեռքի ցուցամատը դանակով կտրում էին, իրար կպցնում, խառնում էին իրենց արյուններն ու եղբայր էին համարվում: Համաձայն երկրորդ կարգի, ղանծին (եղջյուր՝ ըմպելիքի համար) լցնում էին օղիով, մեջը գցում որևէ արծաթյա զարդ, հերթով օրհնանք արտաբերում և միմյանց եղբայրություն երդվում: Այլ կերպ դրանց անվանում էին փիցվերխլնաճամեբի («փիցի» - երդում, «վերցխլի» - արծաթ, «նաճամի» - կերած):

**Ավանդազրույց Գուդամաղարիի մասին.** Հարսանիք հյուր գնացած խնամիների շքախմբից մեկը մնացել է առանց ձիու: Ճիշտ է, մնացած բոլորը ձիով են եղել, սակայն խուրջին չեն ունեցել: Տանտերը խնամիների համար նվերներ է պատրաստել և այս առանց ձիու մարդու շալակն է տվել: Հյուրը ճանապարհին շատ է հոգնել, պառկել է մի ծառի տակ և քնել: Խնամիները ճանապարհին որ քաղցածանում են, ուտել-խմել են ցանկանում, սկսում են փնտրել այդ մարդուն՝ « գուդա»-ով (խուրջինով) «մաղարի»-ին (խնամուն): Գտել են նրան, թե՝ ոչ, ոչ ոք չգիտի, իսկ երկրամասի անվանումը այստեղից էլ մնացել է՝ Գուդամաղարի:

**Մղինվարծվերիի** վրա է գտնվում Բեթլեմի քարանձավը: Այն 1948 թվականին է հետազոտվել վրաց լեռնագնաց կնոջ՝ Ալեքսանդրա Ջափարիձեի կողմից:

**Երեք հարյուր արագվեցի.** 1795 թվականի սեպտեմբերի 11-ին Կրծանիսիի ճակատամարտում հերոսաբար զոհված մարտիկների ջոկատ, որը բաղկացած էր երեք հարյուր փշավ-խևսուր և արագվիսպիրցի գյուղացիներից: Պատմում են, թե նրանք ճակատամարտից առաջ իրար երդում են տվել, որ կամ հաղթելու են, կամ էլ մարտի դաշտում կընկնեն բոլորը, ինչն էլ իրականություն է դարձել:

Ճակատամարտից 100 տարի էր անցել, երբ սրբերի շարքը դասված կաթողիկոս-պատրիարք Կիրիոնը նշեց հերոսաբար զոհված 300 արագվեցիների հիշատակը և այնտեղ գտնվող Սուրբ Նիկոլոզի տաճարում հատուկ ժամերգություն կատարեց, իսկ այնուհետև Թբիլիսիի հոգևորականությունը լայն հասարակայնության հետ Կրծանիսիի ճակատամարտի դաշտում ընկած հերոսների հոգու հանգստության համար մեծ պատարագ մատուցեց: Վրացի հայրենասերները, Իլյա Ճավճավաձեի ղեկավարությամբ, այս օրը վերածել են մեծագույն տոնի: «Այս սուրբ վայրում մենք պետք է դնենք հավերժ վառվող կանթեղներ, որպեսզի յուրաքանչյուր անցորդ հիշի 300 արագվեցիներին և այն հերոսներին, ովքեր զոհվեցին հայրենիքի ազատության համար», - այս բառերն ասել է Վրաստանի կաթողիկոս-պատրիարքն դեռ 2008 թվականին, երբ Վրաստանի եկեղեցին 300 արագվեցիներին սրբերի շարքն է դասել, երբ սահմանվել է մեր հերոսական մարտական պատմության տոնը և հաստատվել այն՝ որպես ավանդույթ:

**Արշավի կանոնները**

1) Պետք է լավ հասկանանք այն դժվարությունները, որոնց կհանդիպենք ճանապարհին (քայլել վերելքներով, անցնել փշոտ թփերով, մագլցել լեռների և ժայռերի վրա, անցնել փոքրիկ գետերը և այլն):
2) Գալ հատուկ հագուստով (բոթասներ կամ կեդիներ, ծմռանը՝ «բատինկաներ», անդրավարտիք և վերնաշապիկ, որը չենք ափսոսա, որ պատռվի):
3) Բերել կռնակապայուսակ:
4) Ցանկալի է՝ չուշանալ սահմանված ժամանակից:
5) Արշավի ժամանակ խմբում պետք է տիրի հարգանք և փոխաջակցություն:
6) Խմբի անդամները պարտավոր են ենթարկվել խմբի ղեկավարին, ինչպես նաև՝ ավելի փորձված անձանց:
7) Անթույլատրելի է երթուղուց ինքնակամ դուրս գալը (եթե որևէ արտակարգ իրավիճակ չի ստեղծվել), սակայն կարելի է փոքր ուղղումներ անել:
8) Ուշադիր պետք է լինենք այնպիսի իրերի նկատմամբ, որոնք դյուրավառ են, կարող են հրկիզվել:
9) Չթողնեք աղբն այնտեղ, ուր կայցելեք: Հիշեք՝ այդ վայր ուրիշն էլ պետք է այցելի:
Երաշխավորություն. Աշակերտներին ծանոթացրե՛ք արշավի կանոնները, խնդրե՛ք լրացնել կամ փոփոխել կանոնները:

**Աստծո 10 պատվիրանները**

**1.** «Ե՛ս եմ քո Տեր Աստվածը: Ինձանից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար:
**2.** Վերևում՝ երկնքում, ներքևում՝ երկրի վրա, և երկրի խորքի ջրերի մեջ եղած որևէ բանի նմանությամբ քեզ կուռքեր չպիտի կերտես: Չպիտի երկրպագես ու չպիտի պաշտես դրանց:
**3.** Քո Տեր Աստծու անունը զուր տեղը չպիտի արտասանես:
**4.** Հիշի՛ր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այն: Վեց օր պիտի աշխատես և պիտի կատարես քո բոլոր գործերը: Յոթերորդ օրը քո Տեր Աստծու շաբաթ օրն է: Այդ օրը դու ոչ մի գործ չպիտի անես:
**5.** Պատվի՛ր քո հորն ու քո մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ:
**6.** Մի՛ սպանիր:
**7.** Մի՛ շնացիր:
**8.** Մի՛ գողացիր:
**9.** Քո հարևանի դեմ սուտ վկայություն մի՛ տուր:
**10.** Ո՛չ քո մերձավորի տան, ո՛չ նրա ագարակի վրա աչք մի՛ ունեցիր: Ո՛չ քո մերձավորի կնոջ վրա, ո՛չ նրա ծառայի վրա, ո՛չ նրա աղախնու վրա, ո՛չ նրա եզան վրա, ո՛չ նրա էշի վրա, ո՛չ նրա անասունի վրա, ո՛չ այն ամենի վրա, ինչ քո մերձավորինն է, աչք մի՛ ունեցիր»:

## ԲԱԺԻՆ 3. ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻ

| Դասի թեման | 3.2. Սամցխե-Ջավախեթիի մշակութային ժառանգությունը |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը ծանոթանում է Սամցխե-Ջավախեթիի մշակութային ժառանգության հուշարձաններին:<br>Աշակերտը որոշում է Սամցխե-Ջավախեթիի տեղը Վրաստանի մշակույթի և պատմության զարգացման մեջ: |
| **Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին** | (II)1 (II)3 (II)4 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Ուսուցիչը ցույց է տալիս Վարձիայի և Ռաբաթի նկարազարդումները և խնդրում աշակերտներին գուշակել, թե որ հուշարձանների մասին է խոսքը: (2 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Մինի-դասախոսություն Սամցխե-Ջավախեթիի մշակութային ժառանգության մասին:<br>**Ակտիվություն 3.** Տեքստի վերլուծություն: Աշակերտները ծանոթանում են դասագրքի տեքստին և լրացնում աղյուսակը. Գիտեի, իմացա, ուզում եմ իմանալ: (15 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Կատարված առաջադրանքի շնորհանդես (10 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում (5 րոպե)<br>**Ակտիվություն 6.** Գտնեն լրացուցիչ տեղեկություններ այն հարցի շուրջ, որը հայտնվել է նրանց՝ Ուզում եմ իմանալ սյունակում: |
| **Գնահատումը** | Ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, լուսանկարներ-նկարազարդումներ |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը, անհատապես |
| **Ունեցած գիտելիքը** | Սամցխե-Ջավախեթիի աշխարհագրական դիրքը |

**Մինի դասախոսություն Սամցխե-Ջավախեթիի մշակութային ժառանգության մասին**

Երբ խոսում ենք Սամցխե-Ջավախեթիի մասին, առաջինը, հավանաբար, ժայռափոր քաղաք Վարձիան ենք հիշում: Վարձիայի վանական համալիրը գտնվում է Ասպինձայի մունիցիպալիտետում, Քուռ գետի աջ ափին: Բնակավայրը Թամարի գահակալության շրջանում են օծել: Վարձիայի հետ բազմաթիվ լեգենդներ են կապված: Ասում են՝ Գիորգի թագավորը մեծատունների հետ այս վայրեր որսի է եկել, նրա հետ է եղել նաև իր դուստրը: Որսով զբաղված թագավորը և նրա ուղեկիցները այլևս ուշադրություն չեն դարձրել Թամարին, և խաղով տարված երեխան անհետացել է ինչ-որ քարանձավում: Որսը դադարեցվել է: Վախեցած որսորդներն այս ու այն կողմ են ընկել և ձայն տվել Թամարին: Որսորդներից մեկի ձայնը լսում է ապագա թագուհին և բացականչում. «Աքա վար, ձիա՛» (Այստեղ եմ, քեռի՛): Դրանից հետո այդ վայրը կոչել են Վարձիա: Քուռ գետի կիրճի մի բարձր ժայռի մոտ սկսել են ժայռը հատել: Ասում են նաև, որ թագավորի հրամանով օրը մեկ սենյակ էր փորվում: Շինարարները 365 սենյակ են փորել ժայռի մեջ, և շինարարությունը մեկ տարում ավարտվել է:

Ադիգենիի մունիցիպալիտետում է գտնվում Զարզմայի վանքը: Նախնական շինությունը չի հասել մինչև մեր օրեր: Ներկայիս տաճարը և զանգակատունը կառուցվել են 14-րդ դարում, Սամցխեի կառավարիչ Բեքա Մանդատուրթուխուցեսիի կողմից:

Ախալցիխեի շրջանում, Ղրելի գյուղի մերձակայքում է գտնվում Սափարա վանքը: Համալիրի ամենահին շինությունը Աստվածամոր ննջման միանավ եկեղեցին է:

Վրացական մշակույթի կարևորագույն օջախ է Ածղուրիի բերդը: Հին աղբյուրներում հիշատակվում է՝ որպես Ածղվարի: Վրաստանին հարավից մոտեցող թշնամու դեմ Ածղուրիի բերդը կանգնած էր՝ որպես հավատարիմ պահապան: Ջավախեթիում է գտնվում Խերթվիսիի բերդը: Այն հնագույն ժամանակներին է պատկանում և հիշատակվում է՝ որպես Վրաստանի առաջին քաղաքներից մեկը:

Ռաբաթի բերդը գտնվում է Ախալցիխեում, Փոցխովի գետի աջ ափին: Բերդի պատմությունը սկիզբ է առնում 9-րդ դարից: 16-րդ դարում Ախալցիխեի մերձակայքը գրավում է Օսմանյան կայսրությունը և սկսում զանգվածային մահմեդականացումը: Համալիրի մեջ գտնվող մզկիթն ու մեդրեսեն օսմանյան տիրապետության ժամանակներին են պատկանում: 1828-1829 թվականների ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Ախալցիխեն ռուսները գրավեցին:

| Դասի թեման | **3.3. Սամցխե-Ջավախեթիի բնակչության բազմազանությունը** |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը ծանոթանում է Սամցխե-Ջավախեթիի բնակչության ազգային և կրոնական կազմին, դատողություն անում մշակութային-կրոնական բազմազանության մասին: |
| Համապատասխա-նությունը ԱՌԻՊ-ին | (II)1 (II)2 (II)12 (II)13 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Մինի-դասախոսություն Սամցխեի բնակչության ազգային և կրոնական բազմազանության մասին: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Ծանոթանան դասագրքի տեքստին և վերլուծեն կրոնական և էթնիկ փոփոխությունների հետևանքները: (10 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Ուսուցիչն աշակերտներին տալիս է հետևյալ տիպի առաջադրանք. Պատկերացրեք, որ ակնարկ եք պատրաստում Սամցխե-Ջավախեթիի մասին: Ո՞ր փաստը և իրադարձությունը կօգտագործեիք: (5 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Գնահատում (5 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Տնային առաջադրանք. Պատրաստել ուրվանկար՝ «Սամցխեի բնակչի մեկ օրը» վերնագրով: |
| Գնահատումը | Ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, թերթեր |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը, անհատապես |
| Ունեցած գիտելիքը | Էթնիկապես բազմազգ երկրամաս՝ Քարթլի |

## Մինի-դասախոսություն

Սամցխեի անվանումը գալիս է հարավային վրացական ցեղախմբի՝ մեսխերի անունից (մեսխ – Սամեսխե - Սամցխե): Մ.թ.ա. IV դարից Սամցխե-Ջավախեթին նորաստեղծ արևելյան վրացական պետության՝ Իբերիայի (Քարթլիի) թագավորության կազմի մեջ էր մտնում: Այս երկրամասը կոչվում էր նաև «Զեմո (Վերին) Քարթլի», քանի որ տարածաշրջանը Քարթլիի գլխավոր Քուռ գետի ավազանն էր ընդգրկում: Մ.թ. VIII-X դարերում Սամցխե-Ջավախեթին պատմական Հարավ-արևմտյան Վրաստանում ստեղծված Տաո-Կլարջեթիի (նույն «Վրացիների թագավորության») հյուսիսային գավառ էր հանդիսանում: Միասնական հզոր վրացական ֆեոդալական պետության գոյության ժամանակաշրջանում (XI-XIII դդ.) Սամցխե-Ջավախեթիում վրացական մշակույթի հզոր օջախ ձևավորվեց: Հաջորդ ժամանակաշրջանում Սամցխե-Ջավախեթին վերածվեց տարբեր զավթիչների ներխուժման օբյեկտի: Այս երկրամասը մեծ վնասներ կրեց դեռ՝ մոնղոլների, այնուհետև իրանցիների և օսմանցիների հարձակումների հետևանքով:

XV-XVI դարերում Վրաստանի միասնական թագավորության մասնատումից հետո, Սամցխե-Ջավախեթին անկախ վրացական կառավարչության՝ Սամցխե-Աթաբագության կազմում է: XVI դարում Սամցխե-Աթաբագությունը զավթվեց օսմանցիների կողմից, ինչից հետո Սամցխե-Ջավախեթին այստեղ ստեղծված «Գուրջիստանի վիլայեթի» («Վրաստանի մարզ») մեջ միավորեցին և այն մի փոքր ուշ կոչվեց Ախալցիխեի փաշայություն: Այս ժամանակվանից, ելնելով Օսմանյան կայսրության

սոցիալ-տնտեսական քաղաքականությունից, սկսվում է Սամցխե-Ջավախեթիի բնակչության բռնի մահմեդականացումը: Վրացիների մեծ մասն աստիճանաբար մահմեդականացավ, մի մասը հարևան Քարթլիի և Իմերեթիի թագավորություններում պատսպարվեց, իսկ մի փոքր մասը քրիստոնեության պահպանման նպատակով ուղղափառությունից կաթոլիկ հավատի փոխվեց: 1828-1829 թվականների և հաջորդ շրջանի ռուս-թուրքական պատերազմների (1853-56, 1877-78) հետևանքով Սամցխե-Ջավախեթին հայտնվեց Ռուսական կայսրության կազմի մեջ: Այս պատերազմներում, մասնավորապես Անդրկովկասյան ռազմաճակատներում ռուսական ռազմական ուժերի ձեռք բերված հաջողություններում նշանակալի դեր է կատարել այսպես կոչված «վրացական միլիցիան» (ժողովրդական աշխարհազորը), իսկ օսմանցիների համար հին Վրաստանին պատկանող տարածքների բռնազավթման իրավական հիմք էին հանդիսանում միջին դարերի Վրաստանի թագավորական սահմանները և նրա բնիկ բնակչության տարածման պատմական նախապայմանները:

Ռուս-թուրքական պատերազմների հետևանքով մահմեդականացված բնակչության մի մասը Թուրքիա տեղափոխվեց: Նրանց տեղում ռուսական իշխանությունը Թուրքիայի հայ բնակչության մի մասին, իսկ Ռուսաստանից՝ համեմատաբար փոքր քանակով, ռուսական քրիստոնեական աղանդներից մեկի հետևորդների, այսպես կոչված դուխոբորների վերաբնակեցրեց (վերջիններիս հիմնական մասը Խորհրդային Միության փլուզումից հետո լքել է այս տարածքը): Վրաստանի առաջին անկախ հանրապետության ժամանակաշրջանում (1918-1921 թթ.) Սամցխե-Ջավախեթիում հաստատվեց Վրաստանի իշխանության ենթադատություն: 1922 թվականից Սամցխե-Ջավախեթին Խորհրդային Միության մեջ մտնող Վրաստանի միութենական հանրապետության երկրամասերից մեկն է: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, 1944 թվականին, այստեղ մնացած մահմեդական բնակչությունը, որի առավելագույն մասը էթնիկ վրացիները՝ մեսխերն էին կազմում, խորհրդային ռեժիմի կողմից հարկադրաբար աքսորվեց Միջին Ասիա: Նրանց տեղը կազմակերպված տեղափոխեցին Չեմո Իմերեթիի և Ռաճայի լեռնային գյուղերի բնիկների: XX դարի 80-ական թվականներից այստեղ առաջացան նաև Չեմո Աճարայից տեղափոխված էկոմիգրանտների բնակավայրեր:

Սամցխե-Ջավախեթիում շատ են ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական շրջանի հուշարձանները, եկեղեցիները և բերդ-ամրոցները: Հատկապես տպավորիչ են մ.թ.ա. II հազարամյակի մեգալիթյան կառույցները և մենհիրները Սարոյում, Աբուլում, Շաորիում, Ճիքիանիում և այլն: Այստեղ առանձնապես բազմազան են քրիստոնեական ժամանակաշրջանի հուշարձանները: Սրանք վանական համալիրներ են՝ Սափարան, Ազարան, Փոկան, առանձին գտնվող 45 եկեղեցիները՝ Զարզմա, Գավեթի, Կումուրդո և այլն: Բերդ-ամրոցներ՝ Ածղուրիի բերդ, Օքրոսցիխե, Թմոգվիի բերդաքաղաք, Խերթվիսիի բերդ, ժայռափոր համալիրներ՝ Վարձիա, Վանիի անձավներ (Սամցխե-Ջավախեթի, ուղեցույց, 2012:18):

Ջավախեթին, Մեսխեթիի հետ, Վրաստանի կարևորագույն երկրամասերից մեկն է, որի պատմությունը մեր ժամանակակիցների մեծ մասին պակաս է հայտնի, իսկ ոչ վրաց բնակչությանը խեղաթյուրված տեսքով է մատուցված: Վրաց գիտական գրականության մեջ լավ պարզված են Ջավախեթիի պատմության հարցերը: Ըստ Վրաստանի ներկայիս տարածաշրջանային բաժանման, Ջավախեթին Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի կազմի մեջ ներառում է Ախալքալաքի, Նինոծմինդայի, մասամբ՝ Ասպինձայի և Բորջոմիի շրջանների տարածքները: Պատմականորեն Ջավախեթին Հարավային Վրաստանի անհամեմատ ավելի ընդարձակ տարածքներ էր ներառում և դարերի ընթացքում երկրի հարավային դարպասն էր հանդիսանում: Ջավախեթիի տարածքը անհիշելի ժամանակներից բնակեցված էր: Դա հավաստում են այնտեղ հայտնաբերված պալեոլիթի, մեզոլիթի և նեոլիթի հուշարձանները: Անտիկ աղբյուրներում հիշատակված են վրացական գավառների անվանումներ. «Քաթարզա» կամ Կլարջեթի, «Օձխրե» (քաղաք այսօրվա Աբասթումանի ավանի տարածքում): «Օձխրեն» Սամցխեի կամ Մեսխեթիի հնագույն անվանումն է, իսկ «Չաբախան» Ջավախեթիի հնագույն անվանումն է: Այսինքն՝ ջավախները հնագույն վրացական ցեղի «զաբախ»-ների սերունդներն են, սակայն, Պավլե Ինգորոդվայի տեսակետի համաձայն, ջավախը հնագույն վրացական ցեղային անվանման՝ տաոխի հետ է կապվում: Տաոխները Դաոխի (Տաոյի) հիմնական բնակչությունն էին կազմում և ներկայիս Թուրքիայի հյուսիս-արևելքի՝ Հարավային Վրաստանի, այդ թվում, Ջավախեթիի տարածքում էին ապրում: Հենց նրա կարծիքով, Տաոխ-ի և Ջավախ-ի միջև պետք է լիներ Ջաոխ, ջավախ միջանկյալ ձևը (Բերձենիշվիլի, 1975): Ուրարտուի թագավոր Արգիշտի I-ի արձանագրության մեջ, որը պատկանում է մ.թ.ա. 785 թվականին, որպես զավթված երկրներ հիշատակված Կլարջեթին, Սամցխեն և Չաբախան, այսինքն՝ Ջավախեթին, սահմանակցում էին Դիաոխի (Տաո) երկրին և հարավում տարածվում էին մինչև Քուռ գետի ակունքը: Ըստ Լեոնտի Մրովելիի, Ջավախեթին լեգենդար նախահոր՝ Մցխեթոսի

որդի Ջավախոսին էր պատկանում. «երկիրը Փարավանի լճից մինչև Քուռ գետի ակունքը»: Հենց նա էլ կառուցել է երկու բերդաքաղաք՝ Խունդան և քաղաք Արտանիսան, նույն Քաջթա քաղաքը: Նույն երկիրը Փառնավազի թագավորության ժամանակ (մ.թ.ա. IV-III դդ) թագավորի կողմից նշանակված էրիսթավն էր տնօրինում, ով Ծունդայում էր նստում: Պատմականորեն Ջավախեթին բաժանվում էր Վերին և Ներքին մասերի: Ներքին Ջավախեթիի վարչա-տարածքային միավորները սահմանում էին Քռի վտակ գետերը և գետակները, Նիարի և Բուլմալեթիի լեռնային սարավանդները: Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր կրոնական և վարչական կենտրոնը, սակայն բոլորը, միևնույն է, ենթարկվում էին Ծունդայի, իսկ հետագայում՝ Թմոգվիի կառավարչին: Իսկ Ջավախեթիում, որտեղ աշխարհագրական փոքր-փոքր գետերի հավաքող գործառույթը կատարում էին մեծ և փոքր լեռներով սահմանազատված լճերը, վարչա-տարածքային միավորը սահմանում էին այս լճերի (Սաղամոյի, Խանչալիի, Կարծախի, Փարավանիի, Տաբածղուրիի) գոգահովիտներում տեղակայված գյուղերով ստեղծված փոքրիկ «երկրները»: Քարթլիի թագավորության մեջ (մ.թ.ա. III դար, մ.թ. VI դարի 30-ական թվականներ) Ջավախեթին, Կոլան և Արտաանը Ծունդայի էրիսթավության տեսքով էին մտնում: Ծունդայի, Օձխրեի և Կլարջեթիի էրիսթավությունը ամբողջականության մեջ կազմում էր պատմական Վերին Քարթլին: ... Վերին Քարթլին կամ Մեսխեթին, Սամցխե-Ջավախեթիից սկսած մինչև Տաո Իսպիր, մեկ կառավարչական միավորի՝ էրիսթավների-էրիսթավություն և սամթավրո էին կազմում ...» (Ջավախիշվիլի ..., 1989: 45): Այս շրջանում Քարթլիի թագավորները երեք նստավայր ունեին: Մցխեթա (գարնանային և աշնանային), Գաչիանի (ձմեռային) և Ծունդա (ամառային): Ջավախեթին Վրաստանի սուրբ անկյունն է, որտեղից մուտք է գործել Սուրբ Նինոն, ոտքով անցել է ճանապարհը Փարավանիից մինչև Մցխեթա, քարոզել է քրիստոնեական հավատ և ճիշտ նրա գործունեության հետևանքով Միրիան թագավորը 327 թվականին քրիստոնեությունը պետական կրոն հռչակեց:

Ջավախեթիի համար հատկապես ծանր էր 737 թվականի արաբների ներխուժումը՝ Խուլ Մուրվանի հրամանատարությամբ: Այս ժամանակ ոչնչացվեց տեղի ջավախ բնակչության նշանակալի մասը: IX դարում Գուարամ Մամփալը, որը Քուռ գետի կիրճ մտավ, զավթեց Ջավախեթին, Թրիալեթին, Տաշիրը, Աբոցը, Արդահանը և ստեղծեց Ջավախեթի անվանումով խոշոր ֆեոդալական իշխանություն (Ջավախիշվիլի, 1948:115, 342-350, 578): Ջավախեթին վերածվեց թագավորական երկրի և հաջորդ դարերում ևս այն տնօրինում էին թագավորի կողմից նշանակված էրիսթավները (Կեկելիձե, 1951:84): Հաջորդ շրջանում ևս Ջավախեթին Սամցխեի հետ մեկտեղ ոչ միայն Վրաստանի մշակութային կենտրոնը, այլ նաև քաղաքական հենարանն էր: Այս իրավիճակը շարունակվեց մինչև 16-րդ դարի վերջը: XVI դարի վերջին ամբողջ Սամցխե-Աթաբագությունը, Ջավախեթին՝ ներառյալ, զավթեցին օսմանցիները: Օսմանցիները զավթված Վրաստանի մասը կոչեցին «Գուրջիստանի վիլայեթ», որի կազմի մեջ մտնում էր նաև Ջավախեթիի փաշայությունը: Սամցխեի տիրակալներին օսմանցիները հռչակեցին «Ախալցիխեի փաշաներ» և այս չքնաղ երկրամասն անջատեցին մայր-հայրենիքից: Ախալցիխեի փաշայությունը բաժանվեց 24 համայնքների կամ սանջաղների, և դրանցից յուրաքանչյուրի գլուխ ժառանգական իրավունքով կարգվեցին սանջաղբեգեր:

Երկրի քաղաքական և կրոնական զավթողագործության նպատակով սկսվեց բնակչության մահմեդականացում, դեռ վերնախավում, իսկ այնուհետև՝ երկար պայքարով նաև ստորին խավում: XVII դարի սկզբից սկսված մահմեդականացման այս ինտենսիվ գործընթացը շարունակվեց նաև XVIII դարում և ավարտվեց XIX դարի սկզբին: Զավթիչների բազմացումը, պարզ է, որ հարուցեց տեղի բնակչության արտագաղթ Վրաստանի տարբեր երկրամասեր: XVI դարում, ըստ «Գուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի» (Ջիքիա, 1941:12-24), Ջավախեթիի կազմի մեջ էր մտնում ինը շրջան. Խերթվիսի, Անտառոտ Ջավախեթի, Բուլմարեթի, Ակշեհիրի, Թմոգվի, Նիալի, Ղուրի, Ջանբազի, Քանարբելի և Մգլիս (Գայլի) բերդի, որտեղ մոտավորապես 450 գյուղ է եղել, և բոլոր այդ գյուղերում միայն վրացիներ էին ապրում: Պարզ է, որ Վրաստանից այսպիսի կարևոր երկրամաս անջատելուն և այսքան եղբայրակիցների հայրենիքից կտրելուն վրացիներն այսքան հեշտ չէին կարող համակերպվել: Վրաստանի այն ժամանակվա թագավորներ Թեյմուրազ II-ը և Էրեկլե թագավորը, ինչպես նաև Իմերեթիի թագավոր Սոլոմոն I-ը, մի կողմից՝ փորձում էին լավ հարաբերություն ունենալ Ախալցիխեի փաշաների հետ, որոնք դեռ չէին մոռացել իրենց վրացական ծագումը և, մյուս կողմից՝ հարմար պահի էին սպասում, որ Վրաստանի այս պատմական երկրամասում կրկին վերականգնեին իրենց ազդեցությունը: Չնայած դրան՝ նրանք չունեին հետևողական քաղաքականություն Վրաստանի այս հնագույն հող ու ջրի նկատմամբ, ինչից լավ օգտվում էին արտաքին թշնամիները՝ թալանում էին և ամայացնում այս

երկրամասը: Բնակչությունը փախչում էր կամ աննկարագրելի նեղության-ստորացման և հերոսության գնով պահպանում հայրենի հողն ու ջուրը: Պրոֆեսոր Շոթա Լոմսաձեի կարծիքով, հայ մելիքների և հարուստ վաճառականների նկատմամբ Էրեկլե թագավորի չափից ավելի բարյացակամ վերաբերմունքը քիչ մնաց Քվեմո Քարթլիի կորստի պատճառ դառնար (Լոմսաձե, 1975: 344): Էրեկլե թագավորի շնորհած արտոնությունների հաշվին Բոլնիս-Դմանիսիում բնակեցված 700 ղարաբաղցի հայերից Մելիքաբովը հավաքում էր ջոկատներ, հարձակվում Ջավախեթիի վրա, կողոպտում էր, բերում ավարը և բերում մարդկանց, որոնց հետո հարկադրաբար հայացնում էին:

19-րդ դարի սկզբից շարունակվող ռուս-թուրքական պատերազմների հետևանքով Սամցխե-Ջավախեթին ազատվեց Թուրքիայի տիրապետությունից, սակայն դա նույնիսկ մի փոքր օգուտ չբերեց տեղի ընկճված վրաց բնակչությանը: Ընդհակառակը, Ռուսաստանի նենգավոր պլանի համաձայն, այս երկրամասն առավելագույն ազատվեց տեղի վրաց բնակչությունից և նրանց տեղում բնակեցրին հայերի, հույների, քրդերի, թարաքամների, ռուս աղանդավորների՝ դուխոբորների: Պլանավորվում էր նաև կազակների և գերմանացի գաղութաբնակների բնակեցում: Դեռ ռուս-թուրքական առաջին պատերազմի (1806-1812) ժամանակ ռուս զորահրամանատար Տորմասովի անմիջական հրամանով 1810 թվականին Ախալցիխեի փաշայությունից վերաբնակեցվեց 1506 վրացական ընտանիք: Միայն Կոթելիա գյուղից այն ժամանակ 112 ծուխ վերաբնակեցրին Լոռի, որոնց մեծ մասին հարկադրաբար հայացրին: 1828 թվականի Ադրիանապոլսի հաշտության պայմանագրով Ռուսաստանն իրեն միացրեց Ախալցիխեի փաշայության կազմի մեջ մտնող 24 սանջաղից միայն տասը. Քոբլիանիի, Օձխրիի (Աբասթումանիի), Ախալցիխեի, Ածղվերիի, Ասպինձայի, Խերթվիսիի, Ախալքալաքի, Ջարաքիի, Փոցխովիի և Պալակացիոսի (Չըլդըրի): Հետագայում այս երկրամասը Ռուսաստանը կոչեց Ախալցիխեի և Ախալքալաքի գավառներ և Փոցխովի տեղամաս: Ռուս-թուրքական 1877-78 թվականների պատերազմից հետո Մեսխեթիի մնացած մասը ևս միացվեց, մասնավորապես՝ Աջարիա-Քոբուլեթին, Շավշեթին, Կլարջեթին, Կոլա-Արդահանը և Տաոյի հյուսիսային մասը՝ Օլթիսին: Որոնցից առաջին երեքը կոչվեցին Բաթումիի նահանգ, իսկ Էրուշեթին, Արդահանը և Օլթիսին միավորվեցին Ղարսի նահանգում:

Ակտիվություն 2-ի ենթադրյալ պատասխանները. Կրոնական փոփոխությունների հետևանքը՝ տարածվեց կաթոլիկություն, իսլամ, էթնիկ փոփոխության հետևանք՝ աճել է հայ բնակչության թիվը:

### Լրացուցիչ տեղեկություններ

Շալվա և Իվանե «ախալցիխեցի երկու եղբայրներ»՝ եղել են Թամարի, Լաշա Գիորգիի և Ռուսուդանի ժամանակվա Վրաստանի պետական և ռազմական բարձր պաշտոնյաներ, առաջավոր զորքի զորահրամանատարներ, Ջավախեթիի և Կարիի սահմանային երկրամասի կառավարիչներ, արքայազների հոգաբարձուներ, այսինքն՝ աթաբագներ, թորելիների տոհմի նոր ճյուղավորման՝ Ախալցիխելիների տոհմի հիմնադիրներ: Եղբայրները, ինչպես երևում է, իրենց հավասար ուժի և կարևորության պատճառով, վրաց պատմողական բնույթի և վիմագրական հուշարձաններում (և ոչ միայն վրացական) գրեթե միշտ միասին են հիշատակվում: Թորելիների հիմնական ճյուղի առաջնությունը եղբայրների ձեռքն անցավ XII դարի վերջին: Գամրեկել Թորելիից հետո Շալվան և Իվանեն դարձան Ջավախեթիի սահմանային երկրամասի կառավարիչներ: Շամքորիի մոտ ճակատամարտում վրացիները բազմաթիվ գերիներ և մեծ ավար էին ձեռք բերել: Շալվա Ախալցիխելին նույնիսկ խալիֆի դրոշն էր որպես ավար բերել: Դրոշը Թամար թագուհին Գելաթիում գտնվող Խախուլիի Աստվածամոր սրբին է նվիրաբերել: Այս պատերազմի ընթացքին է վերաբերում Գանձանի արձանագրությունը, որում Շալվա Ախալցիխելու մասին կարդում ենք. «Հզոր, անհաղթելի բոլոր թշնամիների համար ... ով իր առյուծի ուժով և բազկով սարսափեցնում էր ողջ պարսկական աշխարհը»: Թագավորը երբ Կարին իր սահմանների մեջ ներառավ, նրա պահապան նշանակեց Իվանե Ախալցիխելուն, նշանակեց «սահմանային երկրամասի կառավարիչ», աթաբագություն և ամիրսպասալարություն շնորհեց: Հենց նրան էլ նվիրեց Կարուլին և իր երկիրը: Շալվային և Իվանեին Թամարը նշանակեց սահմանային երկրամասի կառավարիչներ:

Բասիանիում բանակ դրած սելջուկների հսկայական զորքի վրա վրացական զորքն անսպասելիորեն հարձակվեց: Ամիրսպասալար Զաքարիա Երկայնաբազուկը Շալվա և Իվանե Ախալցիխելիներին կենտրոնում նշանակեց առաջավոր ջոկատի հրամանատար: Նրանց հետ էին «ուրիշ թորեցիներ»: Բասիանիի հայտնի պատերազմից հետո Շալվա Ախալցիխեցին դարձավ մանդատուրթուխուցեսի և այս պաշտոնը նա զբաղեցնում էր մինչև 1225 թվականը: Հայաստանում Գառնի գյուղի մոտ վրացիները դիմակայեցին Ջալալեդդինի անհամար զորքին: Մեսխերի զորքերի առաջնային գծում էին Շալվա և Իվանե «անվանի մարտիկները, ինչպիսին նրանց երկրին է հարիր»:

Իվանե Երկայնաբազուկի մեջ «նախանձը մտավ» եղբայրների նկատմամբ, թե՞ տարիքն իրենն արեց, չկարողացավ արագ և ճիշտ որոշում կայացնել, օժանդակ ուժ չհասցրեց Ախալցիխելիներին: Անհավասար մարտն ավարտվեց վրացիների պարտությամբ: Գառնիի ժայռերում պատսպարված Իվանեի գլխին ժայռից պոկված քար է ընկնում և տեղում սպանում նրան: Իսկ Շալվային գերի են վերցնում խորեզմցիները: Ջալալեդդինը նրան՝ գերուն չհամապատասխանող պատվի է արժանացնում, մտադրվել էր վրացիների դեմ պայքարում օգտագործել նրան ներկայացուցչական տեսքի և խիզախության պատճառով, սակայն մեկ տարի անց, «Քրիստոսի հավատքից չհրաժարվելու պատճառով» նրան մահապատժի ենթարկեց: Իսկ Ջուվեյնի տեղեկության համաձայն, Ջալալեդդինը հենց որ իմացավ, որ գերության մեջ գտնվող Շալվա Ախալցիխելին յուրայիններին նամակներ էր գրում և Թբիլիսիի վրա հարձակում պատրաստելու լուրն էր տեղեկացնում, անմիջապես սպանել տվեց նրան: Այսպես զոհաբերեցին եղբայրներն իրենց կյանքը հայրենիքի պաշտպանության գործին: Ոչ էլ նրանց ժառանգներն են երկրի համար պակաս գործ արել, անձնազոհաբար նվիրվել երկրին, թագավոր-կառավարիչներին, սակայն Շալվա և Իվանե Ախալցիխելիների առաքինությունն ու մարտունակությունը գերբնական ուժի օրինակ են մնում Վրաստանի պատմության էջերում: Ավանդազրույցի համաձայն, ճիշտ Շալվա Ախալցիխելուն է նվիրված «Շավլեգո» երգը:

## ԲԱԺԻՆ 4. ԳՈՒՐԻԱ

| **Դասի թեման** | **4.1 Գուրիայի աշխարհագրական դիրքը և բնական պայմանները** |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը ծանոթանում է Գուրիայի ֆիզիկա-աշխարհագրական բնութագրիչներին: Աշակերտը քարտեզի միջոցով կկարողանա ընթերցել քարտեզում տեղ գտած տեղեկությունները: |
| **Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին** | (II)3 (II)4 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Քարտեզի (էջ 8-9) միջոցով որոշեն Գուրիայի աշխարհագրական դիրքը և թվարկեն նրա սահմանակից երկրամասերը՝ ըստ հորիզոնի կողմերի: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Զույգերով ծանոթանան դասագրքի տեքստին և լրացնեն աղյուսակը (տե՛ս՝ Աղյուսակը): (15 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Կատարված առաջադրանքի շնորհանդես (10 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Գնահատում<br>**Ակտիվություն 5.** Տնային առաջադրանք. Գտնել լրացուցիչ տեղեկություններ Գուրիայի հանգստավայրերի մասին: |
| **Գնահատումը** | Ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, լրացուցիչ նյութ |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը, զույգեր |
| **Ունեցած գիտելիքը** | Գուրիայի սահմանակից երկրամասերի բնական պայմանները և աշխարհագրական միջավայրը: |

Աղյուսակ

| Ռելիեֆ | Վարչական բաժանումը | Կլիման | Օգտակար հանածոներ | Ջրագրական միավորներ | Հանգստավայրերի տեսակները |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |

| Դասի թեման | **4.3. Գուրիա՝ հանգստավայրերով հարուստ երկրամաս** |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը ծանոթանա Գուրիայում առկա հանգստավայրերին, դատողություն անի դրանց զարգացման հեռանկարների մասին: |
| **Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին** | (II) 3 (II) 6 (II) 7 (II) 12 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Ուսուցիչը խնդրում է աշակերտներին թվարկել՝ որ հանգստավայրերն են գտնվում Գուրիայում, և լրացնել աղյուսակը (տե՛ս՝ Աղյուսակ): Աշակերտները պետք է արդեն ունենան տեղեկություններ այս հանգստավայրերի մասին, քանի որ տնային առաջադրանք էր տրված լրացուցիչ տեղեկություններ հայթայթել: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Խմբային աշխատանք: Դասարանը բաժանվում է խմբերի: Յուրաքանչյուր խմբի տրվում է որևէ հանգստավայրի անվանում: Նրանք պատրաստում են տեղեկատվական գրքույկ և հիմնավորում են սեփական առավելությունը: Մի խումբը հանդիսանում է փորձագետների խումբ, որը որոշում է, թե որ խումբը կարողացավ ավելի լավ ներկայացնել իր հանգստավայրի առավելությունը: (15 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Կատարվելիք առաջադրանքի շնորհանդես (15 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Գնահատում և ինքնագնահատում (5 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Տնային առաջադրանք. Գրել էսսե՝ «Եթե ես լինեմ Գուրիայի նահանգապետ» թեմայով: |
| **Գնահատումը** | Խմբային աշխատանքի, ինքնագնահատման խորագիր |
| **Ռեսուրսներ** | Թերթեր, մարկերներ, դասագիրք |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը, խմբեր |
| **Ունեցած գիտելիքը** | Տեղեկություններ Գուրիայի հանգստավայրերի և ֆիզիկա-աշխարհագրական պայմանների մասին |

Աղյուսակ

| Լեռնային հանգստավայր | Ծովային հանգստավայր | Լեռնա-դահուկային |
|---|---|---|
| | | |

## Լրացուցիչ տեղեկություններ

**Խորագիր «Սա հետաքրքիր է»**

Երեք հոյակապ լեգենդներ են մեզ պատմում Գուրիայում գտնվող եկեղեցիների մասին: Դրանցից առաջինի համաձայն, Աճի գյուղում բնակչությանը անհանգստացնում է մի դև: Ժողովուրդը օգնության համար դիմում է Սուրբ Գիորգիին: Սուրբը սպանել է դևին և քարացրել նրան: Որպես երախտագիտության նշան, այս վայրում տաճար են կառուցել: Աճիսծղալի գետի ափին այսօր էլ կա մի իսկայական գլաքար, որը գուրիացիները «Դևի քար» են անվանում:

Երկրորդ լեգենդը վերաբերում է Ջիխեթիի վանքին: Ասում են, թե այնտեղ գործող սուրբ վանամայրերին այնքան էր անհանգստացնում ջրի բացակայությունը, որ նոր վանք կառուցելու համար որոշում են վայր ընտրել: Ընտրությունը վստահել են երեք աղավնիների: Աղավնիները հոյակապ վայր են ընտրել և, իսկապես, կառուցել են նոր վանք, որտեղ ոչ միայն աղոթում էին, այլ նաև գրել-կարդալ և ընտանեկան գործեր էին ուսուցանում:

Համաձայն երրորդ լեգենդի, ինքը՝ Թամար թագուհին է բերել հույն վարպետների և հրամայել կառուցել երկու եկեղեցի: Մեկը Ացանա գյուղում պետք է կառուցեին, իսկ երկրորդը՝ Ակեթիում: Ացանայի վանքը ինքը՝ վարպետն է կառուցել, իսկ Ակեթիինը՝ ենթավարպետը: Թամար թագուհին ենթավարպետի կառուցածն ավելի է հավանել, ինչի համար սաստիկ բարկացած վարպետը պատժել է իր իսկ ենթավարպետին:

Գուրիացիները հնուց տոնակատարությունների տարբեր ծիսակարգեր ունեին: Դրանց մի մասը պահպանվել է մինչև մեր օրերը: Գուրիական ընտանիքներում այսօր էլ են պատրաստում ամանորյա գուրուլիա կարկանդակ: Գուրիայում հին տոմարով Նոր տարուն՝ նույն Կալանդային, զարդարում են «չիչիլակի», ափսեների վրա դնում խաճապուրի, խոզի գլուխ, քաղցրավենիք և գինով կենացներ «ճաշակում»՝ասում:

XIX դարի վերջին, գուրիական ձիավորների խումբը արտասահման ուղևորվեց: Նրանք Անգլիայում միացան անվանի ամերիկացի շոումեն, Բաֆալո Բիլ Քոուդսի „Wild West show"՝ Վայրի Արևմուտքի շոուին, իսկ 1893 թվականին գուրիացիները ԱՄՆ մեկնեցին: Գուրիացիները 30 տարուց ավելի «Ռուս կազակներ» անվանումով ելույթ էին ունենում Բաֆալո Բիլի և այլ կրկեսների ու շոուների հարթակներում, նրանք համընդհանուր ճանաչում ձեռք բերեցին: Արևմուտքի հայտնի հետազոտող և պատմաբան Դի Բրաունը գրում է. «Ձիավարումը Ռոդեո ներմուծեցին ինքնամոռաց կազակները: Կազակների գլխապտույտի հասցնող հնարքներով հետաքրքրված կովբոյները յուրացրին դա և հետագայում իրենց տարբերակը ներկայացրին ամերիկյան ռոդեոյում»: Ամերիկյան թերթերը գրում էին վրացիների անկրկնելի ձիավարության մասին. «Նրանք թամբի վրա ձեռքերի և ոտքերի վրա կանգնած էին վարում ձիերը»: «Կազակ» ձիավորների մասին տեղեկությունը շուտով հասավ նաև թագավորական ընտանիքի ականջին: 1892 թվականի հունիսի 25-ին վրացիները, Իվանե Մախարաձեի առաջնորդությամբ, ելույթ ունեցան թագուհու, թագավորական ընտանիքի և այլ ազնվականների առջև: Ներկայացումով հիացած թագուհի Վիկտորիան ոսկեզօծ ալբոմ փոխանցեց նրանց, որտեղ նրանց ներկայացումն արտացոլող նկարներ էին տեղադրված:

| Դասի թեման | 5.4. Ռաճա-Լեչխումիի բնակչության ապրելակերպը |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը ծանոթանում է Ռաճայից բնակչության միգրացիայի՝ արտագաղթի պատճառներին: Աշակերտը վերլուծում է միգրացիայի գործընթացի հնարավոր հետևանքները: |
| Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին | (II)3 (II)4 (II)6 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Ուսուցիչն աշակերտներին դիմում է հարցով. Որ պատճառները կարող են պայմանավորել բնակչության արտագաղթ: Ենթադրյալ պատասխանները գրվում են գրատախտակի վրա: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Աշակերտները ծանոթանում են ժողովրդական բանաստեղծությանը և դուրս գրում այն նախադասությունները, որտեղից երևում է, թե ինչ պատճառներով են ռաճացիները լքում սեփական հողն ու ջուրը: Համեմատեն՝ արդյոք համընկա՞վ իրենց կողմից արտահայտված կարծիքների հետ: (5 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Աշխատանք տեքստի վրա: Դուրս գրեն բոլոր այն գործունեությունները, որոնց հետևում էին ռաճացիները արտագնա աշխատանքների ընթացքում, և լրացնեն իմաստային քարտեզը: (5 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Ծանոթանան Իլյա Ճավճավաձեի կարծիքին Ռաճայի մասին և վերլուծեն՝ ո՞ր խնդիրների վրա է կենտրոնացնում ուշադրությունը Իլյան: (10 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Քննարկում. Ինչ դրական և բացասական հետևանքներ կարող է ունենալ բնակչության մեկնումը արտագնա աշխատանքների: (10 րոպե)<br>**Ակտիվություն 6.** Գնահատում<br>**Ակտիվություն 7.** Տնային առաջադրանք - Գտնել լրացուցիչ տեղեկություններ Վրաստանից միգրացիոն գործընթացների մասին: |
| Գնահատումը | Քննարկման գնահատման խորագիր |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարանը, անհատապես |
| Ունեցած գիտելիքը | Ռաճա-Լեչխումիի ֆիզիկա-աշխարհագրական միջավայրը, Ռաճա-Լեչխումիի տնտեսությունը: |

Առաջին ակտիվության ենթադրյալ պատասխանները. պատերազմ, ծանր պայմաններ, սով, տարերային աղետներ: Հենց այստեղ ճշտեք միգրացիա – գաղթ տերմինի նշանակությունը:

Բանաստեղծության մեջ անվանված պատճառները. դաշտավայրում չունենք վարելահող, ոչ էլ լեռներում՝ հնձելու հող:

Գործունեություններ, որոնց հետևում են ռաճացիները արտագնա աշխատանքների ժամանակ. հացթուխ, խզար քաշող, խաղող մշակող, վաճառական, ածխագործ, ատաղձագործ:

Ըստ Իլյայի, Ռաճայի համար գլխավոր խնդիրը բնակչության արտահոսքն է:

Ենթադրյալ փաստարկներ քննարկման ժամանակ. դրական արդյունք՝ զբաղվածության արդյունքում կունենան եկամուտ, բացասական՝ երկրամասը դատարկվել է բնակչությունից:

| Դասի թեման | **5.5.** Ռաճացիներ՝ վրաց վաճառականներ |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը ծանոթանում է հարաբերություններին ռաճացիների և օսերի միջև: Աշակերտը վերլուծում է առևտրային հարաբերությունների դրական ազդեցությունը բարիդրացիական հարաբերությունների վրա: |
| **Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին** | (II)3 (II)6 (II)7 (II)9 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Ուսուցիչը խնդրում է աշակերտներին հիշել, թե ուր էին մեկնում ռաճացիները Վրաստանի սահմաններից դուրս արտագնա աշխատանքների (պատասխանը՝ Հյուսիսային Կովկաս): (2 րոպե) **Ակտիվություն 2.** Ֆիզիկա-աշխարհագրական քարտեզի վրա (Մաս առաջին, էջ 86-87) գտնեն այն լեռնանցքը, որով ռաճացիները Հյուսիսային Կովկաս էին անցնում: (5 րոպե) **Ակտիվություն 3.** Մինի-դասախոսություն ռաճացիների և օսերի հարաբերությունների մասին: (8 րոպե) **Ակտիվություն 4.** Լրացնեն T դիագրամ ռաճացիների և օսերի միջև հարաբերությունների մասին՝ առևտրային և «կերծմոկեթեոբա»: Նկարագրեն, թե ինչ էր ենթադրում «կերծմոկեթեոբա»-ն: (10 րոպե) **Ակտիվություն 5.** Փաստարկված դատողություն՝ գոյություն ունի կարծիք, որ ազգերի միջև բարիդրացիական և խաղաղ միջավայրի ստեղծումը միայն պետության պարտականությունն է: Համաձայնեք կամ հերքեք այս նախադասությունը: Աշակերտները բանավոր արտահայտում են իրենց կարծիքները: (15 րոպե) **Ակտիվություն 6.** Գնահատում (5 րոպե) **Ակտիվություն 7.** Տնային առաջադրանք. Գտնել լրացուցիչ տեղեկություններ Վրաստանում ժողովուրդների միջև խաղաղ համագոյակցության մասին: |
| **Գնահատումը** | Ընթացիկ առաջադրանքի գնահատման աղյուսակներ՝ խորագրեր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, քարտեզ |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը |
| **Ունեցած գիտելիքը** | Ռաճայի աշխարհագրական դիրքը, տնտեսության բնագավառները, արտագնա աշխատանքների գնալու պատճառները: |

Մինի դասախոսության ժամանակ օգտվեք պարագրաֆում եղած տեղեկություններից ռաճացիների և օսերի հարաբերությունների մասին:

T դիագրամի մի սյունակում կգրվեն առևտրային հարաբերություններն արտահայտող արտահայտություններ. ընտանի անասունների առևտուր էին անում կամ փոխանակում էին բրդով, թաղիքով: Իսկ երկրորդ սյունակում կերծմոկեթեոբիթի, օրինակ երեխաներին թողնում էին մեծացնելու-դաստիարակելու նպատակով:

Փաստարկված դատողության ժամանակ կհաշվվի ցանկացած տրամաբանական պատասխան, որը չի պարունակի փաստական սխալ:

## Լրացուցիչ տեղեկություններ
(Ռաճա-Լեչխումի)

**Խորագիր. Սա հետաքրքիր է**

Նիկործմինդայի տաճարը գտնվում է Ամբրոլաուրիի շրջանի համանուն գյուղում: Ինչպես տաճարի վրա արված արձանագրությունն է տեղեկացնում, այն կառուցվել է XI դարում:

Թլուղի գյուղում, ծովի մակերևույթից 1100 մետր բարձրության վրա գտնվում է Տեխիսայի Սուրբ Գիորգիի վանքը: Համաձայն լեգենդի, մի գյուղացուց գողացել են սայլը: Գողը սկզբից հրաժարվել է, որ ինքն է տարել, սակայն աղոթավայրի մոտ վախեցել է և խոստովանել: Ուստի տաճարն անվանել են Տեխիսա («ցամոտղդոմա» – խոստովանել բառի արմատից):

Խվանճկարան համաշխարհային բրենդի գինի է, որը միայն և միայն Խվանճկարա գյուղում աճեցված ալեքսանդրոուլի տեսակի խաղողից է պատրաստվում և իսկապես հազվագյուտ է:

Լեխչխումին պատմա-ազգագրական հուշարձանների առատությամբ առանձնացող երկրամասերից մեկն է: Այս երկրամասի այցեքարտը Խվամլիի լեռն է, որը հնագույն պատմական գանձանոց է եղել: Այստեղ կարող ես տեսնել Գվեսոյի բերդի փլատակները, Մերիի բերդը, գեղեցկագույն Լայլաշի գյուղը:

Լեռնային հանքաջրաբուժական առողջարան Ուծերան Ջեմո Աջարիայում, Օնիից 15 կմ հեռավորության վրա է գտնվում: Գյուղի անվանման ծագումը կապվում է վրաց թագուհի Թամարի անվան հետ: Ասում են, թե Թամարն իր շքախմբով ճամփորդում էր թագավորությունում: Ռաճա որ բարձրացել է, մտել է նաև Ուծերա և նրա գեղեցկությամբ հիացած ասել է. Ինչ աննկարագրելի («աղուծերելի») գեղեցկություն է: Ինչպես ասում են, ժամանակի ընթացքում «աղուծերելի»-ն փոփոխության է ենթարկվել և մնացել է «ուծերա»-ն: Գյուղին վերևից նայում է Բրոլիս լեռը, որտեղից բյուրեղային լեռնային բյուրեղապակու կտորներ են հայթայթվում: Ուծերայում հողի մակերևույթ է բարձրանում 28 տեսակ բնական հանքային ջուր: Դրանց մասին դեռևս Վախուշտի Բագրատիոնին էր գրում իր աշխատության մեջ: Դրանցից մեկը՝ Գվերիթի անվանվամբ հայտնի աղբյուրը, XIX դարի վերջին հայտնաբերել են Գամղրելիձե եղբայրները: Ջուրը, որ գետնի տակից դուրս էր գալիս նրանց կալվածքում, եղբայրներից մեկին բուժել է ստամոքսի սուր ցավերից: Գամղրելիձեները Թբիլիսիից բժշկական հանձնաժողով են հրավիրել: Պարզվել է, որ Գվերեթիի աղբյուրը հազվագյուտ բուժիչ հատկություններ ուներ: 1913-1914 թվականներին Ֆրանսիայի առևտրային կազմակերպություններից մեկը Ուծերայի ջուրը Եվրոպա արտահանելով է հետաքրքրվել և Գամղրելիձեներին 45-ամյա կապալ է առաջարկել: Եղբայրները համաձայնություն են տվել այն պայմանով, որ տեղի բնակչությունը ջրից անհատույց կօգտվեր, ինչը ֆրանսիացիների համար ընդունելի չի եղել, և համաձայնությունը խափանվել է: Այսօր Ուծերայի հանքային ջրերն օգտագործվում են ինչպես խմելու, այնպես էլ լոգանքների համար: Բուժիչ ազդեցություն ունեն հանգստավայրի գեղեցկագույն փշատերև եղևնիների և խառը (եղևնի, եղևին, կաղնի, հաճարենի, բոխի, շագանակենի և այլն) անտառները:

Բնության գեղեցկությամբ և հանքային ջրերի առատությամբ հայտնի Շովի դեռ հին ժամանակներում բուժման նպատակով այցելում էին մերձակայքի գյուղերի բնակիչները և ուղևորներ, ովքեր Ռաճայից Շովիի և Մամիսոնիի լեռնանցքի տարանցմամբ Սամաչաբլո էին անցնում: Շովիի ջրերի գիտական ուսումնասիրությունն ու առողջարանի շինարարությունը սկսվում է 1923 թվականին: Խորհրդային շրջանում այստեղ գեղեցկագույն առողջարաններ և հանգստյան տներ կառուցվեցին, այդ թվում՝ վրացական զարդանախշերով նկարազարդված հայտնի Կուրզալի շենքը: Շովին հետաքրքիր վայր է լեռնագնացության, դահուկային սպորտի, ռաֆթինգի սիրահարների համար: Հայտնի է, որ Կովկասյան լեռների այս մասում 4000 մետրից ավելի բարձր մի քանի գագաթ կա, որտեղ դեռ մարդը ոտք չի դրել:

Ռաճայի զարդն են գեղեցկագույն քարանձավները, անձավները, լճերը: Ամենամեծ լիճը Շաորիի ջրամբարն է, որը XX դարի միջին շրջանում արհեստական եղանակով է ամբարտակած:

# ԲԱԺԻՆ 6. ԱԲԽԱԶԻԱ

| Դասի թեման | **6.4.** Աբխազիայի բնակչությունը |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը.<br>Ծանոթանա Աբխազիայի բնակչության փոփոխության պատճառներին:<br>Հասկանա՝ ինչ տարբերություն կա հին և նոր աբխազների միջև:<br>Դատողություն անի վրաց-աբխազական հարաբերությունների մասին: |
| **Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին** | (II) 1 ( II )3 (II)12 ( II)13 (II)14 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Աշակերտները անհատապես ծանոթանում են տեքստին Աբխազիայի բնակչության մասին: (10 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Աշակերտները բաժանվում են խմբերի և ստացած տեղեկությունների հիման վրա մշակում են թեմա. Վրաց-աբխազական հարաբերությունները: (15 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Կատարված առաջադրանքի շնորհանդես (12 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Գնահատում<br>**Ակտիվություն 5.** Տնային առաջադրանք. Գտնել տեղեկություններ այսօր առկա վրաց-աբխազական հարաբերությունների մասին: |
| **Գնահատումը** | Խմբային աշխատանքի և շնորհանդեսի գնահատման աղյուսակներ՝ խորագրեր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, թերթեր |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը, խմբեր |
| **Ունեցած գիտելիքը** | Աբխազիայի բնական պայմանները և ամենօրյա կյանքը: |

Տեքստի վրա աշխատելու ժամանակ կարող եք աշակերտներին խորհուրդ տալ օգտվել ամփոփման և գրառումներ անելու մեթոդներից. տեղեկությունների մի մասը ջնջեն, մի մասը շրջասեն, մի մասը թողնեն:

Ուշադրությունը կենտրոնացնեն Աբխազիայի էթնիկ բազմազանության, վրաց լեզվի և մշակույթի ազդեցության վրա:

| Դասի թեման | **6.5. Մշակութային հուշարձանները Աբխազիայում** |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը ծանոթանա մշակութային ժառանգության հուշարձանների: Դատողություն անի դրանց պահպանման անհրաժեշտության մասին: Հուշարձանը քննարկի՝ որպես պատմական աղբյուր: |
| **Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին** | (II)1 (II)9 (II)13 (II)14 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Մինի-դասախոսություն Աբխազիայում առկա մշակութային հուշարձանների մասին: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Աշխատանք տեքստի վրա խմբերում: Աշակերտները ծանոթանում են դասագրքի տեքստին և լրացնում աղյուսակը. Գիտեի, իմացա, ուզում եմ իմանալ: (10 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Աշակերտները գրում են էսսե «Ինչի մասին են խոսում հուշարձանները» թեմայով: (15 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Գրավոր առաջադրանքի շնորհանդես (10 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում<br>**Ակտիվություն 6.** Տնային առաջադրանք. Գտնել լրացուցիչ տեղեկություններ Աբխազիայի մշակութային հուշարձանների այսօր առկա վիճակի մասին: |
| **Գնահատումը** | Խմբային աշխատանքի, շնորհանդեսի գնահատման խորագիր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, թերթեր |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը, խմբային աշխատանք |
| **Ունեցած գիտելիքը** | Աբխազիայի բնական և մշակութային բազմազանության մասին տեղեկություններ: |

Աբխազիայի տարածքում են գտնվում վրացական մշակույթի և ճարտարապետության հոյակապ հուշարձաններ. Թամարի կամուրջը, Բագրատի բերդը, Բզիփիի և Գագրայի բերդերը: Միասնական Վրաստանի առաջին թագավորի՝ Բագրատ Գ-ի ժամանակ կառուցված Բեդիայի տաճարը: Սոխումիի մոտ, Իվերիայի լեռան վրա է գտնվում Սվիմոն Կանանեցու անվան տաճարը, Դրանդա գյուղում է կառուցված Դրանդայի հայտնի եկեղեցին: Իլորի գյուղում է գտնվում Սուրբ Գիորգիի անվան Իլորիի տաճարը: Լիխնի գյուղում է գտնվում Աստվածամոր ննջման տաճարը: Ժամանակին և պատերազմների դիմացել են և մեզ հասել Մոքվիի, Մուսերիի և Լաշքենդարիի տաճարները:

Գրավոր առաջադրանք կատարելու ժամանակ, ցանկալի է, որ աշակերտները ուշադրությունը կենտրոնացնեն այն փաստի վրա, որ հուշարձանը մշակութային ժառանգության արժանահավատ փաստ է և հաճախ անցյալի մասին ավելի շատ տեղեկություններ է տրամադրում, քան գրավոր կամ այլ տիպի աղբյուրները:

## Լրացուցիչ տեղեկություններ

**Խորագիր. Սա հետաքրքիր է**

**Լեգենդ Մճիշթա գետի մասին**

Լեռնային անհանգիստ գետը անընդհատ բախվում էր ուղղաբերձ ժայռերին և վրդովում նրանց: Ժայռերն այլևս չկարողացան դիմանալ գետի հանդգնությանն ու որոշեցին պատժել նրան: Դղրդացին լեռները, ժայռերը հուսին դարձած իջան կիրճ: Ամբարտակվեց Լաշիփսեն: Շուտով այստեղ առաջացավ չքնաղ Ռիծա լիճը:

Ռիծան՝ Լաշիփսեի առաջնեկը, որոշեց օգնել ամբարտակված գետին և ազատել նրան: Ռիծան սպասեց գարնան գալուն, և երբ լիճը լցվեց մինչև բերանը, սեղմեց արգելապատնեշը, սեղմեց, սակայն չկարողացավ հաղթահարել: Իզուր էին իրար դեմ պայքարում լիճն ու ժայռաբեկորների ստեղծած արգելապատնեշը: Ռիծան չկարողացավ համակերպվել Լաշիփսեի գերության հետ, հավաքեց վերջին ուժերը և սեփական կուրծքը ճեղքեց: Առաջացած ճեղքի մեջ իջավ լճի ջուրը: Մճիշթան երկար ժամանակ ճանապարհ էր որոնում դեպի լույս: Վերջում գտավ ելքը և ուժեղ մառախուղի ներքո թեթև շղարշով պատվեց: Այսպես առաջացավ Մճիշթա գետը:

Մի քանի տարի առաջ սկսվեցին Բեդիայի տաճարի «վերականգնողական աշխատանքները», ինչը կարող է հուշարձանի համար տխուր հետևանքների բերել: Վանքում նկարահանված տեսակադրերից երևում են, որ վրայից ներկված էին տաճարի պատերը և Բագրատ III-ի որմնանկարը:

**Պիցունդան** հնագույն ժամանակներից քրիստոնեության հզոր օջախներից մեկն էր: Նրա կենտրոնում է գտնվում վրացական ճարտարապետական հուշարձան **Պիցունդայի եպիսկոպոսական առաջնորդանիստ տաճարը**: Այն խաչագմբեթավոր կառույց է: Կառուցված է քարի և աղյուսի շարքերի հերթագայությամբ: Գմբեթը հիմնվում է զոհասեղանի պատերի ցցվածքի և երկու սյուների վրա: Վերջին տարիներին ինտենսիվ վերականգնողական աշխատանքներ են կատարվել, ինչի պատճառով հին զարդանկարներն ամբողջությամբ ոչնչացվել են: Այս տաճարը, այնպես ինչպես Աբխազիայի տարածքում գտնվող այլ հուշարձաններ, օրգանապես ներգրավված են վրացական ճարտարապետության զարգացման մեջ:

Ներկայիս Նոր Աֆոնի տարածքում է գտնվում **Անակոֆիայի Սուրբ Սվիմոն Կանանեցու** եկեղեցին, որը բերդի տարածքում է կառուցված, վերջին անգամ վերանորոգվել է 1991 թվականին, սակայն գմբեթը չի նորոգվել, ինչի պատճառով շենքի վրա անձրև է տեղում, և վնասվում են որմնանկարների մնացած դրվագները: Համաձայն վրացական աղբյուրների, այստեղ է հանգչում Վրաստանում քրիստոնեության առաջին տարածողներից մեկի՝ Սվիմոն Կանանեցու աճյունը: Այստեղ է գտնվում նաև Նոր Աֆոնի Սուրբ Պանտելեյմոնի վանքը:

**Սուրբ Հովհաննես Ոսկեբերանի վանքը** գտնվում է Սոխումիի հյուսիսում, Կոման գյուղում, Սուրբ ջրերի մոտակայքում: Թվագրվում է X-XI դարերով: Այս տաճարն ավերել են և ոչնչացրել այստեղ գտնվող սուրբ աղոթատեղիները: Վանքը վերականգնել են Աբխազիայի պատերազմի նախորդ տարիներին: Այստեղ է տեղակայված Սուրբ Հովհաննես Ոսկեբերանի դամբարանը, Սուրբ Վասիլիսկոյի գերեզմանը: Սա Համաշխարհային քրիստոնեական եկեղեցու Սրբոց սուրբ վայրն է:

**Աբխազիայում, Սև ծովի ափի մոտ հույները** հնագույն ժամանակներում շատ քաղաքներ են հիմնադրել: Ամենից հայտնին Դիոսկուրիան է (ներկայիս Սոխումին), որի մի մասը ժամանակի ընթացքում ջուրն է ծածկել:

XX դարի 50-ական թվականներին հնագետները Աբխազիայի ափի մոտ Սև ծովի հատակի ուսումնասիրություն սկսեցին և բազմաթիվ հետաքրքիր իրեր հայտնաբերեցին, այդ թվում՝ կավե սպասք, Դիոսկուրիայի մետաղադրամներ և մ.թ.ա. V դարի մարմարե գերեզմանաքար՝ կանանց և երեխաների պատկերներով:

Աբխազիայի տարածքում 6 արգելոց կա, որտեղ 2000-ից ավելի տեսակի բույս է աճում: Դրանցից շատերն այնպիսին են, որոնք հնում լայնորեն տարածված էին և այսօր տեղ-տեղ են հանդիպում: Նախ և առաջ, ուշագրավ է Պիցունդայի սոճին: Հենց այս սոճու լատիներեն անվանումից է առաջացել Պիցունդայի հնագույն անվանումը՝ Պիտիունտը:

| Դասի թեման | 7.3. Թբիլիսիի բնակչության էթնիկ կազմը |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը.<br>Ծանոթանում է Թբիլիսիի բնակչության էթնիկ կազմին:<br>Վերլուծում է գաղթային գործընթացների ազդեցությունը քաղաքային կյանքի վրա:<br>Դատողություն է անում բազմաէթնիկ և բազմամշակույթ քաղաքի առանձնահատկությունների մասին: |
| **Համապատասխանությունը ԱՈՒՊ-ին** | (II)1 (II)8 (II)9 (II)12 (II)13 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Դասը սկսվում է Ուորդրոպի խոսքերով՝ Թբիլիսիի մասին: Հարց. Ինչ եզրակացություն կարելի է անել այս բառերից, և որքանով է այն համապատասխանում իրականությանը: (5 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Աշակերտները ծանոթանում են գերմանացիների՝ Թբիլիսիում վերաբնակեցնելու պատմությանը և դատողություն են անում այն մասին, թե ինչ նորություններ ներմուծեցին գերմանացիները Թբիլիսիի ամենօրյա կյանքում: (5 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Կազմակերպեն քննարկում. Արդարացվա՞ծ է արդյոք տարբեր ազգությունների մարդկանց հավաքվելը մեկ քաղաքում, և չի՞ ստեղծվում արդյոք վտանգ տեղական ավանդույթների և մշակույթի համար: (15 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Գնահատում (5 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Տնային առաջադրանք. Գտնել տեղեկություններ Թբիլիսիում ապրող տարբեր էթնիկ խմբերի մասին և արդյունքները ներկայացնել դասարանի առջև: |
| **Գնահատումը** | Քննարկման գնահատման խորագիր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, թերթեր |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը |
| **Ունեցած գիտելիքը** | Տեղեկություններ տարբեր երկրամասերի էթնիկ և մշակութային բազմազանության մասին: |

Ակտիվություն 2-ի ենթադրյալ պատասխանները. տեխնոլոգիական նորություններ բերեցին, ներկրեցին կարտոֆիլը, հիմնեցին արհեստանոցներ:

Տնային առաջադրանքը կատարելու ժամանակ խորհուրդ տվեք համացանցային ռեսուրսների կամ օժանդակ գրականության օգտագործմամբ գտնել տեղեկություններ Թբիլիսիում ապրող հույների, ադրբեջանցիների, հրեաների, քրդերի, հայերի մասին և կազմակերպել շնորհանդես. «Թբիլիսյան բակ»:

| Դասի թեման | 7.4. Թբիլիսիի բնակչության կրոնական կազմը |
|---|---|
| Դասի նպատակը | Աշակերտը.<br>Վերլուծում է կրոնական բազմազանության նշանակությունը:<br>Վերլուծում է բազմակրոն հասարակությունում հանդուժողականության, ներողամտության նշանակությունը:<br>Ծանոթանում է Թբիլիսիի բնակչության կրոնական կազմին: |
| Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին | (II)1 (II) (II)9 (II)12 (II)13 |
| Դասի ընթացքը | **Ակտիվություն 1.** Նախորդ առաջադրանքի շնորհանդես (տե՛ս դասը՝ Թբիլիսիի էթնիկ կազմը): Աշակերտները գիտակցեն, որ էթնիկ բազմազանությանը հետևում է նաև կրոնական բազմազանություն: (10 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Աշակերտներն անվանում են կրոնները, որոնց հետևորդներ ապրում են Թբիլիսիում: (2 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Աշխատանք տեքստի վրա. Ծանոթանան դասագրքի տեքստին և դուրս գրեն պաշտամունքային շինությունները: (5 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Իրար հետ համեմատեն հունական, կաթոլիկ, վրացական և լյութերանական եկեղեցիները: Դատողություն անեն Թբիլիսիի մզկիթի յուրահատկության մասին: (15 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում<br>**Ակտիվություն 6.** Տնային առաջադրանք. Գտնել տեղեկություններ կրոնական փոքրամասնությունների մասին և դատողություն անել նրանց ազատության մասին: |
| Գնահատումը | Ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր |
| Ռեսուրսներ | Դասագիրք, գրատախտակ, կավիճ |
| Դասարանական մենեջմենթը | Ամբողջ դասարան, անհատապես |
| Ունեցած գիտելիքը | Թբիլիսիի բնակչության էթնիկ կազմը |

Լրացուցիչ նյութ ուսուցչի համար

Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլյա II-ի և Վրաստանի Սուրբ Սինոդի դիմումը

Վրաստանի հզորության և ազգի միասնականության հիմքում այսօր էլ պետք է դրվի հոգևորը և բարոյականությունը: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է պահպանել ինքնատիպ կյանքը և մշակույթը: Սրանով Մայր եկեղեցին չի քարոզում դռնփակություն և բոլորովին էլ չի նսեմացնում այլ երկրների հետ հարաբերությունների նշանակությունը. ընդհակառակը՝ բոլորս լավ գիտենք, որ մեր կենսակերպի ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել ինչպես Արևելքը, այնպես էլ Արևմուտքը: Մեր ավանդույթի համար անընդունելի են նաև անհանդուրժողականությունը և ագրեսիան: Օտար ազգերի և դավանանքների ներկայացուցիչների նկատմամբ Վրաստանում երբեք չի եղել հետապնդում և ճնշում՝ էթնիկ և կրոնական հիմքով: Դա է պատճառը, որ այստեղ ապրող ուրիշ ազգությունների և դավանանքների ներկայացուցիչները սիրով են լցված մեր հող ու ջրի և ժողովրդի նկատմամբ:

Պատրիարքարանի տեղեկատու № 35

## Լրացուցիչ տեղեկություններ

**Խորագիր. Սա հետաքրքիր է**

**Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանը**

1847 թվականին Կովկասի փոխարքա Միխայիլ Վորոնցովը խնդրանքով է դիմել վրաց բանաստեղծ և հասարակական գործիչ Վախթանգ Օրբելիանիին՝ իր միջոցներով հանրային գրադարանի շինություն կառուցելու համար, ինչին Վախթանգ Օրբելիանին համաձայնել է, և 1851 թվականին շենքը փոխանցվել է հանրային գրադարանին: 1850 թվականին Միխայիլ Վորոնցովը, որպես գրադարանավար հրավիրեց Մոսկվայի Ռումյանցևի թանգարանի առաջատար աշխատակից Լյուդվիգ դե Սան-Տոմային, ով մի քանի ամիս աշխատեց: Այնուհետև առողջության վատթարացման պատճառով նա իր աշխատատեղը փոխանցեց իր որդուն, ով մինչև 1857 թվականը ղեկավարում էր գրադարանը: 1852 թվականի հունիսից Միխայիլ Վորոնցովի կարգադրությամբ գրաքննական կոմիտեին հանձնարարվեց Կովկասի շրջանակներում տպագրված բոլոր հրատարակությունների երկու օրինակ՝ որպես պարտադիր օրինակ, փոխանցել հանրային գրադարանին:

Միխայիլ Վորոնցովի կարգադրությամբ մինչև 1852 թվականը գրքից օգտվելու համար գրադարանը բաց էր առավոտյան ժամը 10-ից մինչև ժամը 4-ը, իսկ 1852 թվականից ցերեկվա ժամը մեկից մինչև մթնելը: 1868 թվականին Կովկասի փոխարքայի տնօրինման մեջ եղած հաստատությունների վերակառուցման հետևանքով Թբիլիսիի հանրային գրադարանը և Կովկասյան թանգարանը միավորվեցին կառավարման մեկ համակարգի մեջ և ստացան «Կովկասյան թանգարան և Տփխիսի հանրային գրադարան» անունը:

1869 թվականին սկսվեց գրադարանի նոր շենքի շինարարություն Կովկասյան թանգարանից մոտավորապես 60 մետր հեռավորության վրա: 1871 թվականին գրադարանը նոր շինություն տեղափոխվեց: Կովկասյան թանգարանի և Տփխիսի հանրային գրադարանի լեգենդար տնօրենի՝ Գուստավ Ռադեի վախճանվելուց հետո գրադարանի համալրման և, ընդհանրապես, գործունեության հարցը խափանվեց: 1913 թվականի դեկտեմբերի 3-ին Տփխիսի հանրային գրադարանը վերափոխվեց գիտական գրադարանի և ամբողջությամբ միավորվեց Կովկասյան թանգարանի հետ: 1914 թվականին Կովկասյան թանգարանի նոր շինության կառուցման պատճառով գրադարանը փակվեց, իսկ ֆոնդերը արկղերի մեջ դասավորեցին և 10 տարի նկուղներում էին պահվում:

1923 թվականի մայիսի 30-ին Ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշումով հիմնադրվեց Վրաստանի Պետական հանրային գրադարանը՝ Տփխիսի հանրային գրադարանի և 1918 թվականին հիմնադրված Խորհրդարանի գրադարանի հիմքի վրա:

Այսօրվա դրությամբ Ազգային գրադարանում գործում է էլեկտրոնային դահլիճ, հրատարակչություն-ների անկյուն՝ նորագույն գրքերով, շնորհանդեսային և կինո-անկյուն, ինչպես նաև վրացագիտության էլեկտրոնային դահլիճ և նորացված մանկական սենյակ:

2014 թվականին նոր դահլիճների թիվն ավելացավ. մանկական սենյակ, Էմիգրացիայի դահլիճ, Ազգային թվային լուսանկարչական տարեգրություն, Գրագիտությունը տարածող ընկերության սրահ, նույն թվականին Ազգային գրադարանին փոխանցվեց շենք Քութաիսիում, որտեղ որոշվեց ստեղծել Ազգային դեպոզիտարիում և օտարերկրյա կրթաօշակառուների բնակարան:

2015 թվականին Ազգային գրադարանում ևս մի քանի նոր համալիր ստեղծվեց. Մայրենի լեզվի սրահ, Խաղողի որթատունկի և գինու գրադարան, Աբխազական գրադարան, կարցեր-լյուքս, Վրացական էմիգրացիայի սրահ-ընթերցասրահ, Գրագիտությունը տարածող ընկերության ընթերցասրահ, ճնշամիջոցների ենթարկված գրքի թանգարան, Վախթանգ Զ-ի անվան աշխատակիցների աշխատանքային լաբորատորիա, ճաբուա Ամիրեջիբիի անվան առանձնասենյակ-ցուցադրանմուշ, Էլեկտրոնային գրադարան «Իվերիելիի» աշխատանքային լաբորատորիա, Ազգային գրադարանի և «Ջեոսելիի» համատեղ «Թվային լուսանկարչական տարեգրություն» նախագծի լաբորատորիա, Ռեստավրացիայի և պահածոյացման լաբորատորիա, ինտեգրված գրադարանային համակարգ **SIERRA**-ի կաբինետ:

**Սիմոն Ջանաշիայի անվան պետական թանգարան**. Վրաստանի թանգարանների շրջանում հնագույնն է: Այն հիմնադրվել է 1852 թվականին Կովկասյան թանգարանի բազայի վրա: Թանգարանի ֆոնդերում այսօրվա դրությամբ պահպանվել է 1 200 000 ցուցանմուշ (հիմնականում՝

հնագիտական և ազգագրական նյութեր, վրաց ոսկերչության, սրբանկարչության նմուշներ և այլն): Ստացիոնար ցուցանմուշների շրջանում առանձնանում է Դմանիսիում հայտնաբերված մարդու նախնիների (հոմինիդների) մնացորդների ցուցահանդեսը, որը 1,8 միլիոն տարով է թվագրվում և հանդիսանում է Աֆրիկա մայրցամաքի շրջանակներից դուրս հայնաբերված մարդու նախնու հնագույն նմուշ: Այս հայտնագործությունը արմատապես փոխեց մինչ այդ ընդունված մարդու էվոլյուցիայի տեսությունը: Թանգարանում ցուցադրված են նաև. նեոլիթի և բրոնզի դարաշրջանների հնագիտական հայտնագործությունների բազմազան նյութեր, հատկապես կարևոր և բազմազան ոսկե ֆոնդ, որտեղ ներկայացված են տարբեր պատմական ժամանակաշրջանների թանկարժեք մետաղյա և քարե հազվագյուտ իրեր: Այդ թվում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում նախաքրիստոնեական շրջանի ոսկերչության նրբատաշ նմուշները, որոնք թվագրվում են մ.թ.ա. երրորդ հազարամյակի երկրորդ կեսից մեր թվարկության չորրորդ դարով ներառյալ: Թանգարանում պահպանված ցուցանմուշները հայտնաբերված են Վրաստանի տարբեր տարածաշրջաններում՝ Անանուրիում, Ծնորիում, Մարտղոփիում, Թրիալեթիի դամբարանաբլուրներում, Վանիում, Ախալգորիում, Մցխեթայում, Ժինվալիում և այլ վայրերում:

**Թբիլիսիի հնագույն զբոսայգիներից մեկը՝«Մուշտաիդի զբոսայգին»** հիմնադրվել է XIX դարի 30-ական թվականներին: Քուռ գետի ձախ ափին, հողի 5 հեկտար տարածքի վրա 1828 թվականին այգին ստեղծել է Իրանից եկած Միր Ֆեթեխ-աղա Սեիդ Թավրիզին: Ինչպես իմանում ենք պատմական աղբյուրներից, նա Իրանի Ադրբեջանում շիաների կրոնական առաջնորդ-մուջթաիիդն է եղել: Հենց նրա հոգևոր կոչումից է բխում այգու անվանումը՝ Մուշտաիդի: Նույն զբոսայգում է հուղարկավորված նրա վրացուհի կինը: 1845 թվականին Միր Ֆեթեխ-աղա Սեիդ Թավրիզից զբոսայգին գնել է մի հարուստ կալվածատեր, իսկ ինքը՝ Ֆեթեխ-աղան հեռացել է Թբիլիսիից: 1887 թվականին զբոսայգու տարածքում Նիկոլայ Շավրովի ղեկավարությամբ Կովկասի մետաքսագործական կայան է հիմնվել: Կայանի համալիրը, որը մեզ է հասել քանդված տեսքով, կառուցվել է 1892 թվականին: Պահպանվել է համալիրի գլխավոր կառույցը, որում «Մետաքսի տան» մետաքսագործության թանգարանը, գրադարանն ու մետաքսագործության համակարգող կենտրոն է տեղակայված: 1853 թվականին զբոսայգին դարձավ գանձապետարանի սեփականությունը: Այստեղ ամեն օր անցկացվում էին ժողովրդական զբոսանքներ, ցուցահանդեսներ և ներկայացումներ: Մուշտաիդի զբոսայգին հավաքատեղի, ժամանցի և հանգստի կենտրոնի վերածվեց: Այգում 1935 թվականին հիմնվել է աշխարհում առաջին մանկական երկաթուղին: Զբոսայգում գործում էր թատրոն, բաց էստրադա, սրճարան-ռեստորան: Երեխաների համար, բացի երկաթուղուց, գործում էին նաև տարբեր ատրակցիոններ: Այսօր զբոսայգում կարող է հանգստանալ և զվարճանալ ցանկացած տարիքի մարդ:

Վրացական ազգագրական դպրոցի հիմնադիր ակադեմիկոս Գիորգի Չիտաիայի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ 1966 թվականին հիմնադրվել է Կովկասում առաջին ազգագրական թանգարանը, որը կոչվել է Վրացական ճարտարապետության և կենցաղի պետական թանգարան:

Ազգագրական թանգարանը հանդիսանում է Վրաստանի փոքր մոդել և արտացոլում է նրա բազմազան էթնոմշակույթը: Թանգարանի տարածքը ներառում է 52 հեկտար և բաժանված է 11 գոտիների: Թանգարանի գլխավոր հատակագծի հեղինակն է Լոնգինոզ Սումբաձեն: Ժողովրդական ճարտարապետությանը և կենցաղին բնորոշ օբյեկտները ցուցադրված են 10 պատմա-ազգագրական գոտիներում: Թանգարանում ներկայացված է շուրջ 70 բնակելի տուն և տնտեսական կառույց Վրաստանի տարածաշրջաններից. Քարթլի, Կախեթի, Սամցխե-Ջավախեթի, Իմերեթի, Գուրիա, Սամեգրելո, Աջարիա, Աբխազիա, Ռաճա-Լեչխումի և Սվանեթի: Մի գոտին տրամադրված է պատմա-հնագիտական հուշարձաններին, որոնց թվում են V-VI դարերի Սիոնի բազիլիկը, մ.թ.ա. երկրորդ հազարամյակի դամբարան (դոլմեն) Աբխազիայից և գերեզմանաքարերի հարուստ հավաքածու:

1920 թվականին Դիմիտրի Շևարդնաձեի առաջնորդությամբ Թբիլիսիում հիմնադրվեց **Ազգային պատկերասրահ**: Այս փաստը հիացմունքով ընդունեց այն ժամանակվա հասարակությունը, ինչն էլ սահմանեց պատկերասրահի հետագա ճակատագիրը: Հասարակության կողմից ցուցաբերած հետաքրքրության, աջակցության և պատկերասրահի հիմնադիրների ջանքերի շնորհիվ Ազգային պատկերասրահը վերածվեց կարևոր օջախի, որտեղ սկսվեց վրացական մշակույթի հուշարձանների հավաքումը:

1932 թվականին, հանրապետության կառավարության որոշումով, տեղի ունեցավ Ազգային պատկերասրահի վերակառուցում և նրա հենքի վրա հիմնադրվեց Կերպարվեստի թանգարան, որտեղ տեղ գտան Վրաստանի պատմա-ազգագրական և Վրացիների շրջանում գրագիտություն տարածող ընկերության, ինչպես նաև՝ Թբիլիսիի համալսարանի հին վրացական արվեստի հավաքածուները:
1933 թվականին թանգարանին Մետեխիի տաճարի հարակից տարածքում շինություն տրամադրվեց, ինչի պատճառով էլ հետագա տարիներին այն հիշատակվում է՝ որպես արվեստի թանգարան «Մետեխի»: Թանգարանի առաջին տնօրենը Դիմիտրի Շևարդնաձեն էր:
1945 թվականին, Էքվթիմե Թաղաիշվիլիի ջանքերով, 1921 թվականին մենշևիկյան կառավարության կողմից Ֆրանսիա տեղափոխված ազգային գանձարանը վերադարձվեց, որի մեծ մասը Արվեստի թանգարանին փոխանցվեց:
1950 թվականից թանգարանը կոչվում էր Արվեստի պետական թանգարան: Նույն թվականին նրան փոխանցվեց շինություն, որում մինչև այսօր էլ տեղակայված է: Դա ռուսական ամպիրի (նեֆրիտե) ոճի կառույց է, որը կառուցվել է 1838 թվականին, և տարիներ շարունակ այստեղ գործում էր հոգևոր ճեմարան:
Թանգարանի գանձարանում պահպանված են վրացական դրվագակերտ և գեղանկարչական սրբապատկերներ, արծնապատ իրեր, ոսկերչական իրեր, գեղարվեստական գործվածքի և ասեղնագործական հազվագյուտ նմուշներ: Դիտողների ուշադրությունն են գրավում հին վրացական որմանկարչությունը, վրաց նկարիչների գլուխգործոցները, ռուսական, եվրոպական և արևելյան երկրների արվեստի հուշարձանները:

**Թավիսուփլեբիս (Ազատության) հրապարակն** իր գոյության ընթացքում բազմաթիվ անվանումներ է փոխել: Սկզբից այն կոչվում էր Շտաբի հրապարակ: 1825 թվականից՝ Անդրկովկասի զորքերի հրամանատար, իսկ 1827 թվականից Կովկասի փոխարքա էր գեներալ Պասկևիչը: 1828-1829 թվականի ռուս-թուրքական պատերազմում Պասկևիչը դաժան պարտության մատնեց Թուրքիայի մեծաքանակ բանակին և ազատեց թուրքերի կողմից զավթված վրացական տարածքները՝ Ախալցիխեն և Ախալքալաքը, ինչպես նաև թուրքերին դուրս մղեց Հայաստանի մայրաքաղաք Երևանից:
1828 թվականին ռուս գեներալ Պասկևիչին Երևանի բերդը գրավելու համար Երևանի կոմսի՝ «Պասկևիչ-Երևանսկի» կոչում շնորհվեց: 1851 թվականին հապարակում ավարտվեց թատրոնի և քարվանսարայի շինարարությունը, այդ պատճառով հրապարակը մի ժամանակ կոչում էին Թատերական: Երբ 1856 թվականին Պասկևիչը վախճանվեց, նրա պատվին կենտրոնական հրապարակը Թբիլիսիի նախկին փոխարքայի՝ գրաֆ Պասկևիչ-Երևանսկիի անունով կոչեցին: Դրանից հետո երկար ժամանակ այս հրապարակը Թբիլիսիում համառոտ Երևանսկի հրապարակ էին կոչում, իսկ ավելի ուշ, Խորհրդային իշխանության շրջանում, ստացավ Երևանի հրապարակ անվանումը: 1918 թվականին, Վրաստանի անկախությունը նշելու համար, հրապարակի անունը փոխվեց և կոչվեց Թավիսուփլեբիս: Վրաստանի խորհրդայնացումից հետո այն դեռ Զակֆեդերացիայի հրապարակ (Անդրկովկասյան դաշնային հրապարակ) էր կոչվում (Անդրկովկասյան Դաշնային Հանրապետության ստեղծման պատճառով), իսկ այնուհետև՝Լենինի հրապարակ: Շատ կարճ ժամանակով հրապարակը կրել է Բերիայի անունը (մինչև 1953 թվականը): 1991 թվականին, Վրաստանի անկախության վերականգնումից հետո, նախագահ Զվիադ Գամսախուրդիայի նախաձեռնությամբ հրապարակին վերադարձվեց հին անվանումը՝ Թավիսուփլեբիս հրապարակ:
Թբիլիսիի գլխավոր հրապարակը մոտավորապես երկու դարի պատմություն ունի: Հրապարակը ոչ այնքան հեռավոր անցյալում քաղաքի պարսպից դուրս գտնվող անմարդաբնակ վայր էր հանդիսանում, շրջապատված թագավորական այգիներով և թզի ծառերով, Շիրազի վարդերով զարդարված:
Պարսպի պատը գրեթե այսօրվա հրապարակի արևելյան կողմի կառուցապատման գծին էր հետևում (մի փոքր խորքում) և Պուշկինի փողոցի երկայնքով ներքև էր իջնում: Իսկ այնտեղ, որտեղ այժմ Լեսելիձեի փողոցը միանում է հրապարակին, քաղաքի գլխավոր դարպասներից մեկը՝ Կոջորիի դուռն էր: Այստեղից երկու ճանապարհ էր սկսվում: Մեկն ուղղվում էր դեպի հյուսիս (ներկայիս Ռուսթավելիի պողոտայի գծով), իսկ երկրորդը գնում էր դեպի Կոջորի՝ այսօրվա Լեոնիձեի փողոցի երկայնքով:
XIX դարի անվանի վրաց պատմաբան Պլատոն Իոսելիանիի տեղեկությամբ, այսօրվա հրապարակի հյուսիսային կողմում, մոտավորապես այնտեղ, որտեղ այժմ Արվեստի թանգարանն է, XVIII դարի վերջին եղել է թագավորական քարվանսարա: Այն բավականին մեծ է եղել և շուրջ քառասուն տեղ է ունեցել: Նրա

իսկ տեղեկություններով, քարվանսարան թուրքերն են քանդել 1724 թվականի ներխուժման ժամանակ: Վախուշտիի և XVIII դարի 80-ական թվականներին կազմած Թբիլիսիի հատակագծերի վրա հրապարակի տարածքը հարավից և հյուսիսից այգիներով էր շրջապատված: Ըստ Վախուշտիի՝ այստեղ թագավորի, թագուհու և տիրացուի այգիներն էին, իսկ Պասկևիչի՝ 1785 թվականի հատակագծի վրա, թագավորի և թագուհու այգիներից բացի, նշված է նաև Գիորգի Բատոնիշվիլիի այգին: Վախուշտի Բատոնիշվիլին այս վայրերում նշել է միակ շինությունը, որը նա Բեժանի քարվանսարա է կոչում: Այն մոտավորապես այնտեղ էր գտնվում, որտեղ քաղաքի ինքնակառավարման շենքն է:

Ընդարձակ դաշտը հատում էր Սոլոլակի ձորը (ավելի ուշ՝ Ավանանց): Ձորի կողքով Սոլոլակի լանջից հոսող առվակ էր հոսում դեպի Քուռ գետը: Շատ խորը և լայն ձոր էր:

Երևանսկի հրապարակում ձորի առկայության ժամանակ հրապարակը գործնականում երկու մասի էր բաժանված: Ավելի ճիշտ հրապարակն իրականում 1824-1825 թվականներին կառուցված «Քաղաքային տան» («Կովկասյան կորպուսի շտաբ») առջև ձևավորվեց (ներկայիս Պուշկինի պուրակի տարածքում): Այն երեք կողմից կառուցապատած էր, իսկ հարավից սահմանակցում էր ձորը, որը ավելի ուշ թատրոնի շենքով լցվեց: Արդյունքում թատրոնի և քաղաքային ոստիկանության շենքի միջև առաջացավ նոր հրապարակ, որը հենց «Թատերական» էին կոչում: Արդեն 1934 թվականին, երբ այրված թատրոնի շենքը քանդեցին, հրապարակը միավորվեց և ստեղծվեց այն քաղաքաշինական տարածքը, որն այսօր արդեն Թավիսուփլեբիս հրապարակ է կոչվում:

1847-1851 թվականներին լցվեց Սոլոլակի ձորի մի մասը (Լեոնիձեի փողոցը և հրապարակը): Դա պայմանավորված էր նույն տարիներին հրապարակում թատրոնի և քարվանսարայի մոնումենտալ շենքի կառուցմամբ (իտալական կլասիցիզմ. ճարտարապետ՝ Ջովաննի Սկուդիեր): Երևանսկի հրապարակի տակ հսկայական խողովակ էին բացել՝ ջուրն անցկացնելու համար: Ժամանակակիցներից մեկի հիշողության համաձայն, մի անգամ սայլ է ընկել մեջը ձիով և Մուխրան Բատոնիի լաստանավի մոտ է դուրս եկել:

1850 թվականի «Կավկազ» թերթում կարդում ենք. «Հուլիսի 26-ին, կեսօրվա ժամը 5-ին Թբիլիսիում եկավ տեղատարափ անձրև, ջուրը Սոլոլոկիում թռցրեց կովը, անցկացրեց Երևանսկի հրապարակի տակ անցնող հսկայական խողովակով և տարավ հասցրեց Մուխրանի գետակի մոտ»: Այս գետակը սկսվում էր Սոլոլակի վերին մասից (Ամաղլեբա եկեղեցու տակ, ներկայիս Դավիթաշվիլիի փողոց), հատում էր Գուդովիչի (Ճոնքաձեի), Ռտիշչևի (Ջափարիձեի), Պասկևիչի (Մախարաձեի), Սերգիևի (Մաչաբելիի) չբնակեցված փողոցները, ճանապարհ էր հարթում դեպի Երևանսկի հրապարակ և լցվում Քուռ գետը Մուխրանի (Բարաթաշվիլիի) կամրջի տակ:

XIX դարի 30-ական թվականներին Երևանսկի հրապարակի ճիշտ կենտրոնում վաճառքի բերված վառելափայտի սայլերի կայանատեղի էր, իսկ կիրակի օրերը այստեղ հսկայական տոնավաճառ է կազմակերպվում: Ինչ ասես վաճառվում էր այստեղ. կանաչի և գործվածքեղեն, կահույք և չորքոտանի անասուն, մորթի և մունդիր, վառելափայտ և հարդ, Զարամանյանի դիմանկարներ և նույնիսկ հնագրավաճառի գրքեր:

Պուշկինի փողոցում հնում թեյատներ և միկիտանների կրպակներն էին, որտեղ ղումար և այլ մոլախաղեր էին խաղում: Սազանդարը փողոցում ազատ երգում էր քաղաքային երգեր:

Երբ Վորոնցովի հրամանով 1847 թվականին Թամամշևը հրապարակում թատրոն և քարվանսարա կառուցեց, շուկան մի փոքր ներքև տարան, ճիշտ այնտեղ, որտեղ ներկայում Պուշկինի պուրակն է: Շուկայի ժողովրդին գրավելու և ժամանցի համար, կազմակերպվում էին միմոսախաղեր: Այստեղ էժանագին կրկեսի դերասաններն օյինբազություն էին անում (Պ.Ումիկաշվիլի, Իվերիա, 1899): Մի կողմում ծաղրածուն (լարախաղացը) քայլում էր լարի վրա, մյուս կողմում հայտնի Աբելան կանգնած էր փայտե ոտքերի վրա և ժողովրդին էր զվարճացնում: Այս թաղամասում աղմուկ-աղաղակն ու իրարանցումը չէր պակասում: Ցերեկը տոնավաճառ էր, երեկոյան՝ կրկես: Ոստիկանությունը, որը բանակում ծառայած հաշմանդամներից էր բաղկացած, բոլորովին չէր անհանգստանում քաղաքում կարգուկանոնի պահպանման համար: Երևանսկի հրապարակը բոլորովին անխնամ էր և անուշադրության էր մատնված: Անսովոր շուկային ավելանում էր կեղտն ու ցեխը: Սալահատակները մի փոքր ուշ առաջացան: Սրածայր քարերի բեկորները այնքան անշնորհք էին դեսուդեն թափված, որ մարդ դժվարանում էր քայլել դրանց վրա:

Երևանի հրապարակում այս շուկան գոյություն ունեցավ մինչև 1885 թվականը: 1885 թվականի հունիսի 23-ից շուկան Վերա տեղափոխեցին: Կազակները հազիվ էին քշում առևտրականներին:

Սայլերը, «պովոզկաները» Վերա քշեցին, դրանց հետևից նաև՝ ձու, հավ ու մածուն վաճառողներին: «Սոլոլակիում ապրողը որ մի պուլիկ մածուն ուզենա, պետք է գնա Վերա», - գրում է ժամանակակիցը:

Ծուկայի տեղում այգի գցեցին, որը ժողովուրդը Նոր այգի էր անվանում: 1892 թվականի մայիսի 25-ին Երևանսկի հրապարակի նոր այգում վրաց հասարակության նվիրատվության հաշվին կանգնեցվեց Պուշկինի բրոնզե կիսանդրին (քանդակագործ՝ Ռ.Խուդորովիչ), ինչից հետո այն Պուշկինի պուրակ կոչվեց: Այգու հաճախակի հյուրերն էին ճեմարանի աշակերտները, որոնք ազատ ժամանակ զրույցներ էին կազմակերպում պոեզիայի, քաղաքականության մասին:

Հրապարակի ինտենսիվ կառուցապատումը սկսվեց XIX դարի առաջին քառորդում: Հրապարակի այսօրվա տեսքը, բացառությամբ մեկ-երկու շինությունների, XIX դարում ձևավորվեց և ոճական առումով բավականին խայտաբղետ պատկեր է ստեղծում:

1824-1825 թվականներին կառուցվեց Քաղաքային տունը (հետագայում՝ Կովկասի կորպուսի շտաբը): 1825 թվականին Յակոբ Զուբալաշվիլիի կողմից ոմն Թուրքեստանիշվիլուց գնված հողամասի վրա կառուցվեց «Պալաս» հյուրանոցը: 1838 թվականին շենքը եկեղեցական գերատեսչությունը գնեց հոգևոր ճեմարանի տեղակայման համար:

1830-ական թվականներին հրապարակի հարավային կողմի վրա, այնտեղ, որտեղ առաջ Բեժանի քարվանսարան էր, կառուցեցին քաղաքի ոստիկանության բաժանմունքը (նախկին քաղաքապետա-րանը), ոստիկանապետի գրասենյակով:

1851 թվականին Երևանսկի հրապարակի վրա, քաղաքի ոստիկանության դեմ շատրվան սարքվեց: Ջուրը բերվել էր Սոլոլակի աղբյուրներից: 1878-1879 թվականներին ոստիկանության շենքը հիմնավոր վերափոխվեց և այստեղ տեղափոխվեց Քաղաքային խորհուրդը, Վրաստանի անկախության ձեռքբերումից հետո՝ Թբիլիսիի քաղաքապետարանը:

Թատրոն-քարվանսարայի շենքի առջև, մուտքի մոտ երկաթյա առյուծներ տեղադրեցին (այժմ այդ առյուծները կարող եք տեսնել Սիոնիի կենտրոնական մուտքի մոտակայքում, քարվանսարայի դեմ): 1874 թվականին հրդեհից հետո վերականգնեցին միայն քարվանսարան: Վրաստանի խորհրդայնացումից հետո, 1930-ական թվականներին հրապարակի արմատական վերակառուցում իրականացվեց, ինչի հետևանքով վերացվեց նաև քարվանսարայի շենքը (1934թ.): 1956 թվականի ապրիլի 21-ին հանդիսավորությամբ բացվեց Վ.Ի.Լենինի հուշարձանը (քանդակագործ՝ Վ.Թոփուրիձե, Ու.Ջափարիձեի մասնակցությամբ, ճարտարապետներ՝ Գ.Մելքաձե, Կ.Չխեիձե, Կ.Խեչինաշվիլի, Շ.Ղավլաշվիլի): Հուշարձանը 1991 թվականին ժողովրդի ներկայությամբ քանդեցին: Դրա տեղը հետագայում զբաղեցրեց շատրվանը: 1967 թվականին հրապարակի տակ գործարկվեց մետրոյի համանուն կայարանը:

Հրապարակի հանդիպակաց կողմում պարսպի երկայնքով դեպի վար կառուցվեցին մեկ-երկու հարկանի տներ, այն ժամանակվա Թբիլիսիին բնորոշ կախովի պաշգամբներով, որոնք ունեին ցանցկեն զարդանախշերով զարդարված բազրիքներ և տիմպաններ: Մի այսպիսի տան մեջ, որը նախկին Բարեկամության թանգարանի տեղում էր գտնվում, կանգ է առել Ալեքսանդր Պուշկինը: Այս տներին XIX դարի երկրորդ կեսին փոխարինեցին ուրիշ շինություններ, որոնց մեծ մասը հասել է մինչև մեր օրերը:

Հրապարակի ճիշտ կենտրոնում 1956 թվականի ապրիլի 21-ին կանգնեցվեց Լենինի հուշարձանը:

1991-1992 թվականներին այսպես կոչված Թբիլիսյան պատերազմի ժամանակ հրապարակում մի քանի շինություն ոչնչացվեց: Նույն 1992 թվականին հայտարարվեց հեղինակային իրավունքների ձեռքբերման ճարտարապետական մրցույթ՝ քանդված թաղամասի վերականգնման համար, որն իրականացվեց 1999 թվականից 2 բնակելի շենքի կառուցմամբ (Լեոնիձեի փ.) և Վրաստանի ազգային բանկի նոր շենքի վերակառուցմամբ (ճարտ.՝ Գիորգի Գեգեշիձե): Սակայն, նույն թվականին հայտարարվեց նոր մրցույթ արդեն բազմագործառույթ շինությունների համար՝ անմիջապես հրապարակին հարակից: Արդյունքում 2002 թվականին հրապարակում բացվեց նոր հյուրանոց «Քորթիարդ Մարիոտը»:

2006 թվականի նոյեմբերի 23-ին հրապարակում հանդիսավորապես բացվեց սյան վրա վեր խոյացած Սուրբ Գիորգիի քանդակը (որը ճարտարապետ Զուրաբ Ծերեթելիի նվերն է քաղաքին): 27 տոննանոց 9 մետր բարձրության քանդակի վրա երկու կգ ոսկի է ծախսվել:

Խորհրդարանի շենքի տեղում հնում տաճար է եղել: Ուղղափառ քրիստոնեական առաջնորդանիստ տաճարը որպես հյուսիսկովկասցի լեռնականների դեմ Ռուսաստանի հաղթանակի խորհրդանիշ է կառուցվել և կրում էր ռուս Սուրբ Ալեքսանդր Նևսկու անունը: Շինարարությունը սկսվել է 1871 թվականին, սակայն ֆինանսական խնդիրների պատճառով շատ շուտ դադարեցվել է: Ավելի ուշ շինարարությունը վերսկսվեց, և 1897 թվականին արդեն պատրաստ տաճարը հանդիսավորապես

օծվեց: Տաճարը երկար տարիներ գործեց և ուներ հավատացյալների մշտական հոտ: 1921 թվականի փետրվարին տաճարի բակում հուղարկավորեցին Վրաստանի ռազմական դպրոցի ուսանողներին, այսպես կոչված յունկերներին, որոնք Կարմիր՝ 11-րդ բանակի դեմ պայքարում զոհվեցին:

Երբ Խորհրդային Վրաստանի կառավարության որոշմամբ սկսվեց Թբիլիսիի կառավարության շենքի կառուցումը, նրա համար քաղաքի գլխավոր մայրուղին, Նևսկիի տաճարի շենքի տեղն ընտրվեց և 1930 թվականի փետրվարի 7-ին խորհրդային կառավարությունը սկսեց տաճարի ապակառուցումը:

Նրանից հետո, երբ 1930 թվականին առաջացավ խորհրդարանի շենքի կառուցման գաղափարը, 1932 թվականի որոշումով, ստեղծվեց շինարարական հանձնաժողով և կառավարության շենքի համար մրցույթ հայտարարվեց: Նախագծեր ներկայացրին տարբեր տարիք և փորձ ունեցող ճարտարապետներ և, ի վերջո, մոսկովյան ժյուրիի որոշումով, հաղթեց Վիկտոր Կոկորինի և Գիորգի Լեժավայի նախագիծը:

1933 թվականի սեպտեմբերի 17-ին շինարարության հիմքը գցվեց հանդիսավոր իրավիճակում, և նրան ներկա էին կառավարության ներկայացուցիչներ, ճարտարապետներ և հասարակությանը հայտնի մարդիկ: Շինարարության ղեկավար նշանակվեց ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Սիկո Փիցխելաուրին:

Շինարարությունը երկու փուլով էր ընթանում. 1933-1938 և 1946-1953 թվականներին: Սկզբից կառուցվեց շինության ետին, կամ Բ մասնաշենքը, այնուհետև առջևի՝ Ա գլխավոր մասնաշենքը, որտեղ պետք է տեղակայվեին Վրաստանի Հանրապետության գերագույն մարմինները՝ Գերագույն խորհուրդը և Նախարարների խորհուրդը: Շինությունը Ռուսթավելիի պրոսպեկտից (այսպես էր կոչվում և ոչ թե պողոտա) 13 մետրով խորքի մեջ էր մտած, ինչը դյուրացնում էր նրա ընկալումը և ավելի լավ էր ցուցաբերում կառույցի մասշտաբները:

Անցյալ դարի 30-ական թվականների վերջին Ռուսթավելիի պողոտայում քանդեցին տրամվայի գծերը, ասֆալտապատվեց փողոցը, և նրանով սկսեցին տեղաշարժվել տրոլեյբուսներ: Շինարարության երկրորդ փուլում Կոկորինի և Լեժավայի հետ նշանակալի մասնակցություն ունեցավ և իր ներդրումն արեց ճարտարապետ Վլադիմեր Ինասարիձեն: Ի վերջո, կառավարության պալատի շենքի կառուցումը կապվում է այս երեք ճարտարապետների անունների հետ:

Ավելի ուշ, 1965 թվականի աշնանը, Ռուսթավելիի պողոտայի կողմում, շենքի աստիճանների առջև, պատվանդանի վրա կանգնեցվեց երկու մոնումենտալ կոմպոզիցիա: Այստեղ կանաչապատեցին նաև սանդղափուլերը, որոնք հետո փոխարինվեցին շատրվաններով:

| | |
|---|---|
| **Դասի թեման** | **8.10.** Դավիթ Շինարար |
| **Դասի նպատակը** | Աշակերտը.<br>Կճանոթանա Դավիթ Շինարարի մշակութային-կրթական գործունեությանը:<br>Կվերլուծի առևտրի զարգացման անհրաժեշտությունը երկրի համար և կհամեմատի ժամանակակից միտումների հետ: |
| **Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին** | (II)1 (II)2 (II)6 (II)9 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Իմաստային քարտեզի միջոցով անվանի բնագավառները, որոնց զարգացումն անհրաժեշտ է երկրի համար: (5րոպե)<br>**Ակտիվություն 2.** Աշխատանք տեքստի վրա՝ զույգերում կմշակեն թեմաները. Առևտրի զարգացումը Դավիթի ժամանակաշրջանում: Կրթությունը Դավիթի ժամանակ: (20 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Կատարված աշխատանքի շնորհանդես (10 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Կազմեն վարկանշային ցուցակ. Որ բնագավառների զարգացումն է այսօր գերակա, և հիմնավորեն իրենց ընտրությունը: (5 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում (5 րոպե) |
| **Գնահատումը** | Ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր |
| **Ռեսուրսներ** | Ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր |
| **Դասարանական մենեջմենթը** | Ամբողջ դասարանը, զույգեր |
| **Ունեցած գիտելիքը** | Դավիթ Դ-ի ռազմական և դատական բարեփոխումները: |

Վարկանշային ցուցակը կազմելու ժամանակ կարող եք օգտագործել հետևյալ սխեման.

| |
|---|
| Ամենակարևորը |
| |
| |
| |
| |

Պակաս կարևոր.

| Դասի թեման | **8.11. Պետական կառավարումը Միասնական Վրաստանում** |
|---|---|
| **Դասի նպատակը** | Աշակերտը ծանոթանա պետական կառավարման հին և ժամանակակից կառուցվածքին և գիտակցի անհատի դերը երկրի պատմության մեջ: |
| **Համապատասխա-նությունը ԱՈՒՊ-ին** | (II)1 (II)2 (II)8 |
| **Դասի ընթացքը** | **Ակտիվություն 1.** Աշակերտները ծանոթանում են Դավիթ Շինարարի ժամանակվա պետական կառավարման սխեմային, դուրս են գրում վեզիրների անունները և ուսուցչի օգնությամբ սահմանում դրանց համապատասխան ժամանակակից պաշտոնները: (10 րոպե)<br>**Ակտիվություն 2.** Մինի-դասախոսություն կենտրոնական և տեղական կառավարման մասին այն ժամանակվա Վրաստանում: (5 րոպե)<br>**Ակտիվություն 3.** Արտահայտեն սեփական կարծիքը՝ ինչպիսին պետք է լինի պետական պաշտոնյան: Պատասխանները գրվում են գրատախտակի վրա: (10 րոպե)<br>**Ակտիվություն 4.** Խմբային աշխատանքի ժամանակ կազմեն սեփական իրավունքների և պարտականությունների ցանկ և ներկայացնեն դասարանին: (10 րոպե)<br>**Ակտիվություն 5.** Գնահատում (5 րոպե)<br>**Ակտիվություն 6.** Տնային առաջադրանք - Գրել շարադրություն. «Ինչ է պետք քաղաքացուն պետությունից և պետությանը՝ քաղաքացուց»: (5 րոպե) |
| **Գնահատումը** | Ընթացիկ առաջադրանքի գնահատման խորագիր |
| **Ռեսուրսներ** | Դասագիրք, գրատախտակ, կավիճ, թերթեր |
| **Դասարանական մենեջմենթը** | Աշխատանք զույգերով, ամբողջ դասարանը |
| **Ունեցած գիտելիքը** | Քարթլիի թագավորության կառավարման կառուցվածքը |

Աղյուսակ առաջին ակտիվության համար

| Վեզիր | Ժամանակակից պաշտոնը |
|---|---|
| Մծիգնոբարթուխուցեսի-ճղոնդիդելի | Վարչապետ |
| Մանդատուրթուխուցեսի | Ներքին գործերի նախարար |
| Ամիրսպասալար | Պաշտպանության նախարար |
| Մեճուրճլեթուխուցեսի | Ֆինանսների նախարար |

## Լրացուցիչ տեղեկություններ

**Ռազմական բարեփոխումներ.** XII դարի առաջին քառորդում Վրաստանում Դավիթ Շինարարի կողմից անցկացվեցին մի շարք բարեփոխումներ, որոնք նպատակ էին նախանշում Վրաստանի բանակի զորավարժանքների կազմակերպում և պատերազմական գործողությունների մարտավարության և ռազմավարության վերափոխում-բարելավում: Դավիթ Շինարարը բանակում ռազմական խիստ կարգապահություն ներմուծեց: Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց զորքի լավ վարժանքին, այդ նպատակով նա առկա կանոններում զգալի փոփոխություններ կատարեց: Գործողության արագության համար նա հետևակ զորքը փոխարինեց հեծելազորի ջոկատներով: Լայնորեն սկսեց կիրառել թշնամուն դարանակալելու և նրա վրա անսպասելի հարձակման եղանակը: Ստեղծվեց հետախույզների («մստովրեբի») լայն ցանց:

Վրաստանի զորքի կարևոր հատկանիշներից մեկը արագ մանևրման կարողությունն էր, ինչին նպաստեցին Դավիթի կողմից կառուցված կամուրջները և կարգավորված ճանապարհները: Մեծ ուշադրություն դարձվեց առաջնագծի մարտիկներին, որոնք առաջինը պետք է մարտնչեին թշնամու դեմ: Ինքը՝ Դավիթ Շինարարը «նմանը չունեցող զորահրամանատար էր և առաջին գծում կռվող»: Վրաստանում մշտական բանակ ստեղծելու համար էական նշանակություն ուներ ղփչաղներին Վրաստան բերելը 1118-1120 թվականներին: Դավիթ Շինարարը «շարքերով գնացող ընտիր քառասուն հազար» ղփչաղների ապահովեց զենք ու զրահով, ձիերով և լավ վարժեց: Ղփչաղների պարտավորությունը Վրաստանի ֆեոդալական պետության նկատմամբ միայն զինվորական ծառայությունն էր, այսպիսով՝ նրանք կազմում էին մշտական զորքը: Անհրաժեշտության դեպքում թագավորը կարող էր զորակոչել «ընտիր և հանդերձավորված, իր թագավորության մարտիկներին, ովքեր ընտրյալներ էին և հանդերձավորված, լավագույն ձիերով էին և անսասան», որոնց ծառայությունից, ինչպես երևում է, թագավորն օգտվում էր միայն վճռական պահերին:

Ժամանակակից Վրաստանի պատմության մեջ նշանակալի իրադարձություն էր Ազգային գվարդիայի ստեղծումը 1990 թվականի դեկտեմբերի 20-ին: 1991 թվականի ապրիլի 30-ին Վրաստանում պաշտոնապես հայտարարվեց առաջին գարնանային զորակոչը: Վրացական բանակի օր հայտարարվեց ճիշտ ապրիլի 30-ը:

Վրացական զինված ուժերում կարևոր բարեփոխումների սկիզբը դրվեց 2003 թվականից հետո: Աճում էր ռազմական բյուջեն, Վրաստանը ներգրավվեց զորավարժության և հանդերձավորման ծրագրի մեջ: Ծրագրվեց վրացական բանակը ՆԱՏՕ-ի չափորոշիչներին համապատասխանության մեջ բերել:

**Դավաթի քարակոթողը** վրացական պաշտամունքային-հուշակոթող հուշարձան է: Հայտնաբերվել է Դուշեթիի մունիցիպալիտետի Դավաթի գյուղում, Ժինվալիի հնագիտական արշավի հետախուզողների ջոկատի կողմից, 1980 թվականին, Արագվի գետի ձախ վտակի՝ Աբանոսխևիի ակունքի մոտ, VIII-IX դարերի Աստվածամոր եկեղեցու ինտերիերում: Շինարարներն այն տարբեր նման քարակոթողների մասերի հետ ներկառուցել են նավերը սահմանազատող հիմնասյուների անկյուններում: Ժինվալիի հնագիտական արշավախումբը 1984 թվականին հանել է քարակոթողի մասերը հիմնասյունից: Այժմ այն պահվում է Վրաստանի ազգային թանգարանի Սիմոն Ջանաշիայի անվան Վրաստանի թանգարանում:

Վրաց գիտնականների համար հատկապես կարևոր է քարակոթողներից մեկը, որի մի մասի վրա հետևյալ տեսակի պատկեր կա. երկու հրեշտակապետերի՝ Միքայելի և Գաբրիելի ձեռքին մագաղաթ է, որի վրա վրացական ասոմթավրուլի այբուբենն է տրված: Սա առաջին այբուբենն է, որը հասել է մինչև մեր օրերը: Գիտնականների կարծիքով, Դավաթի քարակոթողը IV դարում է ստեղծվել, մոտավորապես 367 թվականին: Եթե նկարը ուշադիր դիտեք, կնկատեք ყ**-կ**, ტ**-տ** և ჭ**-ճ** տառերի գծանշաններ:

Ըստ Ռամին Ռամիշվիլիի, սա ոչ այլ ինչ է, եթե ոչ համապատասխան տարեթիվը 5000+300+20=5320: Վրացական գրի ստեղծման ժամանակ է համարվում մ.թ.ա. 284 թվականը, այսինքն՝ ըստ Աստվածաշնչի՝ երկրի ստեղծումից մինչև Քրիստոսի ծնունդը հաշվվում է 5604 տարի: Դավաթի քարակոթողի վրա 5320 թվանշանը ոչ այլ ինչ է, եթե ոչ 5604-284=5320:

**Վաղ ֆեոդալական Վրաստանում «բճե» և «մսաջուլի» դատավոր էր նշանակում**: Սակայն, ըստ որոշ պատմական աղբյուրների, դատավորն այս տերմինով հիշատակվում էր նաև հնագույն շրջանում:

Միջին դարերում շատ կարևոր գործերը թագավորն էր քննում: Թագավորի իրավասությունների մեջ էր մտնում այնպիսի գործերի քննումը, ինչպիսիք էին, օրինակ, պատվոգրից զրկելը, թագավորի դրամարկղը թալանելը կամ թագավորներին դավաճանելը: Անհրաժեշտության դեպքում թագավորը հրավիրում էր նաև խորհուրդ: Լինում էր նաև այնպես, որ խոշոր գործերի քննումը թագավորը վստահում էր որևէ իշխանազնի:

Դավիթ Շինարարի ժամանակ գերագույն դատարանը կոչվում էր «Սաաջո կարի» և ենթակա էր մծիգնոբարթուխուցեսի-ճղոնդիդելիին:

Էրեկլե Բ-ի գահակալության տարիներին կատարվեց դատարանի վերակառուցում և ձևավորվեց մդիվանբեգերի դատարան: Այն գործում էր նաև Իմերեթիի թագավորությունում, Գուրիայում և Սամեգրելոյում:

**XIX** դարում Ռուսաստանի կայսր Ալեքսանդր Բ-ի կողմից կատարված դատական բարեփոխումը վերաբերեց նաև Վրաստանին: Ստեղծվեցին նոր հաշտարար բաժիններ՝ հաշտարար դատավորներով, քաղաքային դատարաններ և դատական պալատ:

Վերջին տարիներին անցկացված դատական բարեփոխման հիման վրա ձևավորվեց ժամանակակից տիպի դատական համակարգ, որը եռաստիճան է: Առաջին ատյանի դատարաններ են շրջանային և քաղաքային դատարանները: Երկրորդ ատյանի կամ վերաքննիչ և երրորդ՝ վճռաբեկ (գերագույն) դատարան, որի որոշումը վերջնական է:

Դատավորի սեղանի վրա դրված է Արդարադատության խորհրդանշաններից մեկը՝ մուրճը: Բացի մուրճից, դատավորի հիմնական ատրիբուտներից մեկը պատմուճանն է: Տարբեր ատյանների դատավորները տարբեր գույնի պատմուճան են հագնում: Օրինակ, առաջին ատյանի դատավորը՝ հոնագույն պատմուճան է հագնում, վերաքննիչի դատավորը՝ կանաչ, գերագույն դատարանինը՝ սև:

# 11. ԱՄՓՈՓԻՉ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ. ԻՆՉ ԳԻՏԵՄ ԵՎ ԻՆՉ ԵՄ ԿԱՐՈՂ

**Գլուխ I. Կախեթի**

**Ամփոփիչ առաջադրանք. Ինչ գիտեմ և ինչ եմ կարող**

Ամփոփիչ աշխատանքը ներառում է մի քանի տեսակ առաջադրանքներ, որոնց նպատակն այն է, որ աշակերտները ձեռք բերեն տեղեկություններ գինեգործության զարգացման ավանդույթների և խաղողի տեսակների մասին, գիտակցեն գինեգործության՝ որպես ավանդական բնագավառի զարգացման հեռանկարները, իրենց ներգրավվածությամբ նպաստեն խաղողի տեսակների հանրամատչելիացմանը:

Առարկայական չափորոշչին համապատասխան, ԱՈՒՊ-ով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքը.

Հաս.գիտ.(II) 3, Հաս.գիտ.(II) 6, Հաս.գիտ.(II) 7

Կազմակերպման ձևը՝ փոքրիկ խմբեր:

Այս աշխատանքի առաջադրանքներից մեկը տեղեկատվական գրքույկի ստեղծումն է, որը կարող է գնահատվել հետևյալ խորագրի կիրառմամբ: Առաջադրանքի առավելագույն միավորն է 10-ը:

| Գնահատման չափանիշ | Միավոր |
|---|---|
| **Տեղեկությունների տրամադրում**<br>Տեղեկությունների տրամադրումը լիարժեք է, երևում է՝ ով է պատրաստում գրքույկը, որն է նպատակը, ինչ լսարանի համար է հաշվարկված:<br>Ներառում է տեղեկատվական նշանաբաններ կամ վերնագրեր: – 2<br>Տեղեկատվությունը մակերսային է, երևում է՝ ով է անում, սակայն չի ընդգծված աշխատանքի նպատակը: – 1<br>Տեղեկատվությունը նվազագույն է և չի համապատասխանում աշխատանքի նպատակին: - 0 | 2 |
| **Բովանդակության իմացություն**<br>Բովանդակությունը լավ է կազմակերպված, հայթայթված նյութը հաջորդաբար է ներկայացված, երևում է, որ աշակերտները հասկանում են գինեգործության զարգացման նշանակությունը, տրված է արտադրանքի նկարագիրը և օգտակարությունը: - 2<br>Բովանդակությունն այնքան էլ լավ չի կազմակերպված: Երևում է, որ աշակերտներին անհրաժեշտ է օգնություն, որ գիտակցեն գինեգործության զարգացման նշանակությունը: - 1<br>Բովանդակությունը նվազագույն է և չի կազմակերպված: - 0 | 2 |
| **Համոզչություն**<br>Գրքույկում ներկայացված են փաստարկներ, թե ինչու պետք է կատարվի այս կամ այն տեսակի հանրամաչելիացումը, երևում են գաղափարներ, առաջարկությունները տրամաբանական են: - 2<br>Առաջարկությունները համոզիչ չեն: - 1<br>Աշխատությանը կից չկան փաստարկներ խաղողի այս կամ այն տեսակի հանրամատչելիացման մասին: - 0 | 2 |
| **Դիզայնը**<br>Տեսանելի նյութերը, լուսանկարները, գրաֆիկական պատկերները կամ այլ ատրիբուտներ նպաստում են բովանդակության յուրացմանը և որակյալ են: - 2<br>Տեսանելի նյութերը, լուսանկարները, գրաֆիկական պատկերները կամ այլ ատրիբուտներ պակաս են նպաստում բովանդակության յուրացմանը: - 1<br>Չեն օգտագործված տեսանելի նյութեր, լուսանկարներ, գրաֆիկական պատկերներ: - 0 | 2 |
| **Տեխնիկական կողմը**<br>Գրելու և քերականական առումով թույլ չեն տրված սխալներ: - 2<br>Մի քանի սխալ է թույլ տրված, ինչն ազդում է տեքստի բովանդակության վրա: - 1<br>Շատ սխալներ են թույլ տրված, ինչը դժվարացնում է տեքստը հասկանալը: - 0 | 2 |

**Առաջադրանք II. Նախագծի պատրաստում: Թեմա. «Պահպանի՛ր բնությունը»**

Նպատակը. Աշակերտները տեղեկություններ գտնեն պահպանված տարածքների մասին, ըմբռնեն բնական միջավայրի նշանակությունը, դատողություն անեն պահպանական խնդիրների մասին և արտահայտեն իրենց վերաբերմունքը:

Առարկայական չափորոշչին համապատասխան, ԱՈՒՊ-ով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքը.

Հաս.գիտ.(II) 3, Հաս.գիտ.(II) 9, Հաս.գիտ.(II) 14

Առաջադրանքի գնահատման խորագիր

**I չափանիշ**

| № | Աշխատանքի կազմակերպում | Միավորներ |
|---|---|---|
| 1 | Աշխատանքը լավ է կազմակերպված, առաջադրանքները խմբի անդամների միջև ճիշտ վերաբաշխվեցին: | 2 |
| 2 | Աշխատանքը կազմակերպված է, սակայն խմբի անդամների միջև գործառույթները անհավասար բաշխվեցին: | 1 |
| 3 | Աշխատանքը կազմակերպված չէ, խմբի անդամների միջև գործառույթները չբաշխվեցին: | 0 |

**II չափանիշ**

| № | Ցուցահանդեսի ձևը և բովանդակությունը համապատասխան են | Միավորներ |
|---|---|---|
| 1 | Ցուցահանդեսին ներկայացված նմուշները համարժեք են և համապատասխանում են առաջադրանքի նպատակին: Բնության պահպանման հետ կապված խնդիրը ըմբռնված է: | 2 |
| 2 | Ցուցահանդեսին ներկայացված նմուշները մասամբ են համապատասխանում առաջադրանքի նպատակին և խնդրի գիտակցումն էլ պակաս համարժեք է: | 1 |
| 3 | Հարցազրույցի ձևը և բովանդակությունը չեն համապատասխանում առաջադրանքի նպատակին: | 0 |

**III չափանիշ**

| № | Հայթայթած նյութի համարժեքությունը | Միավորներ |
|---|---|---|
| 1 | Ձեռք բերված նյութը համարժեք է առաջադրանքի նպատակին, իմաստային առումով ճիշտ է ձևակերպած և չի պարունակում փաստացի սխալներ: | 2 |
| 2 | Ձեռք բերված նյութը համապատասխանում է առաջադրանքի նպատակին, սակայն նկատվում են իմաստային առումով ձևակերպման անճշտություններ և փաստացի սխալներ: | 1 |
| 3 | Հայթայթված նյութը անհամապատասխան է առաջադրանքի նպատակին: | 0 |

**IV չափանիշ**

| № | Շնորհանդեսի նպատակի գիտակցում | Միավորներ |
|---|---|---|
| 1 | Խմբի անդամները հասկանում են շնորհանդեսի նպատակը, ներկայացված թեզիսները և հետազոտության արդյունքները համապատասխանում են առաջադրանքի պահանջին: | 2 |
| 2 | Խմբի անդամները հասկանում են շնորհանդեսի նպատակը, սակայն նրանց հետազոտության արդյունքները մասամբ են համապատասխանում առաջադրանքի պահանջին: | 1 |
| 3 | Խմբի անդամները չեն հասկանում շնորհանդեսի նպատակը: | 0 |

**V չափանիշ**

| № | Պաստառի համապատասխանությունը առաջադրանքի նպատակին | Միավորներ |
|---|---|---|
| 1 | Խմբի անդամների պատրաստած պաստառի բովանդակությունը համապատասխանում է տվյալ առաջադրանքին: Պաստառն ունի համապատասխան կոչ տարերային երևույթները կանխելու ուղիների մասին: | 2 |
| 2 | Խմբի անդամների պատրաստած պաստառը և կոչը պակաս են համապատասխանում առաջադրանքի նպատակին: | 1 |
| 3 | Խմբի անդամները չունեն պատրաստած պաստառ, կամ պաստառի բովանդակությունը չի համապատասխանում առաջադրանքի նպատակին: | 0 |

**Գլուխ II. Արևելյան Վրաստանի լեռնաշխարհը: Ինչ գիտեմ և ինչ եմ կարող**

Ամփոփիչ առաջադրանքը հետազոտություն է, որի նպատակն այն խնդիրների վերլուծումն է, որոնց առջև կանգնած են Արևելյան Վրաստանի լեռնաշխարհի լքված գյուղերը, և այն մեխանիզմների գիտակցումը, որոնք անհրաժեշտ են այս խնդիրների լուծման համար:

Առարկայական չափորոշչին համապատասխան, ԱՈՒՊ-ով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքը.

Հաս.գիտ.( II) 3, Հաս.գիտ.( II) 7, Հաս.գիտ.(II) 9, Հաս.գիտ. (II) 14

| Գնահատման չափանիշ | Միավոր |
|---|---|
| **Հետազոտական հարցի հրատապության հիմնավորում**<br>Աշխատության մեջ համոզիչ է երևում այն հիմնական խնդիրը/հարցերը, որոնց կարգավորման համար պատրաստվել է տվյալ հետազոտությունը: - 2<br>Թվարկված են հիմնական խնդիրները/հարցերը, սակայն նրանց հրատապությունը համոզիչ չէ: - 1<br>Չեն երևում հիմնական խնդիրները, ինչի համար պատրաստվել է հետազոտությունը: - 0 | 2 |
| **Հետազոտության նպատակը**<br>Երևում է կատարվելիք աշխատանքի նպատակը, և սպասվելիք արդյունքներն էլ հստակ են: - 2<br>Կատարվելիք աշխատանքի նպատակը հստակ չէ: - 1<br>Աշխատության մեջ չի նշված հետազոտության նպատակը: - 0 | 2 |
| **Հետազոտության համար անհրաժեշտ տեղեկատվության մշակում**<br>Հայթայթված տեղեկությունը լիարժեք է և համապատասխանում է հետազոտական հարցին: - 2<br>Հայթայթված տեղեկությունը մակերեսային է, ոչ լիարժեք: - 1<br>Չի հայթայթված տեղեկություն հետազոտական հարցի շուրջ: - 0 | 2 |
| **Տվյալների հավաքում**<br>Հետազոտության մեջ հստակ երևում են տվյալների հավաքման և վերլուծության ուղիները, որոնք համապատասխանության մեջ են հետազոտության կարիքների հետ: - 2<br>Տվյալների հավաքման ուղիները և վերլուծությունը լիարժեք չեն և մակերեսային են: - 1<br>Տվյալների հավաքման ուղիները և վերլուծությունը համապատասխանության մեջ չեն կարիքների հետ: - 0 | 2 |
| **Եզրակացություն**<br>Հետազոտությանը կցված է եզրակացություն, որում երևում են հետազոտության արդյունքները, կապված են հիմնական հարցի հետ, տեղեկությունը սպառիչ է: - 2<br>Հետազոտությանը կցված է եզրակացություն, որն ընդհանուր է և պակաս է կապված հիմնական հարցի հետ: - 1<br>Հետազոտությանը կցված չէ եզրակացություն: - 0 | 2 |

**Բաժին III. Սամցխե-Ջավախեթի: Ամփոփիչ առաջադրանքներ: Ինչ գիտեմ և ինչ եմ կարող:**
Առարկայական չափորոշչին համապատասխան, ԱՈՒՊ-ով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքը.
Հաս.գիտ.(II) 1, Հաս.գիտ.(II) 2, Հաս.գիտ.(II) 13 Հաս.գիտ.(II) 14

Նպատակը. Աշակերտները գտնեն տեղեկություններ Սամցխե-Ջավախեթիի բնական և սոցիալ-մշակութային բնութագրիչների մասին, գիտակցեն էթնիկ և մշակութային բազմազանությունը և արտահայտեն սեփական դրական վերաբերմունքը: Տանը պատրաստած նյութի հիման վրա դատողություն անեն՝ ինչ դեր է կատարել Սամցխե-Ջավախեթին Վրաստանի պատմության մեջ:

Կազմակերպման ձևը. ամբողջ դասարան:

Ամփոփիչ աշխատանքի առաջադրանքներից մեկը հայկական մշակույթի օրերի կազմակերպումն է: Այս ակտիվության իրականացման համար նկատի՛ ունեցեք, որ լավ կազմակերպված միջոցառումն է արդյունավետ: Դրա համար նախօրոք սահմանեք.

| | |
|---|---|
| Նպատակը | Ինչու է անցկացվում, ինչի համար է արվում և ինչ արդյունք կունենա |
| Լսարանը | Ում համար է հատկացված, ով պետք է ներկա գտնվի: |
| Ձևաչափը | Ինչ տիպի կլինի. համերգ, ցուցահանդես, կոնֆերանս, շնորհանդես: |
| Բովանդակությունը | Որոնք կլինեն կարևորագույն թեմաները: |
| Վայրը | Որտեղ կանցկացվի պլանավորված միջոցառումը: |
| Վարող | Կունենա՞ արդյոք վարող: |
| Ժամանակի շրջանակը | Որտեղ կանցկացվի և ինչ տևողությամբ: |
| Տեխնիկական կահավորումը | Աուդիո- կամ տեսասարքավորումներ |

Ցանկալի է պատրաստեք ռելիզներ, որոնք ներառում են.

Միջոցառման կազմակերպիչների տվյալները

Տեղեկություն՝ երբ, որտեղ, ինչ, ով, ինչու

Համառոտագիր՝ միջոցառման մասին

**Առաջադրանք II. Տրված է ռեֆերատ**. Սամցխե-Ջավախեթին՝ Հարավային Վրաստանի դարպաս, անցյալը և արդիականությունը:

**Ռեֆերատի գնահատման խորագիր. Առավելագույն միավորը՝ 10**

| Գնահատման չափանիշ | Միավոր |
|---|---|
| Առաջադրանքը կառուցվածքային առումով ճիշտ է ձևակերպված: | 1 |
| Առաջադրանքի պայմանը պատշաճ կերպով հասկանալ<br>Առաջադրանքի պայմանը պատշաճ կերպով է հասկացել: - 2<br>Առաջադրանքի պայմանը մասամբ պատշաճ կերպով է հասկացել: - 1 | 2 |
| Բովանդակության վստահելիություն և փաստական ճշգրտություն<br>Բովանդակությունը կոռեկտ է, փաստերը ճշգրիտ են և հստակ: - 3<br>Բովանդակությունը հիմնականում կոռեկտ է, սակայն հանդիպում են որոշ անհամապատասխան տեղեկություններ: - 2<br>Բովանդակությունն անհամապատասխան է, և հաճախ հանդիպում ենք սխալ տեղեկությունների: - 1 | 3 |
| Փաստարկված դատողություն<br>Փաստարկված է դատողություն անում և ձևակերպում է սեփական դիրքորոշումը: - 2<br>Փորձում է արտահայտել սեփական վերաբերմունքը տվյալ հարցի նկատմամբ, սակայն դժվարանում է պաշտպանել կարծիքները: - 1 | 2 |
| Աշխատությունը լեզվական առումով կազմակերպված է: | 1 |
| Եզրակացություններ | 1 |

**Քննարկում թեմայի մասին.** Երեխան պե՞տք է իմանա արդյոք պետական լեզուն:

Մինչև քննարկումը սկսվելը, աշակերտների երկու խումբ (յուրաքանչյուր խմբում՝ երեք աշակերտ) կպատրաստի փաստարկներ սեփական դիրքորոշման պաշտպանության համար:

Աշակերտների մի խումբը փաստարկներ է ներկայացնում՝ կապված պետական լեզվի իմացության անհրաժեշտության հետ:

Աշակերտների երկրորդ խումբը ներկայացնում է փաստարկներ, որ պետական լեզվի իմացությունն անհրաժեշտ չէ էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ երեխային:

Երկու խմբերն էլ կփորձեն չեղարկել հակառակորդի փաստարկները:

Քննարկման սկզբում երկու կողմերը 3 րոպեանոց ժամանակի սահմանաչափով ձևակերպում են իրենց դիրքորոշումը:

Այնուհետև քննադատական հարցեր են տալիս հակառակորդներին:

Քննարկումն ավարտվում է գաղտնի քվեարկությամբ, որին մասնակցում է ամբողջ դասարանը: Դասընկերները պետք է բացահայտեն հաղթող թիմին:

Առաջադրանքի գնահատման խորագիր

| Գնահատման չափանիշներ | Միավոր |
|---|---|
| **Փաստարկված դատողություն**<br>Քննարկման մասնակիցը դատողություն է անում և փաստարկված հիմնավորում սեփական դիրքորոշումը, նրա կարծիքներն իրատեսական են: - 3<br>Քննարկման մասնակիցը դատողություն է անում գյուղատնտեսության/զբոսաշրջության զարգացման հեռանկարների մասին, ձևակերպում է փաստարկները, սակայն նրա կարծիքները պակաս իրատեսական են: - 2<br>Քննարկման մասնակիցը դատողություն է անում, սակայն չի կարողանում ձևակերպել փաստարկներ: - 1<br>Քննարկման մասնակիցը չի կարող դատողություն անել տրված հարցի շուրջ: - 0 | 3 |
| **Խոսքը**<br>Խոսում է կապակցված և հասկանալի: - 2<br>Խոսքը մակերեսային է և պակաս է համապատասխանում քննարկման թեմային: - 1<br>Խոսում է անհասկանալի, և բովանդակությունը չի համապատասխանում քննարկման թեմային: - 0 | 2 |
| **Քննարկման կանոնների պահպանում**<br>Պահպանում է քննարկման կանոնները և կոռեկտ է համադասարանցիների նկատմամբ: - 2<br>Դժվարանում է պահպանել քննարկման կանոնները և պակաս կոռեկտ է: - 1<br>Չի պահպանում քննարկման կանոնները: - 0 | 2 |
| **Ժամանակի սահմանաչափ**<br>Քննարկման մասնակիցը պահպանում է ժամանակի սահմանաչափը: - 2<br>Քննարկման մասնակիցը դժվարանում է պահպանել ժամանակի սահմանաչափը: - 1<br>Չի պահպանում ժամանակի սահմանաչափը: - 0 | 2 |
| **Ունկնդրում**<br>Քննարկման մասնակիցը լսում է բանավիճողին և ժամանակ է տալիս արտահայտելու միտքը: - 1<br>Քննարկման մասնակիցը չի լսում բանավիճողին: - 0 | 1 |

Բաժին IV. Գուրիա: Ամփոփիչ աշխատանք: Ինչ գիտեմ և ինչ եմ կարող

Այս բաժնի ամփոփիչ առաջադրանքը ենթադրում է գուրիական երգերի երեկոյի անցկացում:

Նպատակը. Աշակերտը գտնի տեղեկություններ գուրիական բանահյուսության մասին, գիտակցի մշակութային ժառանգության նշանակությունը:

Առարկայական չափորոշչին համապատասխան, ԱՈՒՊ-ով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքը.

Չաս.գիտ.(II) 3, Չաս.գիտ.(II) 13, Չաս.գիտ.(II) 14

Առաջին փուլում աշակերտները գտնեն տեղեկություններ գուրիական երգերի մասին, լսեն, կազմեն երգացանկ:

Երեկոն կգնահատվի հետևյալ խորագրով: Առաջադրանքի առավելագույն միավորն է 10-ը:

| Գնահատման չափանիշ | Միավոր |
|---|---|
| Կազմակերպվածություն | 1 |
| Տեխնիկական ապահովում | 1 |
| Իմաստային կազմակերպվածություն | 8 |
| Մասնակիցներն անվանում են հայտնի գուրիական երգեր: | 1 |
| Խոսում են գուրիական երգերի առանձնահատկությունների մասին: | 1 |
| Խոսում են գուրիական երգերի նմանության մասին այլ երկրամասի երգերին: | 1 |
| Խոսում են Արևմտյան Վրաստանի երկրամասերի երգերի տարբերության մասին Արևելյան Վրաստանի երկրամասերի երգերից: | 1 |
| Խոսում են գուրիական երգերի հայտնի կատարողների մասին: | 1 |
| Խոսում են հին երգերի ձայնագրման և պահելու մեթոդների մասին: | 1 |
| Դատողություն են անում, թե արդյոք այս կամ այն երկարամասի բնակիչների բնավորությունն արտացոլվո՞ւմ է նրանց երգերի մեջ: | 1 |
| Դատողություն են անում, թե որքանով է արդարացված ժողովրդական երգերի արդիականացումը: | 1 |

**Բաժին V. Ռաճա-Լեչխումի: Ինչ գիտեմ և ինչ եմ կարող**

Ամփոփիչ աշխատանքում տրված է մի քանի ակտիվություն, որի կատարումից հետո ցանկալի է աշակերտները կազմեն տեղեկատու. «Էկոտուրերը Ռաճայում»:

Առաջադրանքի նպատակն է աշակերտները տեղեկություններ ստանան Ռաճայի բնական միջավայրի և տեսարժան վայրերի մասին, գիտակցեն էկոտուրիզմի զարգացման օգտակարությունը, գիտակցեն էկոտուրիզմի զարգացման և բնության պահպանության փոխադարձ կապը:

Առարկայական չափորոշչին համապատասխան, ԱՈՒՊ-ով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքը.

Հաս.գիտ.(II) 3, Հաս.գիտ.(II) 6, Հաս.գիտ.(II) 7, Հաս.գիտ.(II) 14

Տեղեկատուի գնահատման խորագիր. Առաջադրանքի առավելագույն միավորը՝ 10:

| Գնահատման չափանիշ | Միավոր |
|---|---|
| Տեղեկատուին կցված են տեղեկություններ տուրի կազմակերպիչների մասին: | 1 |
| Տեղեկատուին կցված է երթուղու նկարագրություն: | 1 |
| Տեղեկատուին կցված է տեղեկատվություն վայրի առանձնահատկության մասին: | 1 |
| Տեղեկատուին կցված են ճանաչողական բնույթի տեղեկություններ տեղի հուշարձանների մասին: | 1 |
| Տեղեկատուին կցված է ցանկ էկոլոգիապես մաքուր և ավանդական կերակուրների մասին: | 1 |
| Տեղեկատուին կցված են տեղեկություններ գների մասին: | 1 |
| Տեղեկատուին կցված են տեղեկություններ ժամանցային միջոցառումների մասին (տեղի բանահյուսությանը ծանոթանալու նպատակով): | 1 |
| Տեղեկատուին կցված են տեղեկություններ ենթակառուցվածքի մասին: | 1 |
| Տեղեկատուին կցված են օգտակար խորհուրդներ: | 1 |
| Տեղեկատուին կցված են տեղեկություններ տուրի նպատակների և օգտակարության մասին: | |

**Բաժին V. Աբխազիա: Ինչ գիտեմ և ինչ եմ կարող**

Առաջադրանքի նպատակը. Աշակերտները տեղեկություններ ստանան Աբխազիայում գյուղատնտեսության բնագավառների և զբոսաշրջության զարգացման մասին, փաստարկված դատողություն անեն դրանց հետագա հեռանկարների մասին, ձևակերպեն և պաշտպանեն իրենց դիրքորոշումը:

Առարկայական չափորոշչին համապատասխան, ԱՈՒՊ-ով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքը.

Հաս.գիտ.(II) 3, Հաս.գիտ.(II) 6, Հաս.գիտ.(II) 7, Հաս.գիտ.(II) 14

Տրված են ամփոփիչ աշխատանքի առաջադրանքի մի քանի տեսակներ: Ուսուցիչը կարող է ընտրել ըստ իր հայեցողության՝ ելնելով աշակերտների կարիքներից:

Առաջադրանք I. Պատրաստել շնորհանդես թեմայով. «Տնտեսության ամենահեռանկարային բնագավառներն Աբխազիայում»: Կազմակերպման ձևը. փոքր խմբեր:

Գնահատման խորագիր

| Գնահատման չափանիշներ | Միավոր |
|---|---|
| **Խմբի կողմից աշխատանքի նպատակի գիտակցում**<br>Խումբն աշխատանքի նպատակը լավ է գիտակցել: - 2<br>Խումբը մասամբ է գիտակցել աշխատանքի նպատակը: - 1<br>Խումբը աշխատանքի նպատակը չի գիտակցել: - 0 | 2 |
| **Աշխատանքի կազմակերպում**<br>Աշխատանքը լավ կազմակերպված է, խմբի անդամների միջև աշխատանքը ճիշտ բաշխվեց: - 2<br>Աշխատանքը մասամբ է կազմակերպված, խմբի անդամների միջև աշխատանքը անհավասար բաշխվեց: - 1<br>Աշխատանքը կազմակերպված չէ, խմբի անդամների միջև գործառույթները չեն բաշխվել: - 0 | 2 |
| **Ժամանակի սահմանաչափ**<br>Պահպանում են ժամանակի սահմանաչափը: – 2<br>Դժվարանում են պահպանել աշխատանքի սահմանաչափը: – 1<br>Չեն կարող պահպանել ժամանակի սահմանաչափը – 0 | 2 |
| Թեման հասկանալի է ներկայացված | 1 |
| **Բովանդակությունը կոռեկտ է, փաստերը ճշգրիտ են և հստակ, կիրառած են դիտակտիկ նյութեր - 3**<br>Բովանդակությունը հիմնականում կոռեկտ է, կիրառած են դիտակտիկ նյութեր, սակայն հանդիպում է որոշ անհամապատասխան տեղեկատվություն: - 2<br>Բովանդակությունն անհամապատասխան է, և հաճախ հանդիպում ենք սխալ տեղեկությունների, դիդակտիկ նյութերն աննշան են: - 1<br>Բովանդակությունն անհամապատասխան է, չեն օգտագործված դիդակտիկ նյութեր: - 0 | 3 |

**Առաջադրանք II. Քննարկում** թեմայի շուրջ. Որ բնագավառի զարգացումն է ավելի հեղինակավոր՝ գյուղատնտեսության, թե՞ զբոսաշրջության:

Մինչև քննարկումը սկսելը, աշակերտների երկու խումբ (յուրաքանչյուր խմբում՝ երեք աշակերտ) կպատրաստի փաստարկներ սեփական դիրքորոշման պատրաստման համար:

Աշակերտների մի խումբը փաստարկներ է ներկայացնում՝ կապված Աբխազիայում գյուղատնտեսության զարգացման առավելությունների հետ:

Աշակերտների երկրորդ խումբը ներկայացնում է փաստարկներ՝ կապված Աբխազիայում զբոսաշրջության զարգացման առավելությունների հետ:

Երկու խմբերն էլ կփորձեն չեղարկել հակառակորդի փաստարկները:

Քննարկման սկզբում երկու կողմերը 3 րոպեանոց ժամանակի սահմանաչափով ձևակերպում են իրենց դիրքորոշումը:

Այնուհետև քննադատական հարցեր է տալիս հակառակորդներին:

Քննարկումն ավարտվում է գաղտնի քվեարկությամբ, որին մասնակցում է ամբողջ դասարանը: Դասընկերները պետք է բացահայտեն հաղթող թիմին:

Առաջադրանքի գնահատման խորագիր

| Գնահատման չափանիշներ | Միավոր |
|---|---|
| **Փաստարկված դատողություն**<br>Քննարկման մասնակիցը դատողություն է անում և փաստարկված հիմնավորում սեփական դիրքորոշումը, նրա կարծիքներն իրատեսական են: - 3<br>Քննարկման մասնակիցը դատողություն է անում գյուղատնտեսության/ զբոսաշրջության զարգացման հեռանկարների մասին, ձևակերպում է փաստարկները, սակայն նրա կարծիքները պակաս իրատեսական են: - 2<br>Քննարկման մասնակիցը դատողություն է անում, սակայն չի կարողանում ձևակերպել փաստարկներ: - 1<br>Քննարկման մասնակիցը չի կարող դատողություն անել տրված հարցի շուրջ: - 0 | 3 |
| **Խոսքը**<br>Խոսում է կապակցված և հասկանալի: - 2<br>Խոսքը մակերեսային է և պակաս է համապատասխանում քննարկման թեմային: - 1<br>Խոսում է անհասկանալի և բովանդակությունը չի համապատասխանում քննարկման թեմային: - 0 | 2 |
| **Քննարկման կանոնների պահպանում**<br>Պահպանում է քննարկման կանոնները և կոռեկտ է համադասարանցիների նկատմամբ: - 2<br>Դժվարանում է պահպանել քննարկման կանոնները և պակաս կոռեկտ է: - 1<br>Չի պահպանում քննարկման կանոնները: - 0 | 2 |
| **Ժամանակի սահմանաչափ**<br>Քննարկման մասնակիցը պահպանում է ժամանակի սահմանաչափը: - 2<br>Քննարկման մասնակիցը դժվարանում է պահպանել ժամանակի սահմանաչափը: - 1<br>Չի պահպանում ժամանակի սահմանաչափը: - 0 | 2 |
| **Ունկնդրում**<br>Քննարկման մասնակիցը լսում է բանավիճողին և ժամանակ է տալիս՝ արտահայտելու միտքը: - 1<br>Քննարկման մասնակիցը չի լսում բանավիճողին: - 0 | 1 |

**Բաժին VII. Թբիլիսի: Ինչ գիտեմ և ինչ եմ կարող**

Այս բաժնի ամփոփիչ առաջադրանքը ենթադրում է էքսկուրսիայի կազմակերպում՝ Թբիլիսիի որևէ տեսարժան վայր դիտելու:

Առաջադրանքի նպատակը. Աշակերտները տեղեկություններ գտնեն Թբիլիսիի տեսարժան վայրերի մասին, գիտակցեն այս կամ այն հուշարձանի կամ հաստատության նշանակությունը:

Կազմակերպման ձևը. ամբողջ դասարան:

Առարկայական չափորոշչին համապատասխան, ԱՈՒՊ-ով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքը. Յաս.գիտ.(II) 11, Յաս.գիտ.(II) 12, Յաս.գիտ.(II) 14, Յաս.գիտ.(II) 15

Ինչպես հայտնի է, ցանկացած էքսկուրսիա ներառում է ուսուցողական տարր, և այն կարող ենք քննարկել՝ որպես մանկավարժական գործընթաց: Այս գործընթացին մասնակցում է երկու կողմ. նա, ով տրամադրում է տեղեկությունը, և նա, ով ընդունում է տեղեկությունը: Էքսկուրսիան աշակերտների սոցիալական և հետազոտական կարողությունների զարգացման միջոցներից մեկն է: Նման տիպի ուսումնական գործունեությունը խրախուսում է հարցերն աշակերտների կողմից, ճանաչում է նրանց նախաձեռնությունը, նպաստում հետաքրքրասիրությանը: Յնարավորություն է տալիս գիտելիքի զարգացման և գիտակցման համար:

Մեր կողմից ներկայացված ակտիվությունը ներառում է հետևյալ փուլերը. I էքսկուրսիայի համար նախապատրաստվելը կամ նախապես ընտրվում է օբյեկտը (այս դեպքում՝ թանգարան), կրկնվում է ուսումնասիրած նյութը և հայթայթվում լրացուցիչ տեղեկատվություն: II. Կոնկրետ էքսկուրսիան: III.

Աշխատանք էքսկուրսիայից հետո, էքսկուրսիայի նյութի ամրապնդման համար: Դրա համար ցանկալի կլինի աշակերտներն անեն գրառումներ այն մասին, թե ինչն էր նոր, որ տեսան թանգարանում, որ ցուցադրանմուշը հավանեցին և ինչու, ինչ լրացուցիչ տեղեկատվություն ստացան: Դրանից հետո աշակերտները պատրաստեն հաշվետվություն, որը կգնահատվի հետևյալ գնահատման աղյուսակով՝ խորագրով:

| Գնահատման չափանիշներ | Միավոր |
|---|---|
| Հաշվետվության մեջ ներկայացված են տեղեկություններ էքսկուրսիայի տեսակի մասին (ճանաչողական/ժամանցային): | 1 |
| Հաշվետվության մեջ ներկայացված է էքսկուրսիայի նպատակը: | 1 |
| Հաշվետվության մեջ ներկայացված են տեղեկություններ էքսկուրսիայի սպասվելիք արդյունքի մասին: | 1 |
| **Ընտրության հիմնավորում**<br>Աշակերտը նկարագրում է դիտելու օբյեկտը և հիմնավորում իր ընտրությունը: - 2<br>Աշակերտը նկարագրում է դիտելու օբյեկտը և դժվարանում է հիմնավորել իր ընտրությունը: - 1<br>Աշակերտը միայն անվանում է դիտելու օբյեկտը, սակայն չի կարող հիմնավորել իր ընտրությունը: - 0 | 2 |
| **Տեղեկացվածություն**<br>Աշակերտը մինչև էքսկուրսիան տիրապետում է դիտելու օբյեկտի մասին գիտելիքի, անվանում է տեղեկատվության աղբյուրը: - 2<br>Աշակերտի կողմից մինչև էքսկուրսիան հայտնաբերված տեղեկությունն աննշան է: - 1<br>Աշակերտը չունի մինչև էքսկուրսիան հայտնաբերված տեղեկություն: - 0 | 2 |
| **Էքսկուրսիայից ստացած տեղեկությունների վերլուծում**<br>Աշակերտը վերլուծում է էքսկուրսիայի ժամանակ ստացած տեղեկատվությունը, համեմատում է իր նախապես ունեցած գիտելիքի հետ, անում է եզրակացություններ: - 2<br>Աշակերտը դժվարանում է վերլուծել նոր ստացած տեղեկատվությունը: - 1<br>Աշակերտը չունի նոր տեղեկություններ: - 0 | 2 |
| Աշակերտը հիմնավորում է էքսկուրսիայի օգտակարությունը: | 1 |

**Բաժին VIII. Պետություն՝ Մեր Վրաստանը: Ինչ գիտեմ և ինչ եմ կարող**

Առաջադրանքը ենթադրում է էկոլոգիական խնդիրների մասին նախագծի պատրաստում:

Առաջադրանքի նպատակը. Աշակերտները կարողանան տեսնել խնդիրը, ուսումնասիրել այն, խնդրի մասին տեղեկություններ հավաքել, ձևակերպել նախագծի նպատակը, կազմել գործողությունների պլան, սեփական ներգրավվածությամբ սահմանել խնդրի լուծման մեխանիզմներ:

Առարկայական չափորոշչին համապատասխան, ԱՈՒՊ-ով նախատեսված ձեռքբերվելիք արդյունքը.

Հաս.գիտ.(II) 6, Հաս.գիտ.(II) 7, Հաս.գիտ.(II) 13, Հաս.գիտ.(II) 14

Կազմակերպման ձևը. փոքր խմբեր:

Առաջադրանքը գնահատվում է հետևյալ խորագրի կիրառմամբ:

| Գնահատման չափանիշներ | Միավոր |
|---|---|
| **Խմբի կողմից աշխատանքի նպատակի գիտակցում**<br>Խումբն աշխատանքի նպատակը լավ է գիտակցել: - 2<br>Խումբը մասամբ է գիտակցել աշխատանքի նպատակը: - 1<br>Խումբը աշխատանքի նպատակը չի գիտակցել: - 0 | 2 |
| **Աշխատանքի կազմակերպում**<br>Աշխատանքը լավ կազմակերպված է, խմբի անդամների միջև աշխատանքը ճիշտ բաշխվեց: - 2<br>Աշխատանքը մասամբ է կազմակերպված, խմբի անդամների միջև աշխատանքը անհավասար բաշխվեց: - 1<br>Աշխատանքը կազմակերպված չէ, խմբի անդամների միջև գործառույթները չեն բաշխվել: - 0 | 2 |
| **Խնդրի ուսումնասիրում**<br>Խումբը խնդիրն ուսումնասիրելու համար կիրառում է տեղեկությունների տարբեր աղբյուրներ՝ ընտանիք, ընկերներ, գրադարան, լրատվամիջոցներ, ուսուցիչներ, կազմակերպիչներ, որոնք աշխատում են այս խնդրի վրա: - 2<br>Աշակերտը խնդիրն ուսումնասիրելու համար կիրառում է տեղեկությունների որոնման մի քանի աղբյուր, սակայն այդ տեղեկությունը մակերեսային է: - 1<br>Աշակերտը խնդրի ուսումնասիրման համար կիրառում է տեղեկությունների միայն մեկ աղբյուր: - 0 | 2 |
| **Ակտիվությունների համապատասխանությունը**<br>Խմբի կողմից ներկայացված ակտիվությունները համապատասխանում են նախագծի նպատակին: - 2<br>Խմբի կողմից ներկայացված ակտիվությունները կիսով չափ են համապատասխանում նախագծի նպատակին: - 1<br>Խմբի կողմից ներկայացված ակտիվությունները չեն համապատասխանում նախագծի նպատակին: - 0 | 2 |
| **Խնդրի կարգավորում**<br>Խումբն անվանում է խնդրի լուծման երկու ուղի, որոնք իրատեսական և արդյունավետ են: - 2<br>Խումբն անվանում է խնդրի լուծման երկու ուղի, սակայն այս ուղիներն արդյունավետ չեն: - 2<br>Խումբն առաջարկում է խնդրի լուծման միայն մեկ ուղի: - 0 | 2 |

# 12. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾԻՔՆԵՐ

**Խորհուրդներ աշակերտներին.**

Համացանցի միջոցով կարող եք տեղեկություններ գտնել ցանկացած թեմայի մասին: Գլխավորն այն է, որ մտորեք այն մասին, թե ինչպես կկարողանաք հետազոտման թեմայի մասին ամենաարժանահավատ տեղեկությունը ձեռք բերել:

**Տեղեկատվություն տեսնել**

Քանի որ համացանցը բոլորի համար հասանելի է, և բոլորը կարող են տեղեկություններ տեղադրել այնտեղ, մինչև այն օգտագործելը, անպայման անհրաժեշտ է ստուգել, թե որքանով արժանահավատ է այն տեղեկությունը, որ գտել եք դուք:

Փորձեք խնդիրը հետևյալ կերպ դնել.

- Նույն տեղեկությունը կարո՞ղ եք գտնել համացանցի այլ էջերում:
- Ո՞ւմ կողմից է հրապարակված տեղեկությունը:
- Ի՞նչ շահ կարող է ունենալ անձը կամ կազմակերպությունը, որը հրապարակել է տեղեկությունը, որպեսզի այն բոլորի համար հասանելի դարձնի:
- Վստահելի՞ է արդյոք այն անձը կամ կազմակերպությունը, ով հրապարակում է տվյալ տեղեկությունը:
- Համացանցում հրապարակած տեղեկությունը վերստուգեք այլ աղբյուրների միջոցով՝ ձեռք բերված տեղեկության հետ համեմատության միջոցով:
- Այս տեղեկությունը հավաստող փաստեր կարո՞ղ եք գտնել գրքերում, հարցազրույցների միջոցով կամ սեփական փորձառությամբ:
- Համացանցի միջոցով ձեռք բերված տեղեկությունը նո՞ր է: Հասկանալի՞ լեզվով է փոխանցած, ավելի հասկանալի՞ է, քան այն նման տեղեկությունը, որը գրքում կարող է լինել տրված, համացանցի միջոցով կամ անձնական փորձով լինի ձեռքբերված:
- Ո՞ր տեղեկությունն է համապատասխանում քո նպատակին ամենից շատ:

**Նկարների և պատկերների մեկնաբանում**

Տեքստի նման, նկարը ևս բազմաթիվ տեղեկություններ է պարունակում: Հաջորդ խորհուրդները կօգնեն ձեզ նկարի մեկնաբանման և այն ընկալել-հասկանալու մեջ:

**Նկարի քննարկում**

- Նկարագրե՛ք նկարը ձեր խոսքերով:
- Միմյանց հետ կիսվե՛ք ձեր կարծիքներով այն մասին, թե ինչն է նկարում ստեղծում իմաստը, ինչ կա նրանում առանձնահատուկ կամ նշանակալի:
- Միմյանց հարցեր տվե՛ք՝ կապված նկարի հետ:
- Իրար փոքր առաջադրանքներ տվե՛ք, ինչպիսիք են՝ փնտրիր, գտիր, ցույց տուր, բացատրիր...
- Դատողություն ծավալեք այնպիսի հարցերի մասին, ինչպիսիք են՝ ինչո՞ւ են ընտրվել այս նկարները, ո՞ր նկարն է համապատասխանում և տեղեկատվություն տրամադրում այն տեքստի մասին, որին կցված են նկարները, ո՞ր նկարն է հակասում տեքստում արտահայտված մտքին:

**Ցուցահանդեսի կազմակերպում**

Խորհուրդներ

**1.** Ի՞նչ ենք ցանկանում ցույց տալ:
- Ո՞րն է այն գլխավոր ուղերձը, որ ուզում ենք ասել այս ցուցահանդեսի միջոցով:
- Ի՞նչ անվանում ընտրենք ցուցահանդեսի համար:

**2.** Ո՞վ է լսարանը:
- Մեր դպրոցի ուսուցիչները և աշակերտները:
- Ծնողներ և քույր-եղբայրներ:
- Շահառուներ զբոսաշրջական գործակալությունից:

**3.** Որտե՞ղ կանցկացվի ցուցահանդեսը:
- Դասասենյակում, թե՞ դպրոցի այլ տարածքում:
- Հանրային վայրում (օրինակ, մունիցիպալ շենքի դահլիճում):
- Ի՞նչ տարածք կտրամադրվի ցուցահանդեսին, և ինչպիսի՞ն կլինի լուսավորումը:
- Կունենա՞նք այն ենթակառուցվածքը, որը ցանկանում ենք ունենալ:

**4.** Ցուցահանդեսն ինչպե՞ս դարձնենք տպավորիչ:
- Մոդելները և ցուցահանդեսային ցուցանմուշներն այնպես պետք է տեղադրենք, որ հնարավոր լինի ձեռքով դիպչել:
- Պետք է նախատեսենք և առանձնացնենք տարածք նրա համար, որ ցուցահանդեսային տարածքում հնարավոր լինի խաղ կազմակերպել, ցուցադրանմուշները փորձարկել, դրանք դիտարկել կամ փորձեր անցկացնել:
- Ստեղծենք երաժշտական ֆոն, կամ մենք ինքներս նվագենք երաժշտություն: Դիտողներին առաջարկենք թեթև նախաճաշ:
- Նշանակենք էքսկուրսավարներ, որոնք դիտողներին կծանոթացնեն ցուցադրանմուշները:
- Պատրաստենք թռուցիկներ, որոնք դիտողներին կծանոթացնեն ցուցադրանմուշները:
- Կազմակերպենք մրցույթ կամ վիկտորինա:

**5.** Մինչև ցուցահանդեսի կազմակերպումը, ո՞ւմ պետք է տրամադրենք տեղեկատվություն ցուցահանդեսի մասին:
- Դպրոցի ուսուցիչներին:
- Դպրոցի սպասարկու անձնակազմին:
- Դպրոցի խորհրդի անդամներին:
- Դասղեկին:
- Փորձագետի, ով կօգնի կազմակերպել ցուցահանդեսը:
- Հյուրերի:

**6.** Ի՞նչ պետք է անենք
- Կազմենք պլան:
- Կազմենք նյութերի ցանկը:
- Կազմենք ժամանակացույց (ով, երբ և ինչ է անում):
- Սովորեցնենք ծախսերը հաշվառել (ինչ գումար ունենք ձեռքի տակ և որքանը կծախսենք):
- Պատրաստենք թռուցիկներ կամ հրավիրատոմսեր:
- Տեղեկատվություն տրամադրենք տեղի թերթին:

**7.** Ի՞նչ գնահատում կունենա ցուցահանդեսը:
- Որո՞նք են ամենակարևոր չափանիշները:
- Ո՞վ կգնահատի ցուցահանդեսը (ուսուցիչներ, համադասարանցիներ, հրավիրյալ հյուրեր):

**Շնորհանդեսների պատրաստում և ներկայացում**

Պատրաստվել ելույթի համար և պլանավորել.

**1.** Ո՞վ կլինի ունկնդրի դերում:
- Որտե՞ղ պետք է զեկուցումով հանդես գան:

**2.** Ո՞վ հանդես կգա լսարանի առջև ելույթով:
- Մենակ պետք է ներկայանաս զեկուցումով, թե՞ խմբի հետ:
- Ինչպե՞ս պետք է կազմակերպվի խումբը:

**3.** Ո՞րն էր ելույթի նպատակը:
- Ի՞նչ նոր բան կիմանա ներկայացված ելույթից ներկա հասարակությունը:
- Ձեր ելույթը ենթադրում է ունկնդիրների կողմից հնչեցված հարցերի պատասխան կամ մեկնաբանություններ նրանց կողմից:

**4.** Որքա՞ն ժամանակ պետք է տրամադրվի ելույթին:
- Պետք է ժամանակ նախատեսեք՝ լսարանի կողմից առաջադրված հարցերին պատասխանելու համար:
- Պետք է ժամանակ նախատեսեք՝ լսարանի կողմից արված մեկնաբանությունները լսելու համար:

**5.** Ի՞նչ ռեսուրսներ են մատչելի:
- Գրատախտակ
- Պրոյեկտոր
- Համակարգիչ և պրոյեկտոր PPT-ում պատրաստած շնորհանդեսի համար
- Պաստառ (ֆլիպչարտ)
- Ստերեոսարքավորում

**6.** Ինչպե՞ս պետք է կարողանաս գրավել լսարանի ուշադրությունը:
- Լսարանին հարցեր տալու հնարավորություն տվեք:

# 13. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՄՈՒՇՆԵՐ

Ամփոփիչ թեստային առաջադրանք

Առաջադրանք I. Պատասխանե՛ք տրված հարցերին: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է մեկ միավորով:

**1**. Ո՞ր գետի ավազաններն է ներառում Կախեթիի տարածքը.

ա. Իորիի և Ալազանիի  բ. Ռիոնիի և Ալազանիի  գ. Իորիի և Ռիոնիի

2. Գինի պահելու տեղը կոչվում է.

ա. Խաղողքամիչ  բ. Ջեռտեղարան  գ. Մառան

3. Կախեթիի ո՞ր քաղաքում է գտնվում «Բատոնիս ցիխեն».

ա. Սիղնաղի  բ. Թելավի  գ. Գուրջաանի

4. Ո՞ր տարերային երևույթն է ամենից հաճախ հանդիպում Կախեթիում.

ա. Կարկուտ  բ. Ձյունահոսք  գ. Սողանք

5.Ո՞ր դավանանքի հետևորդներ են պանկիսցի քիստերը.

ա. Քրիստոնյաներ  բ. Մահմեդականներ  գ. Հուդայականներ

6. Ո՞ր պահպանված տարածքը չի գտնվում Կախեթիում.

ա. Լագոդեխի  բ. Կինտրիշի  գ. Վաշլովանի

Առաջադրանք II. Ժամանակագրական կարգով հնագույնից դեպի նորագույնը դասավորե՛ք մշակութային ժառանգության հուշարձանները՝ ըստ նրանց կառուցման ժամանակի:

| | | |
|---|---|---|
| | | |

1. Բատոնիս ցիխե
2. Էրեկլե Բ-ի հուշարձանը
3. Դավիթ Գարեջիի վանքը

Առաջադրանք III. Բացատրե՛ք՝ ո՞րն է ավելորդ և ինչո՞ւ: Առաջադրանքը գնահատվում է 2 միավորով:

1. Ալավերդի
2. Սվետիցխովելի
3. Նեկրեսի

Առաջադրանք IV. Սխալների ուղղում: Տեքստի մեջ թույլ է տրված երեք սխալ: Գնահատվում է ինչպես հայտնաբերված սխալը, այնպես էլ նրա ուղղած տարբերակը: Առաջադրանքի առավելագույն միավորն է 6-ը:

Իրանի մի երկրամասում՝Խորասանում, 400 տարի առաջ Իրանի կառավարիչ Շահ Թամազը հարկադրաբար վերաբնակեցրեց վրացիների, սակայն նրանք, միևնույն է, կարողացան պահպանել իրենց լեզուն: Իրանցիների քաղաքականության պատճառով Կախեթին ծանր վիճակում էր: Դա էր պատճառը, որ երկրի նվիրյալ վրացիները ապստամբություն կազմակերպեցին, որը պատմության մեջ մտավ Ալավերդիի ապստամբություն անվանումով:

| Սխալ է | Պետք է լինի |
|---|---|
| | |
| | |
| | |

Ճիշտ պատասխաններ

| Առաջադրանք | Ճիշտ պատասխան |
|---|---|
| 1 | Ա |
| 2 | Գ |
| 3 | Բ |
| 4 | Ա |
| 5 | Բ |
| 6 | Բ |
| 7 | 312 |
| 8 | Ավելորդ է Սվետիցխովելին, քանի որ այն Կախեթիում չի գտնվում |
| 9 | Խորասան՝ Փերեիդան, Թամազ – Աբաս, Ալավերդի – Բախտրիոնի |

Ամփոփիչ առաջադրանք

Տեքստի վերլուծում: Ուշադիր ծանոթացե՛ք տեքստին և պատասխանե՛ք տրված հարցերին: Առաջադրանքի առավելագույն միավորը 10 է:

Այն գտնվում է Վրաստանի ծայր հյուսիս-արևմտյան մասում: Նրա սահմանը Ռուսաստանի Դաշնության հետ անցնում է Կովկասյան ջրբաժան լեռնաշղթայով, Սամեգրելո-Զեմո Սվանեթիի մոտ՝ Էնգուրի գետի հովտով է առանձնանում: Աբխազիայի մասին տեղեկություններ կան մեր թվարկությունից առաջ չորրորդ դարից: Այն ժամանակվա համար զարգացած էին ոչ միայն անասնապահությունն ու հողագործությունը, այլ նաև պղնձի և բրոնզի մշակումը: Աբխազիան մի մասն էր այն թագավորության, որն անտիկ շրջանի սկզբում ձևավորվեց ներկայիս Արևմտյան Վրաստանի տարածքում: Աբխազների թագավորությունը միշտ ընկալվում էր՝ որպես Միասնական Վրաստանի մաս: Խոսակցական և պետական լեզուն վրացերենն էր: Վրացական պետության գոյությունն այս տարածքում հաստատում են հնագույն տաճարների որմնանկարներում հայտնաբերված վրացական «ասոմթավրուլի» արձանագրությունները:

Աբխազիայի տարածքում են տեղակայված վրաց մշակույթի և ճարտարապետության հոյակապ հուշարձաններ: Միասնական Վրաստանի առաջին թագավորի կառուցած Բեդիայի վանքը նույնպես Աբխազիայում է:

Աբխազիայի բնակչության մեծ մասը ուղղափառ քրիստոնյա է, հանդիպում են նաև կաթոլիկներ, տարածված է նաև իսլամը:

Աբխազները մինչև օրս հարգում են ավանդույթները, ծեսերն ու ծիսակարգերը:

Հարցեր

1. Ո՞ր կողմից է սահմանակցում Ռուսաստանն Աբխազիային: (1 միավոր)

2. Համաձայն տեքստի՝ տնտեսության ո՞ր բնագավառներին են հետևում աբխազները: (2 միավոր)

3. Ո՞ր հնագույն պետության կազմի մեջ էր մտնում Աբխազիան և հիշե՛ք՝ ո՞ր առասպելում են պահպանված տեղեկություններ այս թագավորության մասին: (2 միավոր)

4. Տեքստում բերված ո՞ր փաստն է հաստատում Աբխազիայի տարածքում վրացական պետության գոյությունը: (1 միավոր)

5. Հիշի՛ր, բացի Բեդիայի տաճարից, ո՞ր ճարտարապետական հուշարձաններն են կապվում Բագրատ Գ-ի անվան հետ: (1 միավոր)

6. Ո՞ր կրոնական ուղղության ներկայացուցիչներ են ապրում Աբխազիայի տարածքում: (3 միավոր)

Ճիշտ պատասխաններ

1. Ռուսաստան

2. Հողագործություն, անասնապահություն

3. Կոլխեթիի թագավորություն, առասպել արգոնավորդների մասին

4. Բագրատի տաճար

5. Ուղղափառներ, կաթոլիկներ, մահմեդականներ

## 14. ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

### Թանգարաններ

**Թբիլիսի**

Վրաստանի ազգային թանգարան. Սիմոն Ջանաշիայի անվան Վրաստանի թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Շալվա Ամիրանաշվիլիի անվան արվեստի թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Իոսեբ Գրիշաշվիլիի անվան Թբիլիսիի պատմության թանգարան (Քարվանսարա)
Վրաստանի ազգային թանգարան. Գիորգի Չիտաիայի անվան ազգագրական թանգարան բաց երկնքի տակ
Վրաստանի ազգային թանգարան. Ազգային պատկերասրահ
Վրաստանի ազգային թանգարան. Թբիլիսիի հնագիտական պահոց
Վրաստանի ազգային թանգարան. Խորհրդային բռնազավթման թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Էլենե Ախվլեդիանիի տուն-թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Ուչա Ջափարիձեի տուն-թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Մոսե Թոիձեի տուն-թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Յակոբ Նիկոլաձեի տուն-թանգարան
Գիորգի Լեոնիձեի անվան վրաց գրականության պետական թանգարան
Վրաստանի թատրոնի, երաժշտության, կինոյի և պարարվեստի պետական թանգարան
Վրաստանի ժողովրդական և կիրառական արվեստի պետական թանգարան
Վրացական ժողովրդական երգի և նվագարանների պետական թանգարան
Մետաքսի պետական թանգարան
Ձեռագրերի Ազգային կենտրոն
Վրաստանի Ազգային բանկի դրամի թանգարան
Իլյա Ճավճավաձեի գրական հուշատուն թանգարան
Իլյա Ճավճավաձեի տուն-թանգարան
Շոթա Ռուսթավելու անվան ակադեմիական թատրոնի թանգարան
Կոտե Մարջանիշվիլիի անվան պետական դրամատիկական թատրոնի թանգարան
Ապոլոն Քութաթելաձեի անվան Թբիլիսիի պետական գեղարվեստի ակադեմիայի թանգարան
Ապոլոն Քութաթելաձեի անվան Թբիլիսիի պետական գեղարվեստի ակադեմիայի գոբելենի թանգարան
Վանո Սարաջիշվիլիի անվան Թբիլիսիի պետական կոնսերվատորիայի պատմության թանգարան
Զաքարիա Փալիաշվիլիի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի թանգարան
Միրզա-Ֆաթալի Ախունդովի անվան ադրբեջանական մշակույթի թանգարան
Էլենե Ախվլեդիանիի անվան մանկական նկարների պատկերասրահ
Թինաթին Թումանիշվիլիի անվան տիկնիկների թանգարան
Դենդրոլոգիական թանգարան (Բուսաբանական այգի)
Վրաստանի գիտությունների ակադեմիայի Երկրաֆիզիկական գիտությունների պատմության թանգարան
Թբիլիսիի I հանրային դպրոցի թանգարան
Գուրամ Ռչեուլիշվիլիի թանգարան (Թբիլիսիի 30-րդ հանրային դպրոց)
Իլյայի պետական համալսարանի հնագիտության թանգարան
Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանի թանգարան
Նիկո Փիրոսմանաշվիլիի թանգարան
Զաքարիա Փալիաշվիլիի տուն-թանգարան

Վախթանգ Ճաբուկիանիի հուշատուն թանգարան
Գալակտիոն Տաբիձեի հուշատուն թանգարան
Տիցիան Տաբիձեի տուն-թանգարան
Նիկոլոզ Բարաթաշվիլիի տուն-թանգարան
Միխեիլ Ջավախիշվիլիի տուն-թանգարան
Ի.Գրիշաշվիլիի անվան գրադարան-թանգարան
Նոդար Դումբաձեի տուն-թանգարան
Մերաբ Կոստավայի տուն-թանգարան
Շիո Արագվիսպիրելիի (Դեդաբրիշվիլիի) տուն-թանգարան
Մասնավոր թանգարաններ Թբիլիսիում
Վրաստանի Միներալների թանգարան, Թբիլիսի, Լեսելիձեի փ. 27/1
Լուսանկարչության վրացական թանգարան - www.photomuseum.org.ge
Ուշանգի Չխեիձեի տուն-թանգարան, Թբիլիսի, Դիմիտրի Ուզնաձեի 12
Ակակի Վասաձեի տուն-թանգարան, Թբիլիսի, Դավիթ Աղմաշենեբելիի պողոտա 3
Նիկոլոզ (Կոկա) Իգնատովի տուն-թանգարան, Թբիլիսի, Միխեիլ Զանդուկելիի փ., 6 D
Սոսո Ծերեթելիի տուն-թանգարան, Թբիլիսի, Դիմիտրի Ուզնաձեի փ. 2
Անիմացիոն տիկնիկների թանգարան, Թբիլիսի, Ամաղլեբա փ. 29
Կինոյի պատմության թանգարան, Դավիթ Աղմաշենեբելիի պողոտա 40 (Մանկական կինոկենտրոն «Փիփքիա»)
Զուրաբ Լեժավայի ստեղծագործական ժառանգության թանգարան, Թբիլիսի, Բառնովի փ. 73
Մուխրան Մաճավարիանիի տուն-թանգարան, Թբիլիսի, Իր.Աբաշիձեի փ. 48
Նաթելա Իանքոշվիլիի բնակարան-թանգարան, Թբիլիսի, Շոթա Ռուսթավելիի պողոտա 26

**Աջարիա**
Բաթումիի հնագիտական թանգարան
Աջարիայի Խարիտոն Ախվլեդիանիի անվան թանգարան
Աջարիայի արվեստի պետական թանգարան
Իլյա Ճավճավաձեի թանգարան
Նոբել եղբայրների անվան Բաթումիի տեխնոլոգիական թանգարան
Իոսիֆ Ստալինի տուն-թանգարան
Պետրա-բերդի հնագիտական-ճարտարապետական թանգարան-արգելոց
Գոնիո-Ափսարոսի հնագիտական-ճարտարապետական թանգարան-արգելոց
Մաճախելայի պատմա-ազգագրական թանգարան
Ախալշենիի թանգարան
Մեջինասծղալիի գավառագիտական թանգարան
Շուախևիի ազգագրական թանգարան
Սելիմ Խիմշիաշվիլիի անվան բերդ-թանգարան
Կվիախիձեների պատմա-ազգագրական թանգարան
Խուլոյի գավառագիտական թանգարան
Թխիլվանիի ազգագրական թանգարան
Շերիֆ Խիմշիաշվիլիի տուն–թանգարան
Քեդայի պատմական թանգարան

**Գուրիա**
Օզուրգեթիի պատմական թանգարան
Օզուրգեթիի կերպարվեստի կենտրոն
Գուրիայի երկրամասի հնագիտական թանգարան-արգելոց
Նիկո Բերձենիշվիլիի անվան Չոխատաուրիի գավառագիտական թանգարան

Նոդար Դումբաձեի տուն-թանգարան
Նիկողայոս Մառի տուն-թանգարան
Մոսե Գոգիբերիձեի տուն-թանգարան
Լանչխութիի գավառագիտական թանգարան
Էգնատե Նինոշվիլիի տուն-թանգարան

**Իմերեթի**
Նիկո Բերձենիշվիլիի անվան Քութաիսիի պետական պատմական թանգարան
Դավիթ Կապանաձեի անվան Քութաիսիի կերպարվեստի պատկերասրահ
Քութաիսիի պատմական-ճարտարապետական թանգարան-արգելոց
Քութաիսիի սպորտի թանգարան
Քութաիսիի Դավիթ Մխեիձեի անվան լուսանկարչական-կինոժամանակագրության թանգարան
Քութաիսիի մարտական փառքի Ազգային թանգարան
Վլադիմիր Մայակովսկու տուն-թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Օթար Լորթքիփանիձեի անվան Վանիի հնագիտական թանգարան-արգելոց
Գալակտիոն և Տիցիան Տաբիձեների տուն-թանգարան
Կոռնելի Կեկելիձեի հուշատուն թանգարան
Նիկո Նիկոլաձեի տուն-թանգարան
Գիորգի Ախվլեդիանիի անվան Ծղալտուբոյի գավառագիտական թանգարան
Գիորգի Ախվլեդիանիի տուն-թանգարան
Նիկո Լորթքիփանիձեի տուն-թանգարան
Շալվա և Պետրե Ամիրանաշվիլիների տուն-թանգարան
Դավիթ և Սերգո Կլդիաշվիլիների տուն-թանգարան
Ճիաթուրայի գավառագիտական թանգարան
Գիորգի Ծերեթելիի տուն-թանգարան
Լեռնագնաց քույր և եղբայր Ջափարիձեների տուն-թանգարան
Սաչխերեի գավառագիտական թանգարան
Ակակի Ծերեթելիի պետական թանգարան
Խոնիի պատմական թանգարան
Պոլիկարպե Կակաբաձեի տուն-թանգարան
Իրակլի Աբաշիձեի տուն-թանգարան
Զեստափոնիի գավառագիտական թանգարան
Ուշանգի Չխեիձեի տուն-թանգարան
Խարագաուլիի պատմական թանգարան
Գյուղի պատմության թանգարան

**Կախեթի**
Թելավիի պատմական թանգարան
Ծինանդալիի Ալեքսանդրե Ճավճավաձեի տուն-թանգարան
Վրաստանի ազգային թանգարան. Սիղնաղիի պատմա-ազգագրական թանգարան
Դավիթ-Գարեջիի թանգարան-արգելոց
Գրեմ-Նեկրեսիի թանգարան-արգելոց
Ղվարելիի Իլյա Ճավճավաձեի պետական թանգարան
Նիկո Փիրոսմանաշվիլիի պետական թանգարան
Ղվարելիի Մարջանիշվիլիների տուն-թանգարան
Ախմետայի գավառագիտական թանգարան
Դեդոփլիսծղարոյի գավառագիտական թանգարան

Լագոդեխիի գավառագիտական թանգարան
Սագարեջոյի գավառագիտական թանգարան
Նատո Վաչնաձեի տուն-թանգարան
Գիորգի Լեոնիձեի տուն-թանգարան
Վասո Գոձիաշվիլիի հուշատուն թանգարան
Սանդրո Ախմետելիի տուն-թանգարան
Վանո Սարաջիշվիլիի թանգարան
Սանդրո Շանշիաշվիլիի տուն-թանգարան
Սանդրո Միրիանաշվիլիի հուշատուն թանգարան
Իրոդիոն Էվդոշվիլիի տուն-թանգարան
Ալեքսանդրե Գզիրիշվիլիի տուն-թանգարան
Իլո Մոսաշվիլիի տուն-թանգարան
Ռաֆիել Էրիսթավիի տուն-թանգարան
Իվանե Բերիտաշվիլիի թանգարան
Իոսեբ Նոնեշվիլիի թանգարան
Գիորգի Մախուտրաձեի անվան գյուղի պատմության թանգարան
Ջոն Մալխազ Շալիկաշվիլիի անվան մարտական պատմության թանգարան
Փառքի հուշատուն թանգարան
Ժողովուրդների բարեկամության թանգարան

**Մցխեթա-Մթիանեթի**
Մեծ Մցխեթայի հնագիտական թանգարան-արգելոց
Ստեփանծմինդայի պատմական թանգարան
Դավիթ և Գիորգի Էրիսթավիների տուն-թանգարան
Իլյա Ճավճավաձեի Սագուրամոյի պետական թանգարան
Վաժա-Փշավելայի տուն-թանգարան
Դուշեթիի գավառագիտական թանգարան
Թիանեթիի գավառագիտական թանգարան
Կորշայի ազգագրական թանգարան
Միրզա Գելովանիի տուն-թանգարան

**Ռաճա-Լեչխումի և Քվեմո Սվանեթի**
Ամբրոլաուրիի կերպարվեստի թանգարան
Օնիի գավառագիտական թանգարան
Լադո Մուսելիանիի անվան Լենտեխիի գավառագիտական թանգարան
Վառլամ Մախարոբլիձեի անվան Ցագերիի պատմական թանգարան
Փուստելների դպրոց-թանգարան

**Սամեգրելո և Զեմո Սվանեթի**
Դադիանիների պալատների պատմաճարտարապետական թանգարան
Պարմեն Զաքարաիայի անվան Նոքալաքևիի ճարտարապետական-հնագիտական թանգարան-արգելոց
Վրաստանի ազգային թանգարան. Սվանեթիի պատմա-ազգագրական թանգարան
Փոթիի կոլխյան մշակույթի թանգարան
Գիվի Էլիավայի անվան Մարտվիլիի գավառագիտական թանգարան
Ժիուլի Շարտավայի անվան Սենակիի գավառագիտական թանգարան
Կոնստանտինե Գամսախուրդիայի տուն-թանգարան
Խոբիի գավառագիտական թանգարան

Չխորոծղուի գավառագիտական թանգարան
Ծալենջիխայի ազգագրական թանգարան
Տերենտի Գրանելիի տուն-թանգարան
Լեո Քիաչելիի տուն-թանգարան
Միխեիլ Խերգիանիի տուն-թանգարան
Առնոլդ Չիքոբավայի տուն-թանգարան
Թեոփանե Դավիթաիայի տուն-թանգարան
Ժիուլի Շարտավայի թանգարան
Ձուկու Լոլուայի անվան վրացական ժողովրդական երգի թանգարան
Ակադեմիկոս Տարասի Կվարացխելիի տուն-թանգարան

**Սամցխե-Ջավախեթի**
Վրաստանի ազգային թանգարան. Իվանե Ջավախիշվիլիի անվան Սամցխե-Ջավախեթիի պատմական թանգարան
Վարձիայի պատմա-ճարտարապետական թանգարան-արգելոց
Բորժոմիի գավառագիտական թանգարան
Ախալքալաքի գավառագիտական թանգարան
Նինոծմինդայի մարտական փառքի թանգարան
Վահան Տերյանի տուն-թանգարան
Վիկտոր Հովսեփյանի տուն-թանգարան

**Քվեմո Քարթլի**
Կլդեկարիի պատմության, հնագիտության և ճարտարապետության թանգարան-արգելոց
Վրաստանի ազգային թանգարան. Դմանիսիի պատմաճարտարապետական թանգարան-արգելոց
Բոլնիսիի գավառագիտական թանգարան
Սուլխան-Սաբա Օրբելիանիի գրականության թանգարան
Գարդաբանիի գավառագիտական թանգարան
Թեթրիծղարոյի գավառագիտական թանգարան
Միխեիլ Ջավախիշվիլիի թանգարան
Ալեքսանդր Մելիք-Փաշաևի տուն-թանգարան
Ռուսթավիի պատմական թանգարան

**Շիդա Քարթլի**
Սերգի Մակալաթիայի անվան Գորիի պատմա-ազգագրական թանգարան
Ուփլիսցիխեի պատմաճարտարապետական թանգարան-արգելոց
Կասպիի գավառագիտական թանգարան
Խաշուրիի գավառագիտական թանգարան
Ի.Բ.Ստալինի պետական թանգարան
Քսանիի կիրճի պատմաճարտարապետական թանգարան-արգելոց
Յակոբ Գոգեբաշվիլիի տուն-թանգարան
Ջամբակուր-Օրբելիանիների պալատ-թանգարան
Քարելիի գավառագիտական թանգարան
Դիմիտրի Ղիփիանիի տուն-թանգարան
Իվանե Ջավախիշվիլիի տուն-թանգարան
Դիդի Լիախվիի կիրճի թանգարան-արգելոց
Լեսյա Ուկրաինկայի տուն-թանգարան
Գիորգի Մազնիաշվիլիի թանգարան
Օմար Կելապտրիշվիլիի տուն-թանգարան

**Էլեկտրոնային ռեսուրսներ**

www.mes.gov.ge (Վրաստանի կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն)
www.tpdc.ge (Ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն)
www.naec.ge (Քննությունների ազգային կենտրոն)
www.meca.ge (Աբխազիայի Ինքնավար Հանրապետության կրթության և գիտության նախարարություն)
www.moecs.gov.ge (Աջարիայի Ինքնավար Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն)
www.moe.gov.ge (Վրաստանի բնապահպանության նախարարություն)
www.heritagesites.ge (Վրաստանի մշակութային ժառանգության պահպանության ազգային գործակալություն)
www.nplg.gov.ge (Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարան՝ «Հանրային»)
www.folk.ge (Վրաստանի բանահյուսության պետական կենտրոն)
www.imsa.ge (Պատմության ուսուցիչների Վրաստանի ընկերակցություն)
www.mastsavlebeli.ge (Ուսուցիչ, համացանցային թերթ)
www.manuscript.ge (Ձեռագրերի ազգային կենտրոն)
www.qim.ge (Վրաց պատմական գործիչներ)
www.istoria.ge
www.mtavari.ge (Վրացական մարտական արվեստը)
www.saunje.ge
www.orthodoxy.ge
www.alazani.ge
www.kvirike.ge
www.children.dsl.ge
www.georgianmuzeums.ge
www. sanostudio.ge
www.lib.ge
www.amsi.ge
www.davidrumsey.com (Աշխարհի պատմության քարտեզներ)
www.codna.ge
www.icode.ge
www.buki.ge
www.school.ge
www.el.ge
http://www.diaspora.gov.ge/
http://www.church.ge/
http://www.geohistoryclub.blogspot.com/ (Պատմաբանների ակումբ)

# ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՀՊԱՆՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐ

| Պետական արգելոց | Ազգային պարկեր | Բնության հուշարձան | Արգելավայրեր | Պահպանված լանդշաֆտ | Պլանային |
|---|---|---|---|---|---|
| Սաթափլիայի | Ղազբեգիի | Արծվի կիրճի | Թորիի | Թուշեթիի | Կենտրոնական Կովկասյան լեռնաշղթայի |
| Կինտրիշիի | Թբիլիսիի | Տախտիտեփայի | Ճուճունայի | Կինտրիշիի | Մաճախելայի |
| Լիախվիի | Վաշլովանիի | Ալազանիի մարգագետնի | Ղորուլիի | | Խևսուրեթիի |
| Թուշեթիի | Բորժոմ-Խարագաուլիի | Իմերեթիի քարանձավների | Գարդաբանիի | | Թրիալեթիի |
| Լագոդեխիի | Մտիրալայի | | Լագոդեխիի | | Ղազբեգիի |
| Վաշլովանիի | Կոլխեթիի | | Իլտոյի | | Սամեգրելոյի |
| Բածարայի | Ջավախեթիի | | Նեձվիի | | Մարիամջվարիի |
| Բաբանեուրիի | | | Կացոբուրիի | | |
| Մարիամջվարիի | | | Քոբուլեթիի | | |
| Բորժոմիի | | | Թեթրոբիի | | |
| Քոբուլեթիի | | | Քցիա-Տաբածղուրիի | | |
| Ռիծայի | | | Կարծախի | | |
| Փսխուս-Գումիսթայի | | | Սուլդայի | | |
| Բիճվինթա-Մյուսերայի | | | Մադատափիի | | |
| | | | Խանչալիի | | |
| | | | Բուղդաշենի | | |
| | | | Սաթափլիայի | | |

# Վրաստանի պատմա-ազգագրական երկրամասեր



# ԲԱԺԻՆ 1. ԿԱԽԵԹԻ



# ԲԱԺԻՆ 2. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ



# ԲԱԺԻՆ 3. ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻ



# ԲԱԺԻՆ 4. ԳՈՒՐԻԱ



# ԲԱԺԻՆ 5. ՌԱՃԱ-ԼԵՉԽՈՒՄԻ



# ԲԱԺԻՆ 6. ԱԲԽԱԶԻԱ



# ԲԱԺԻՆ 7. ԹԲԻԼԻՍԻ

